

**Գլխավոր խմբագիր՝  
ԳՈՂԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Լրատվական գործունեությունը իրականացնող՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

Հասցեն՝  
0025, Երևան,  
Նալբանդյան փողոց 128,  
կենտրոնական մասնաշենք,  
2-րդ հարկ:  
Հեռախոս՝ 593-460, 4-60

Վկայական N 03U054452:  
Տրված է՝ 05.06.2002 թ.:

Հրատարակիչ՝ ՀՊՏՀ  
«Տնտեսագետ» ամսագիրը լույս է ընծայվում ՀՊՏՀ լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից:

Սեպտեմբեր-հոկտեմբեր 2019 / N4 (705)  
Տպաքանակը՝ 300  
Տարածվում է անվճար:

**Խմբագրակազմ**

Խմբագիր՝  
ԱՐՄԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ  
Լրագրող՝  
ՆԱՆԵ ԱՎԱՆԵՍՅԱՆ  
Լուսանկարիչ՝  
ՌԱԶՄԻԿ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Համակարգչային ձևավորումը՝  
ՆԱԻՐԱ ԽՉԵՅԱՆԻ

Համարի պատասխանատու՝  
ԱՐՄԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Խմբագրությանը տրամադրված հեղինակների նյութերում տեղ գտած փաստական անճշտությունների համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Ամսագրի նյութերն օգտագործելիս հղումը պարտադիր է:

Պատվեր՝ 478:  
Ծավալը՝ 6 տպ. մամուլ:  
Ստորագրված է տպագրության՝  
11. 11. 2019 թ.:

Տպագրված է «Տնտեսագետ» հրատարակչությունում:

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ՀՊՏՀ ՌԵԿՏՈՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ  
ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆԻ ՈՒՂԵՐԶԸ.....4**

**ԳԻՏԵԼԻՔԻ ՕՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՄՈՒՏ.....5**

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎՈՒՄ  
Քննարկվեցին տարածաշրջանային հիմնախնդիրներ.....6**

**Աշխատանքի տոնավաճառ՝ ՀՊՏՀ-ում. գործ իսկապես կա.....7**

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆԱՑՈՒՄ  
ՀՊՏՀ–ՈՒՄԵՖ. առաջին թողարկում, առաջին արդյունք.....8**

**Համալսարանն իր ուսանողների և շրջանավարտների  
առաջին գործատունն է .....10**

**Ուսանողական գիտական ընկերության գործունեության  
նոր փուլում.....11**

**ՆԱԴԵԺՂԱ ԱՖՅԱՆ  
Ընդերքօգտագործման հիմնական հասկացությունները և  
շրջակա միջավայրի վրա ազդեցությունը.....12**

**ՄԵՐ ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԸ  
Նրանք արժևորում են երեկն ու այսօրը, հավատում  
լուսավոր վաղվան.....14**

**ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՃԱՆԿԱՐ.....16**

**ԼԵՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ  
ԱՐՓԻՆԵ ՄԻԻԹԱՐՅԱՆ  
ՀՊՏՀ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ.....20**

**Հարցազրույց Գոհար Գրիգորյանի հետ  
TED հանրությունը հավատում է գաղափարի ուժին.....22**

**ՌԱՖԱՅԵԼ ԵՐՎԱՆԴՅԱՆ – 80  
Մշտական ներկայությամբ.....25**

**ԿՈՄԻՏԱՍ – 150.....26**

**ԼԵՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ  
ՀՊՏՀ ԳՄ առաջին միջազգային գիտաժողովը.....27**

**ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲՐԵՆԴ  
ՊԱՐԿԵՐ. գրավոր խոսքի տարածողն ու  
խաղաղության գրիչը.....28**

**ԼՐԱՅՈՍ.....30**

**ԿԱԴՐԻՑ ԴՈՒՐՍ.....37**

**ՆՈՔԵԼՅԱՆ ՄՐՑԱՆԱԿԱՔԱՇԽՈՒԹՅՈՒՆ – 2019.....38**

**Էլեկտրոնային կառավարման միասնական հարթակում.....40**

**«ԵՐԱԶՍՈՒՄ+».....42**

**ՀԱՅԿ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ  
Փոփոխություն, որը սոսկ տարի չէր իմ կյանքում.....43**

**ՎԱՐՔՈՒՔԱՐՔ.....45**

**ՄԱՐԶԱՎԱՆ.....46**



**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Չարությունյանի հրամանով օգոստոսի 22-ին «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ղեկավարի պաշտոնակատար է նշանակվել ՀՊՏՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Դիանա Ռոբերտի Գալոյանը՝ մինչև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ղեկավարի ընտրությունն ու նշանակումը:**

Տեղեկատվությունը ՀՀ ԿԳՄՍ նախարարության պաշտոնական կայքից

Նույն օրը բուհի նորանշանակ ղեկավարը հանդես եկավ հայտարարությամբ, որում ասված է.

*Սիրելի՛ ուսանողներ, հարգելի՛ գործընկերներ,*

ՀՊՏՀ-ում սկիզբ առած բարեփոխումներն այլընտրանք չունեն: Դրանք սրընթաց վերափոխվող աշխարհում մեր տեղը պահպանելու և երկրի հասարակական-տնտեսական զարգացումներում մեր առանցքային դերակատարումը ստանձնելու հրամայականն են: Համալսարանի կրթական գործընթացում որակյալ մասնագետների ներգրավման, միջազգայնացման, կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի ընդլայնման, ուսանողակենտրոն կրթության արմատավորման և սկիզբ առած բարեփոխումների շարունակականության երաշխավորները մենք բոլորս ենք:

Կրթական բարեփոխումների նպատակը մեկն է. նոր դարաշրջանում դառնալ նոր որակի համալսարան և անշեղորեն իրականացնել նոր աշխարհի պահանջներին համապատասխան հմտություններով օժտված մասնագետների պատրաստման և քաղաքացու կերտման մեր ստանձնած առաքելությունը: Վստահ եմ, որ այդ գործընթացում հավատարիմ կմնանք մարդկային, բարոյական և իրավական գրված ու չգրված կանոններին և անշուշտ կհաջողենք:

Ստանձնելով ՀՊՏՀ ղեկավարի պաշտոնակատարի պարտականությունները՝ քաջ գիտակցում եմ այն պատասխանատվությունը, որը կրելու եմ պետության, ուսանողների, շրջանավարտների, գործընկերների, գործատուների և ՀՊՏՀ ապագայով մտահոգված բոլոր կողմերի առջև:

Հավատում եմ, որ բոլոր բարեփոխումները կիրականացնենք միասնության, համերաշխության մթնոլորտում և ջանքերի մեկտեղմամբ:

*Հարգանքով՝*

**Դիանա Գալոյան**  
ՀՊՏՀ ղեկավարի պաշտոնակատար,  
տ.գ.դ., պրոֆեսոր

**Ս**եպտեմբերի 1-ին՝ Գիտելիքի, գրի և դպրության օրը (որն այս տարի ոչ աշխատանքային էր), ՀՊՏՀ ղեկավարի պաշտոնակատար Դիանա Գալոյանը և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Արմեն Գրիգորյանը այցելեցին ՀՊՏՀ ֆինանսատնտեսագիտական քոլեջ, որտեղ դասախոսական կազմը, տնօրինությունը, ծնողներն ու հյուրերը համախմբվել էին՝ նշելու տոնն ու հատկապես առաջին կուրսեցիների նորամուտը:

Դիանա Գալոյանը, շնորհավորելով և դիմելով քոլեջի ուսանողությանը, նշեց. **«Կրթությունը մի արժեք է, որի կրողն էք դառնում դուք, և այդ արժեքը որևէ հրադարձությամբ և որևէ պարագայում ստվերվել չի կարող»**, ապա վստահեցրեց, որ ՀՊՏՀ ղեկավարությունը պատրաստական է այնպիսի պայմաններ ապահովել, որ ուսանողներն արդյունավետ կերպով զինվեն գիտելիքով և մասնագիտական հմտություններով:

Նորանշանակ տնօրեն Գոհար Բուլանիկյանն էլ իր ողջույնի խոսքում վստահեցրեց, որ տնօրինությունը և դասախոսական ողջ կոլեկտիվը ջանք ու եռանդ չեն խնայի՝ ուսումնական գործընթացը բարձր մակարդակով կազմակերպելու և քոլեջը որակական նոր աստիճանի բարձրացնելու գործում: Իրենց ողջույնի ջերմ խոսքն ասացին նաև քոլեջի շնորհաշատ ուսանողները: Միջոցառման ավարտին կուրսղեկները առաջինցիներին հրավիրեցին լսարաններ:

Համալսարանը նորամուտն սկսեց սեպտեմբերի 2-ին, և ինչպես ամեն ուսումնական տարեսկզբին, ավանդույթի համաձայն՝ առաջին կուրսեցիները առանձնահատուկ ուշադրության արժանացան: Բակում ՀՊՏՀ-ականներին դիմավորեցին ղեկավարի պաշտոնակատար Դիանա Գալոյանը, պրոռեկտորներ Արմեն Գրիգորյանը, Թաթուլ Մկրտչյանը, դասախոսներ, աշխատակիցներ, ուսխորհրդականներ: Առաջին կուրսեցիներն արժանացան նորամուտի ջերմ բարեմաղթանքների և Ուսականների ուղեկցությամբ լսարաններ մտան: Նրանք ստացան նաև «Ուսանողի ուղեցույց» գրքույկները՝ ուսումնական գործընթացի, ուսանողի իրավունքների ու պարտականությունների, կրեդիտային համակարգի մասին համապարփակ տեղեկություններով:

Ձանգը հնչեց, կիսամյակն սկսվեց: Դիանա Գալոյանը ղեկանների հետ շրջեց ֆակուլտետների լսարաններով, շնորհավորեց դասերի մեկնարկի առիթով:

Օրեր անց՝ սեպտեմբերի 13-ին, ուսանողական խորհուրդը, բուհի ղեկավարության աջակ-

## Միջոցառումներ, որոնք նշանավորեցին առաջին կուրսեցիների մուտքը



ցությանը, համալսարանի առաջին կուրսեցիների համար կազմակերպեց Welcome party խորագրով երաժշտական երեկո՝ կրկին բարի գալուստ ասելու, նրանց հաճելի հիշողություններ պարգևելու համար: Երգում էին «Յաղթանակած» նախաձեռնության մասնակից բուհերի երգիչ-երգչուհի ուսանողները: Կրկին համալսարանականների կողքին էր բուհի ղեկավարությունը:

Մեզ հետ զրույցում Դիանա Գալոյանը բուհի ղեկավարության անունից սրտագին շնորհավորանքներ հղեց առաջին կուրսեցիներին և նշեց, որ այս ջերմ միջոցառումը նպատակ ունի ոգևորելու նրանց:

Արձանագրեցինք նաև օրվա հերոսների առաջին տպավորությունները բուհից: Այսպես. կառավարման ֆակուլտետի 1-ին կուրսեցի Մերի Յովհաննիսյանը մեզ հետ զրույցում հաճախ էր «ուսանողի» փոխարեն «աշակերտ» ասում, «ուսխորհրդին»՝ «աշխորհուրդ», այնուհետև ժպտում էր և ուղղում: **«Ճիշտ է, դեռ երկու շաբաթ է՝ ինչ պաշտոնապես ուսանող եմ, բայց ինձ լիարժեք ՀՊՏՀ-ական եմ զգում: Համոզվում եմ, որ բուհի ընտրության հարցում չեմ սխալվել, ամեն ինչում մեզ աջակցում են դասախոսներն ու ավագ կուրսերի ուսանողները»**, – ասաց Մերին:

Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետից Քրիստինա Հակոբյանն էլ նշեց ջանա-

լու է արագ հմտանալ մասնագիտության մեջ և համարել իր ընտանիքի հաշվապահների շարքը:


**«Հենց առաջին օրվանից մեզ ջերմ են ընդունել ՀՊՏՀ-ում, իհարկե, մեր հիմնական առաքելությունը սովորելն է, սակայն հաճելի է, որ այստեղ առօրյան հագեցած է նաև ժամանցային միջոցառումներով, սկսել ենք վայելել ուսանողական կյանքը»**, – ասաց Քրիստինան:

Ուես նախագահ Գոռ Մելիք-Սահակյանը ընդգծեց, որ առաջին կուրսեցիները մշտապես ուսխորհրդի ուշադրության կենտրոնում են, և նոր ուսումնական տարեկազմին ևս հանդիպումները պարբերական են:

Երեկոյի ընթացքում տեղի ունեցավ խաղարկություն. հաղթողներն ստացան մրցանակներ:

**Միրելի՛ առաջին կուրսեցի, սա քո մասնագիտական լայնահուն ծանապարհի սկիզբն է, և մաղթում ենք, որ ուղիղ հարթ ու կանաչ լինի:**

ՆԱՆԵ ԱՎԱՆԵՅԱՆ





## ՔԱՆԱՐԿՎԵՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԶԱՆԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆՈՒԻՐՆԵՐ

Սեպտեմբերի 5-ին մեկնարկեց ՀՊՏՀ-ի և Տարածաշրջանային գիտության կովկասյան ասոցիացիայի համատեղ նախաձեռնությամբ կազմակերպված «Ինստիտուցիոնալ կառույցներ, կառավարում և տարածաշրջանային զարգացում» խորագրով միջազգային գիտաժողովը: Մասնակցում էին ՀՊՏՀ դասախոսներ, երիտասարդ հետազոտողներ, ուսանողներ, ինչպես նաև օտարերկրացի գիտնականներ:

Միջոցառման հանդիսավոր մեկնարկն ազդարարեցին ասոցիացիայի գործադիր տնօրեն Անահիտ Հարությունյանը, ՀՊՏՀ խորհրդի նախագահ Վահան Մովսիսյանը, ՀՊՏՀ ռեկտորի պաշտոնակատար, պրոֆեսոր Դիանա Գալոյանը: Անահիտ Հարությունյանը ընդգծեց միջոցառման հիմնական նպատակը՝ հարթակ տրամադրել այն գիտնականներին և երիտասարդ հետազոտողներին, որոնք հետաքրքրված են տարածքային տնտեսությամբ և պլանավորմամբ, տարածաշրջանային և համայնքային զարգացմամբ և դրանց առնչվող հարցերով:

Դիանա Գալոյանը, ողջունելով հյուրերին, նշեց, որ բարեփոխումների ուղին ընտրած ՏՆտեսագիտական համալսարանը զգալի ձեռքբերումներ է արձանագրել գիտության ոլորտում, մասնավորապես՝ «Ամբերդ» հետազոտական կենտրոնը տեղ է գտել աշխարհի համալսարանական ուղեղային կենտրոնների 100-յակում, ապա կարևորեց որակյալ կրթության դերը երկրների հավասարաչափ տարածքային զարգացման գործում և հույս հայտնեց, որ համաժողովի ընթացքում այս թեման կարծանա լայն քննարկման:

Վահան Մովսիսյանն իր հերթին ողջունեց գիտական նախաձեռնությունն ու ընդգծեց, որ համալսարանի համար մեծ իրադարձություն է օտարերկրացի փորձագետներին հյուրընկալելն ու նրանց միջոցով Եվրոպայի առաջավոր փորձին ծանոթանալը: Նա հորդորեց ուշիուշով ունկնդրել զեկուցումները, ակտիվորեն մասնակցել քննարկումներին և համատեղ ջանքերով համայնքային զարգացման ուղիներ որոնել:

Առաջին խոսնակները հրավիրված փորձագետներն էին, որոնք Եվրոպական առաջավոր փորձի հիման վրա անդրադարձան համայնքային զարգացման առանձնահատկություններին ու համայնքների առաջխաղացման ուղիներին: Թեմաներն ընդգրկում էին և շոշափում էին գիտաժողովի խնդրո առարկայի թե՛ տեսական, թե՛ գործնական-կիրառական ասպեկտը, գիտնականներին հնարավորություն տալիս մտքերի, փորձի, գիտելիքի փոխանակման:

Վրիայի համալսարանից (Նիդեռլանդներ) Պետեր Նայկամպը և Ազորիայի կղզիների համալսարանից Տոմազ Դենտինհոն զեկուցումներ կարդացին տարածքային զարգացման տեսամեթոդական հիմունքների, տարածքային կայուն զարգացման մեթոդաբանական գործիքների վերաբերյալ՝ փորձագիտա-

կան լույսի ներքո արծարծելով տարածաշրջանային կառավարման դրույթները:

ՀՊՏՀ գիտնականների զեկուցումները հիմնականում վերաբերում էին Հայաստանի մարզերի զարգացման խոչընդոտներին, ներկա վիճակին, տեսլականին. Ելույթ ունեցան Ռուբեն Հայրապետյանը՝ «Տեղական կառավարման արդյունավետություն. մեծ կամ փոքր համայնքներ», Նարեկ Կեսոյանը՝ «Հայաստանի մարզերի զարգացման մոդելները» թեմաներով: Հաջորդիվ «Տարածքային զարգացման նոր հեռանկարները» պանելային քննարկումն էր Տոմազ Դենտինհոյի, Պետեր Նայկամպի, Կարինա Կոուրիթի (Հերոնիմուսի տվյալագիտության ակադեմիա, Նիդեռլանդներ), ՀՊՏՀ-ից՝ Ջոյա Թադևոսյանի, Նարեկ Կեսոյանի, Վահե Բուլանիկյանի, Ալբերտ Հայրապետյանի մասնակցությամբ: Առանցքում այն զաղափարն էր, որ տնտեսական նոր իրավիճակում առաջընթացի նոր ճանապարհներ են ի հայտ գալիս, և հենց դրանց նախանշումն էլ ոլորտի պատասխանատուների, տնտեսագետների ուշադրության կենտրոնում է:

Գիտաժողովի առաջին օրն ամփոփվեց Վահե Բուլանիկյանի, Ալբերտ Հայրապետյանի, Մարիա Սահակյանի (Հայ-Ռուսական համալսարան), Հռիփայ Սարմանի («Հարավային Կովկաս-Հարավային Ասիա բիզնես զարգացման կենտրոն») զեկուցումներով:

Գիտաժողովի երկրորդ օրը կրկին նոր խոսք հնչեց, նոր եզրահանգումներ ու առաջարկություններ: Քննարկվում էին արդիական թեմաներ՝ տարածքային կապիտալից ու «խելացի քաղաքներից» մինչև «մեծ տվյալներ»: Ելույթ ունեցան Ռոբերտ Թեմանին (Միլանի պոլիտեխնիկական համալսարան, Իտալիա)՝ «Տարածքային կապիտալ, ինստիտուտներ և տարածքային զարգացում», Կարինա Կոուրիթը՝ «Խելացի քաղաքներ և մեծ տվյալներ. մարտահրավերներ և հնարավորություններ», Թիմոտի Բարրետը (Վրաստանի համալսարան)՝ «Խելացի գաղտնիություն խելացի քաղաքում» թեմաներով: Տոմազ Դենտինհոն մասնակիցների հետ քննարկեց նոր քաղաքային աշխարհում խելացի քաղաքների դերակատարման հարցերը:

Գիտաժողովի ամփոփումը կատարեցին Մարիա Եղյանը («ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ)՝ «Հետազոտական ենթակառուցվածքների սոցիալ-տնտեսական ազդեցությունը՝ տարածքային զարգացման և նորարարությունների համատեքստում», համահեղինակներ Արփեմիկ Մուրադյանը, Վանինե Երանոսյանը, Էրիկ Գրիգորյանը, Ծովիմար Կարապետյանը՝ «ՀՀ համայնքների խոչորացման գործընթացների գնահատականը և ակնկալիքները» թեմաներով:

*Գիտաժողովը ՀՊՏՀ-ում համակարգում էր արտաքին կապերի դեպարտամենտի միջազգային կապերի բաժինը:*

**ՆԱՆԵ ԱՎԱՆԵՍՅԱՆ**



## Աշխատանքի տոնավաճառ՝ ՀՊՏՀ-ում. գործ իսկապես կա

50-ից ավելի գործատուներ, 3500 աշխատանք փնտրողներ հոկտեմբերի 25-ին հանդիպեցին համալսարանի բակում ՀՊՏՀ-ի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Ջբաղվածության պետական գործակալության համատեղ կազմակերպած Աշխատանքի տոնավաճառում: Նախածեռնությանը աջակցել էր ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը:

Աշխատանքի տոնավաճառը լայն արձագանք էր գտել հասարակության շրջանում, և ՀՊՏՀ էին այցելել բազմաթիվ աշխատանք փնտրողներ: Որպես գործատուներ մասնակցում էին ՀՀ առաջատար առևտրային բանկերի (11), վարկային (6), ապահովագրական (5) ընկերությունների, հեռահաղորդակցության (3) ոլորտի, հյուրանոցային բիզնեսի և այլ ոլորտների ավելի քան 24 առաջատար ընկերությունների ներկայացուցիչներ, որոնք գեղեցիկ ձևավորված տաղավարներում ներկայացնում էին իրենց թափուր աշխատատեղերը, այցելուներից վերցնում CV-ներ, վարում հարցազրույցներ: Ներկայացված էին նաև «Էրազմուսի» ազգային, Երևանում DAAD տեղեկատվական գրասենյակները, ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանատունը, ինչի շնորհիվ տոնավաճառի մասնակիցները ծանոթացան արտերկրում ուսանելու հնարավորություններին:

Իհարկե, որպես գործատու ներկայացված էր նաև ՀՊՏՀ-ն. մարդկային ռեսուրսների կառավարման, միջազգային կապերի, շարունակական կրթության և վերապատրաստումների բաժինների աշխատակիցները ներկայացնում էին ինչպես համալսարանում առկա թափուր աշխատատեղերի մասին տեղեկություն, այնպես էլ «Էրազմուս+»-ին և կրթաթոշակային տարբեր ծրագրերին դիմելու, համալսարանում կազմակերպվող կարճաժամկետ դասընթացների վերաբերյալ տեղեկություն:

Աշխատանքի տոնավաճառի մասնակիցներին ողջունեց ՀՊՏՀ ռեկտորի պաշտոնակատար Դիանա Գալոյանը՝ նախ շնորհակալություն հայտնելով գործընկերներին, ապա ընդգծելով, որ միջոցառումն անմախադես է մասնակից կազմակերպությունների այցելուների թվով: Բուհի ղեկավարը նշեց, որ կրթություն-աշխատաշուկա կապի սերտացմանն ուղղված միջոցառումները ՀՊՏՀ-ում շատ են կարևորվում և այս ուղղությամբ առաջիկայում կիրականացվեն նոր ծրագրեր, որոնց նպատակն է վեր հանել գործատուների պահանջը և ՀՊՏՀ-ում կրթության որակի բարձրացման միջոցառումները համապատասխանեցնել գործատու-

ների կարիքներին: Նա նաև շնորհակալություն հայտնեց միջոցառման մասնակից կազմակերպություններին՝ նրանց հրավիրելով նոյեմբերի վերջին կայանալիք աշխատաժողովին, որը նվիրված է լինելու ուսանողների փորձառությունների արդյունավետ կազմակերպման և կարիերայի կառուցման ուղիների որոնման հարցերի քննարկմանը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Ջբաղվածության պետական գործակալության պետի պաշտոնակատար Արտակ Սիմոնյանը ողջունեց մասնակիցներին, շնորհակալություն հայտնեց բուհի ղեկավարությանը՝ արդյունավետ համագործակցության համար և ընդգծեց՝ այս տոնավաճառը յուրահատուկ է նրանով, որ գործատուները աշխատանք փնտրողներին ներկայացնում են հիմնականում



ՀՊՏՀ մասնագիտություններին համապատասխան թափուր աշխատատեղեր: Գործակալության ղեկավարը վստահեցրեց՝ աշխատանք միշտ կա, պարզապես պետք է ակտիվորեն փնտրել:

Ժամը 13.00-ից սկսած՝ ՀՊՏՀ մեծ դահլիճում Աշխատանքի տոնավաճառի մասնակիցները, ՀՊՏՀ ուսանողները և շրջանավարտները մասնակցեցին զրույց-ներկայացումների: Braind ընկերության համահիմնադիր Կարեն Բաբաջանյանը հանդես եկավ «Ամենապահանջված մասնագիտությունը» թեմայով, Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնի հիմնադիր-տնօրեն, Երիտասարդության ոլորտի հետազոտողների եվրոպական ցանցի անդամ Մարինա Գալստյանը՝ «Ո՞ւմ է փնտրում գործատուն. աշխատաշուկայի արդի պահանջները Հայաստանում», կարիերայի խորհրդատու, ֆրիլանսեր Լիանա Ամիրադյանը՝ «Ինչպե՞ս գրել մրցունակ կենսագրական, մոտիվացիոն նամակ, ինչպե՞ս ներկայանալ աշխատանքի հարցազրույցների» թեմաներով:

Կազմակերպական աշխատանքը կատարել էր ՀՊՏՀ արտաքին կապերի դեսպարտամենտը: Դեսպարտամենտի շարունակական կրթության և վերապատրաստումների բաժնի պետ Աղավնի Հակոբյանը մեզ հետ զրույցում նշեց, որ միջոցառման նպատակը հանրապետության աշխատաշուկայի առաջատար ընկերությունների, գործատուների և համալսարանի շրջանավարտների միջև արդյունավետ հարթակ դառնալն էր, որպեսզի աշխատանք փնտրողները գտնեն իրենց ցանկալի աշխատանքը: Աղավնի Հակոբյանի խոսքով արդյունքները դուրս կբերվեն և կամբողջացվեն՝ դառնալով այս ուղղությամբ բուհի գործունեության ուղեմիշ:

ԳՐԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ**

Օգոստոսի 28-ի գիտական խորհրդում ռեկտորի պաշտոնակատար Դիանա Գալոյանը ներկայացրեց նույն օրը կայանալիք երկու նիստերի օրակարգերը՝ զեկուցելով առաջին երկու՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի կանոնակարգում», ինչպես նաև «ՀՊՏՀ» ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի՝ 2019 թ. ապրիլի 30-ի նիստի N 11 արձանագրությամբ հաստատված «ՀՊՏՀ» ՊՈԱԿ-ի գիտամանկավարժական կազմի ընտրության և տեղակալման կանոնակարգում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին հարցերը: Գիտական խորհրդի կողմից բաց քվեարկությամբ ընդունվեցին առաջարկվող փոփոխությունները:

Առաջին նիստն ավարտվեց օրակարգային 3-րդ հարցի ներկայացմամբ: Տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Ատոմ Մարգարյանը հանդես եկավ ՀՀ ԿԳՄՍՆ գիտության պետական կոմիտեի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման մրցույթի շրջանակներում իրականացվող «Կիրառական նշանակության գիտահետազոտական մշակումների արտոնագրման և առևտրայնացման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայի 01.09.2018 - 31.08.2019 ժամանակահատվածն ընդգրկող ընթացիկ (միջակայակ) հաշվետվությամբ, որը ևս հաստատվեց:

Գիտական խորհրդի երկրորդ նիստի օրակարգում երկու հարց էր՝ փակ, գաղտնի քվեարկության դրվեցին 9 պրոֆեսորների, ինչպես նաև գիտամանկավարժական կազմի ընտրության հարցեր: Խորհուրդը պրոֆեսորի պաշտոնում ընտրեց 9 հավակնորդներից 7-ին և իր քվեարկությամբ առաջարկվող հավակնորդներից որևէ մեկին չընտրեց դոցենտի, ասիստենտի և դասախոսի պաշտոնում:

Արձանագրվեց նաև, որ ստեղծված իրավիճակում գիտամանկավարժական կազմի տեղակալման գործընթացները կանոնակարգվում են «ՀՊՏՀ ՊՈԱԿ-ի գիտամանկավարժական կազմի ընտրության և տեղակալման կանոնակարգի»՝ 29-րդ կետով, ըստ որի 2019-2020 ուսումնական տարում բեռնվածություն են ստանալու կանոնակարգի չափանիշներին համապատասխանող հավակնորդները:

Սեպտեմբերի 6-ի նիստին ռեկտորի պաշտոնակատար Դիանա Գալոյանը գիտխորհրդի անդամներին ներկայացրեց համալսարանի գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական, մրցութային, հրատարակչական, գիտամեթոդական հանձնաժողովների նոր կազմերը հաստատելու մասին հարցերը, որոնք միաձայն քվեարկությամբ ընդունվեցին: Հաստատվեց նաև գիտխորհրդի 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակի աշխատանքային պլանը:

Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Արմեն Գրիգորյանը զեկուցեց «Գիտական խորհրդի՝ 2019 թ. ապրիլի 12-ի նիստում հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ուսանողների վերականգնման, ներքին տեղափոխության, առարկայական (ծրագրային) տարբերությունների հանձնման և ուսման վճարի հաշվարկման ընթացակարգում» փոփոխություններ և լրացում կատարելու մասին» հարցը: Պրոռեկտորը մանրամասնեց առաջարկվող փոփոխությունները, որոնք ևս հաստատվեցին:

**ՀՊՏՀ-ՈՒՄԵՖ.**

**առաջին թողարկում, առաջին արդյունք**

*2017-2019 ուսումնական տարիները մեր համալսարանում կրթության միջազգայնացման և մագիստրոսական նոր ծրագրերի ներդրման առումով արգասաբեր եղան: Աննախադեպ այդ ձեռնարկումները հայաստանյան ուսանողների համար կրթության և առաջընթացի կառուցման նոր հորիզոններ բացեցին, հետաքրքրություն և սպասումներ ձևավորեցին: Երկու տարի շարունակ ժնևում, Վալենտինայում, Բոլոնիայում ու մեր բուհում ուսումնական գործընթացի, մագիստրանտների ձեռքբերումների, ուղևորությունների և ժամանցի պատմությունները մեր ուշադրության կենտրոնում էին: Այսօր մագիստրոսական ծրագրերն ունեն առաջին շրջանավատները:*

*Մեր ընթերցողին հիշեցնենք, որ ծրագրերի ընթացքում համալսարանները փոխձանաչում են միմյանց ուսումնական գործընթացներն ու արդյունքները՝ իրականացնելով կրեդիտների կուտակում, փոխանցում և շնորհում են կրկնակի դիպլոմներ:*

*Իսպանիայի Վալենտինայի պոլիտեխնիկական (UPV), ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային (ՃՀԱՀ) համալսարանները և մեր համալսարանը իրականացնում են նախագծերի կառավարում համատեղ մագիստրոսական կրթական ծրագիրը: Մասնագիտացման ոլորտներն են նախագծերի, զբոսաշրջության և պատմամշակութային ժառանգության, երկրատեղեկատվական համակարգերի կառավարումը:*

*Շվեյցարական ՈՒՄԵՖ համալսարանի և ՀՊՏՀ-ի համատեղ մագիստրոսական ծրագիրը թողարկում է կառավարման մագիստրոսներ (մասնագիտացումը՝ գործարար վարչարարություն), դասավանդում են Գերմանիայի, Իտալիայի, Չինաստանի, Շվեյցարիայի առաջավոր բուհերից հրավիրված, բարձր որակավորմամբ դասախոսներ:*

*Ինչպե՞ս է գնահատում գործընթացը և առաջին արդյունքը ՀՊՏՀ-ՈՒՄԵՖ մագիստրոսական ծրագրի ղեկավար, մեր համալսարանի գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ Խորեն Մխիթարյանը: Սիրով ընթերցողին ենք ներկայացնում մեր գրույցը:*

– Պարոն Մխիթարյան, ինչո՞վ է գրավիչ ՀՊՏՀ-ՈՒՄԵՖ մագիստրոսական ծրագիրը:

– Մեր գործընկեր համալսարանի՝ ՈՒՄԵՖ-ի առանձնահատկությունն այն է, որ մասնավոր համալսարան է, իր գործունեությունն է ծավալում երեք մայրցամաքում՝ Եվրոպայում, Աֆրիկայում, Ասիայում և հանդես է գալիս կրթական կարևոր առաքելությամբ, ինչի շնորհիվ բարձր հեղինակություն է վայելում: Այստեղ գործում է Բոլոնիայի կրթական համակարգ, համալսարանն ունի 4 միջազգային հավատարմագրում և մի շարք հավատարմագրման մարմինների անդամ է: Համալսարանի կամպուսը ժնևում գտնվում է զեղատեսիլ վայրում՝ 15-րդ դարի պատմական դղյակում: Այս համագործակցությունը հայաստանյան կրթական դաշտում նախևառաջ նոր գիտելիքի, մասնագիտացման նոր մեթոդների ներդրման հնարավորություն է, փորձի փոխանակում և շփումներ: Գործարար վարչարարություն ծրագրով բոլոր գիտակարգերը դասավան-



դում են օտարերկրացի դասախոսներ: Բացառությամբ է «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն» առարկան, որը դասավանդում է պրոֆեսոր Դիանա Գալոյանը, և որը նպատակ է հետապնդում համադրված մատուցել երկրների՝ գիտական հետազոտությունների մեթոդաբանական փորձը:

**– Եվ ի՞նչ պատկեր է ձևավորվում առաջին արդյունքների տեսքով:**

– Առաջին սերնդի շրջանավարտների թողարկումը մեր նախաձեռնած դժվարին աշխատանքի ծանրակշիռ արդյունքն է: Հունիսի 14-ին գործարար վարչարարություն մասնագիտությամբ 21 շրջանավարտ պաշտպանեց մագիստրոսական թեզ: Նրանցից 6-ն արժանացավ Կարմիր դիպլոմի: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահին էր Սփյուռքի նախարարության համահայկական ծրագրերի վարչության պետ Հասմիկ Սանուկյանը, անդամները՝ ՈւՄԵՖ-ի տնտեսակազմակերպական աշխատանքների գծով պրոռեկտոր Վալտեր Մարիովիչը, այդ շրջանում ՀՊՏՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Դիանա Գալոյանը: Նշենք, որ մագիստրանտների հետազոտական աշխատանքները ղեկավարել էին մեր համալսարանի դասախոսները, որովհետև դրանցում գերազանցապես քննարկվում էին հայաստանյան տնտեսական իրողություններ, և հանձնաժողովի անդամները բարձր գնահատեցին շրջանավարտների գիտելիքն ու կատարած աշխատանքը: Մի մասը հունիսի 29-30-ը դիպլոմներն ստացան Ժնևում, իսկ մյուսները՝ օգոստոսի 28-ին ՀՊՏՀ-ում: Տոնական հանդիսությանը նրանց շնորհավորելու էր եկել համալսարանի հոգաբարձուների խորհրդի նախագահ, պրոֆեսոր Ջավեդ Սանգրեյը:

**– Ծրագրով ինչպե՞ս է իրականացվում մագիստրանտների փորձառության կազմակերպումը և աշխատանքի շուկայում ի՞նչ է խոստանում շվեյցարական կրթության մասին հավաստող դիպլոմը:**

– Մեր մագիստրանտներից 6-ը գիտահետազոտական փորձառություն են անցել ՄԱԿ-ի Ժնևյան գրասենյակում և շվեյցարական երկու բանկում: Բացի դրանից, Ժնևյան կամպուսում նրանց համար կազմակերպվել են գիտամանկավարժական փորձառություն, սեմինար և գործնական պարապմունքներ:

Ինչ վերաբերում է աշխատանքի տեղավորման խնդրին և երկրորդ դիպլոմի առկայությանը՝ որպես առավելություն, ապա նշենք, որ ուսումնառության ընթացքում արդեն գրեթե բոլորն աշխատում էին և այժմ էլ գործնականում իրենց որոնումները շարունակում են: Իսկ եվրոպական կրթական համակարգին ինտեգրվելը նաև ծանոթությունների, նոր միջավայրի և հնարավորությունների դաշտ է ստեղծում և մարդուն դարձնում ինքնահաստատ ու հավակնոտ բառիս ամենադրական իմաստով: Այնպես որ, կասկած չկա՝ վերընթաց ճանապարհի կունենան, քանի որ ձեռք են բերել գիտելիք ու փորձ, իսկ դիպլոմը դրա մասին հավաստող փաստաթուղթ է միայն:

**– Ի՞նչ նոր ու կարևոր շեշտադրումներ կան առաջիկա պլաններում:**

– Այս տարի ՈՒՄԵՖ-ի մերկայացուցիչներ՝ պրոֆեսոր Ջավեդ Սանգրեյը, Ես և գիտության բաժնի նախկին աշխատակից Գայանե Մուրադյանը հանդիպում ունեցանք ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արևիկ Անափիոսյանի հետ: Խոսեցինք առկա ձեռքբերումների, համագործակցության հեռանկարների մասին: Այս քննարկման արդյունքում, ինչպես նաև մեր վերլուծություններում հանգում ենք այն մտքին, որ անհրաժեշտ է համատեղ գիտական հետազոտություններ կատարել: Հայցորդներին և ասպիրանտներին նման համագործակցության հստակ առաջարկություն ՈՒՄԵՖ-ի մեր գործընկերներից եղել է և այժմ էլ ուժի մեջ է: Առաջիկայում ցանկանում ենք ներդնել ատենախոսությունների կրկնակի ղեկավարման սկզբունքը՝ սրանից բխող բոլոր հնարավորություններով:

Տեղեկացնենք, որ ծրագիրն ունի նոր համալրում, և մենք հաստատական ենք՝ անել հնարավոր՝ մեր սովորողների համար մագիստրոսական կրթությունն առավել արդյունավետ ու հարմարավետ դարձնելու նպատակով:

**– Շնորհակալություն և հաջողությամբ լի ճանապարհ Ձեր ստանձնած պատասխանատու ու շնորհակալ գործին:**

**Ջրուցեց ԱՐՄԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ**

*Նախագծերի կառավարում համատեղ մագիստրոսական ծրագրին մեր անդրադարձը՝ ամսագրի հաջորդ համարում:*



## Համալսարանն իր ուսանողների և շրջանավարտների առաջին գործատուն է

Նոր ուսումնական տարում համալսարանն աշխատանքի է ընդունել 11 ուսանողի և շրջանավարտի՝ հավատարիմ մնալով ուսանողների առաջին գործատուն լինելու գործելաոճին: Նրանք սկսել են աշխատել հարազատ բուհի տարբեր ստորաբաժանումներում՝ իրացնելով իրենց գիտելիքն ու հմտությունը: Սա վկայում է այն մասին, որ բուհի ղեկավարության աչքից լավագույնները չեն վրիպում, և այսկերպ խրախուսվում է նրանց՝ բարձր առաջադիմությամբ սովորելը (գրեթե բոլորը Կարմիր դիպլոմակիր են), կամավորական աշխատանքում, գիտական, հետազոտական, միջազգային և այլ ծրագրերում ներգրավվածությունը:

Ջրույցի հրավիրելով մեր նոր աշխատակիցներից մի քանիսին՝ զգացինք, որ երիտասարդները ոգևորված են և բարձր են գնահատում բուհի ղեկավարության նախաձեռնությունն ու պատրաստակամությունը:

Արտաքին կապերի ղեկարտամենտի միջազգային կապերի բաժնի առաջատար մասնագետ Սոնա Աղաբաբյանն այժմ գործարար վարչարարություն մասնագիտացման մագիստրանտ է, գերազանցությամբ ավարտել է բակալավրիատը կառավարում մասնագիտությամբ: Նա «Էրագմուս+»-ի կրթաթոշակակիր է, մեկ կիսամյակ ուսումնառել է Խորվաթիայի Յուրայ Դոբրիլայի համալսարանում, կամավորական աշխատանք կատարել «Էրագմուս+»-ի ազգային գրասենյակում, Կարմիր խաչում, ՀՊՏՀ միջազգային կապերի բաժնում:

Նույն բաժնի առաջատար մասնագետ, մաթեմատիկական մեթոդները և մոդելները տնտեսագիտության մեջ մասնագիտության գերազանցիկ շրջանավարտ Դավիթ Մինասյանը ևս «Էրագմուս+»-ի կրթաթոշակի հաղթող է, մեկ կիսամյակ սովորել է Բիալիստոկի տեխնոլոգիական համալսարանում (Լեհաստան): Հասարակական հիմունքներով աջակցել է համալսարանի միջազգային կապերի բաժնի աշխատանքներին, իսկ այժմ արդեն, որպես բաժնի հիմնական աշխատող, համագործակցություն է հաստատում ռուսական և չինական բուհերի հետ: «Մեզ գնահատված ենք զգում: Հաճելի է, որ հենց հարազատ բուհն է աշխատանք առաջարկում, փաստորեն, շարունակում են մնալ այն միջավայրում, որտեղ մասնագիտացել ես», - ասաց Դավիթը:

Մակրոտնտեսական քաղաքականություն և կանխատեսում մասնագիտության բակալավրիատի, ապա մակրոտնտեսական վերլուծություն մասնագիտացման մագիստրատուրայի շրջանավարտ

Արփինե Ռոստոմյանը մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի առաջին կարգի մասնագետ է: 2019 թ. փետրվարից աշխատել է ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետի ղեկանատում, սեպտեմբերից արդեն նոր աշխատանք ունի: Մեզ հետ զրույցում Արփինեն հակիրճ բնութագրեց իր աշխատանքային միջավայրը՝ «աշխույժ, սովորեցնող ու դրական»:

Օլյա Կարապետյանը ուսումնական գործընթացի կազմակերպման բաժնի առաջատար մասնագետ է, մարքեթինգ մասնագիտության շրջանավարտ: Նա նշեց՝ աշխատանքին հեշտ է հարմարվել, քանի որ ուսանողական տարիներից որոշ չափով ծանոթ էր մեր համալսարանի ուսումնական գործընթացի կազմակերպման առանձնահատկություններին: «Երբ հարազատ ու սիրելի միջավայրում ես, աշխատանքը ավելի սիրով ես կատարում», - ասաց մեր նոր գործընկերը:

Աշխատանքի ընդունված ուսանողներից 4-ը արտաքին կապերի ղեկարտամենտում են, որի տնօրենը Լուսինե Դանիելյանը, պարզաբանեց. «Արտաքին կապերի ղեկարտամենտն այն կառույցն է, որտեղ երիտասարդ կադրերի համալրումը խիստ կարևոր է. արագ փոփոխվող և զարգացող ժամանակակից միջավայրում անհրաժեշտ է ունենալ արդիական մոտեցումներ և թարմ գաղափարներ: Դեկարտամենտն ունի բաժինների փորձառու ղեկավարներ, և փորձի հետ նոր կադրերի համադրումը, վստահ եմ, կբերի լավ արդյունքի»:

Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի բակալավրիատի շրջանավարտ, իսկ այժմ նույն ֆակուլտետի մագիստրանտ Տաթևիկ Ռոստոմյանի գիտելիքները, անգլերենի իմացությունը, մասնագիտական կարողությունները նկատելի է մակրոէկոնոմիկայի ամբոցի դասախոս, շարունակական կրթության և վերապատրաստումների բաժնի պետ Աղավնի Հակոբյանը և հրավիրել աշխատանքի: Տաթևիկը հպարտությամբ և երախտագիտությամբ ասաց, որ հրավերը ընդունել է և չի ափսոսում: «Բաժնում տիրում է ստեղծագործական մթնոլորտ, հնչում են առաջարկներ, իսկ անելիքներն էլ միայն տեխնիկական չեն», - նշեց նա՝ հավելելով, որ բակալավրիատում սովորելիս ղեկավարել է իրենց ամբիոնի ՈԳԸ աշխատանքները, հանդես եկել զեկուցմամբ: «Շատ եմ սիրում «ժողը», այս մթնոլորտը, նաև մեր բաժինը», - ընդգծեց նա:

Իսկ Աղավնի Հակոբյանը նշեց, որ իր ղեկավարած բաժնում երկու ուսանող-աշխատակից է, և ինքը հա-





**Ուսանողական գիտական ընկերության գործունեության նոր փուլում**

մոզված է. «Մեր համալսարանի շրջանավարտներով կադրային համալրման քաղաքականությունը շատ արդյունավետ է, քանի որ սա նաև ուսանողների բարձր առաջադիմությունը խրախուսելու, հարազատ բուհում իրականացվող տարբեր գործընթացների բարելավման և հետաքրքիր նախաձեռնությունների գեներացման լավ հնարավորություն է, ինչից շահում են թե՛ համալսարանը, թե՛ մեր շրջանավարտները: ՀՀՏՀ-ականները համալսարանի առջև պատասխանատվության գիտակցմամբ փորձում են իրենց ավանդը բերել բուհի զարգացմանը, ինչը շատ ողջունելի է: Երիտասարդները միշտ ավելի համարձակ են, ստեղծարար և կարծրատիպային մոտեցումներից զերծ»:

Անձնակազմի կառավարման բաժնի պետ Գոհար Սարգսյանը համոզված է՝ սա ուսանողներին շահադրդելու լավագույն ձևն է, որպեսզի նրանք բուհի կյանքին մասնակցեն ոչ միայն որպես ուսանող, այլև՝ որպես աշխատող: ՄԻԿ բաժնի ղեկավարի խոսքով՝ ուսանողներին աշխատանքի ընդունելու՝ բուհի ղեկավարության մոտեցումը ոգևորիչ է մյուսների համար, բաժինն ամեն օր ստանում է ուսանողների կենսագրականներ, զրուցում նրանց հետ, փորձում բացահայտել լավագույններին: «Ուզում են ընդգծել մի կարևոր հանգամանք՝ բոլոր ուսանողներին աշխատանքի ընդունելիս հաշվի են առնվում ղեկանների, ամբիոնների վարիչների, գործընկերների կարծիքները», – ասաց Գոհար Սարգսյանը:

Գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման բաժնի աշխատակից Սուսաննա Մխիթարյանը արտաքին առևտրային քաղաքականություն մասնագիտության մագիստրատուրան գերազանցությամբ ավարտելուց հետո դիմել է հայցորդության համար: Նրա հետաքրքրության կենտրոնում մի շարք գիտական թեմաներ են, որոնցով ուսանողական տարիներին հանդես է եկել ՈւԳԸ շրջանակներում, իսկ որպես հայցորդ հետազոտում է «Գլոբալ անհաշվեկշռվածությունը և զարգացող երկրների բարեկեցությունը (ՀՀ օրինակով)» թեման:

«Հարազատ համալսարանում աշխատելը կարծես կրկնակի պատասխանատվություն է պահանջում: Այժմ զբաղվում եմ իմ սիրելի գործով՝ ինձ հետաքրքրող ոլորտում», – ասաց Սուսաննան ու հավելեց, որ իր հիմնական գործառնություններից են «Բանբեր ՀՀՏՀ» հանդեսի հոդվածների հավաքագրումը և Գիտության կոմիտեի հետ համագործակցության ընդլայնումը:

Մարինե Հարությունյանը և Աննա Հարությունյանը, որ աշխատանքի են ընդունվել ՀՀՏՀ կառավարման ֆակուլտետի ղեկանատում, նույնպես գերազանցիկ շրջանավարտներ են:

«Ծանոթ լինելով նրանց գիտելիքներին ու անձնական որակներին՝ առաջարկել ենք աշխատանք, և արդեն մեկ ամսից ավելի է՝ նրանք մեծ պատասխանատվությամբ ու եռանդով կատարում են իրենց պարտականությունները: Բուհի նախաձեռնությունը՝ դառնալ իր իսկ ուսանողի գործատուն, շատ ողջունելի է: Մենք մեր լավագույն սաներին պետք է ներգրավենք համալսարանի գործունեության մեջ», – ասաց կառավարման ֆակուլտետի ղեկան Մանուկ Մովսիսյանը:

Մենք վերստին հավաստիացանք՝ երիտասարդ, կարող ու ստեղծարար կադրերի ներկայությունը բուհի տարբեր ստորաբաժանումներում աշխուժություն ու թարմություն է բերում՝ առավել արդյունավետ դարձնելով բուհի կենսագործունեությունը:

**ԳՈՒՂՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Գիտելիքի, գրի և դպրության օրվա առթիվ շնորհավորելով համալսարանի ուսանողությանը՝ բուհի ղեկավարությունը տեղեկացրեց ամբողջությամբ վերակառուցվող, նոր ձևաչափ ու բովանդակություն ձեռք բերող Ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) գործունեության մեկնարկի մասին, որը գիտությամբ, հետազոտական աշխատանքով հետաքրքրված ուսանողներին հնարավորություն կընձեռի առաջին քայլերը կատարելու և ապա հաստատուն կերպով առաջ գնալու գիտության աշխարհում՝ կյանքի կոչելով իրենց գաղափարները:

Հոկտեմբերի 9-ին համալսարանի ՈՒԳԸ պատասխանատուները հանդիպեցին ուսանողներին և քննարկեցին ընկերության աշխատանքների լավարկման ուղիները: Ներկա էին ՈՒԳԸ համակարգող, ուսանողների հետ տարվող աշխատանքների գծով ռեկտորի խորհրդական Լիլիթ Դադայանը, ֆակուլտետային պատասխանատուներ Էդգար Աղաբեկյանը (ֆինանսական), Լիանա Հայրապետյանը (մարքեթինգ և բիզնեսի կազմակերպում), Անուշ Շիրինյանը (ինֆորմատիկա և վիճակագրություն), Գայանե Ավագյանը (ՏԿ և ՄՏՀ), Նարինե Միրզոյանը (հ/հ և աուդիտ), Լուսինե Կարապետյանը (կառավարում):

**«Տնտեսագետի» խնդրանքով Լիլիթ Դադայանը պարզաբանում է ընկերության գործունեության առանցքային նոր մոտեցումները:**

– Ցանկանում եմ ողջունել բոլոր այն ուսանողներին, որոնք հաստատական են ու պատրաստ ստանալ համակողմանի ակադեմիական կրթություն, որում գիտահետազոտական բաղադրիչը կարևոր դերակատարում ունի:

Ինչպես գիտեք, այս ուսումնական տարեկազմից Ուսանողական գիտական ընկերության գործունեության նոր շրջափուլ է սկսվել, որի մասին ծանուցել է համալսարանի ղեկավարությունը:

Վերափոխումների և թարմացումների պատկերը ներկայացնելու համար թերևս առաջին ընդգծումս այն կլինի, որ ընկերությունը իր ավանդական գործունեությունը կընդլայնի՝ հավակնելով դառնալ, այսպես ասած, գիտական ակումբ, որտեղ կհամախմբվեն ընդհանուր հետաքրքրություններ, արժեքներ դավանող ուսանողներ: Մասնակիցներին կուսուցանեն, նրանց հետ անհատական աշխատանք կկատարեն բուհի առաջատար գիտնական-մասնավարժները, հաճախակի կլինեն կլոր սեղան-քննակրկիտները, ոլորտի գիտակիրավորյալ մասնագետների դասախոսությունները, նիստերը՝ կազմակերպական և հարակից հարցերով: Եվ որ շատ կարևոր է՝ իրենք մասնակիցները միմյանց լավ կճանաչեն, կհամագործակցեն, ինչու չէ՝ նաև համատեղ հետազոտություններ կկատարեն:

Հիմնական աշխատանքը կամփոփվի ներֆակուլտետային, ապա միջֆակուլտետային մատչելիություններում: Հարկ է համարում նշել նաև, որ բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներին հնարավորություն կընձեռվի հանդես գալ առանձին բաժանումներում, հավասար մրցակցային պայմաններում: Մրցանակակիրները կխրախուսվեն և այդուհետ կլինեն ՈՒԳԸ պատասխանատուների, համալսարանի ղեկավարության տեսադաշտում:

Այսօր արդեն բուհի բոլոր ֆակուլտետներից մեզ դիմել է ավելի քան 70 ուսանող, և ցանկանում են հայտնել, որ գիտական ակումբի դռները բաց են բոլոր անդամակցել ցանկացողների առջև: Ինքնակենսագրականները ուղարկել [sss.asue.2019@gmail.com](mailto:sss.asue.2019@gmail.com) հասցեին:

**Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

# ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՅԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՒ ՇՐՋԱԿԱՆ մԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ

Ընդերքօգտագործումը (ընդերքի օգտագործում երկրաբանական ուսումնասիրությունների, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով) արդյունաբերության մի շարք ճյուղերի հունքային բազայի ապահովման կարևոր բնագավառն է, իսկ արդյունաբերական ներուժը յուրաքանչյուր երկրի ներքին ապահովվածության կարևորագույն ցուցանիշներից մեկն է: Հետևաբար օգտակար հանածոների շահագործման հնարավորությունները նախևառաջ կախված են երկրի հանքահումքային ռեսուրսների առկայությունից, այլ կերպ ասած՝ երկրի ընդերքում առկա հունքից և դրա քանակից: Օրինակ, Հայաստանի Հանրապետության ընդերքը պետության բացառիկ սեփականությունն է, որը կարող է օգտագործման տրամադրվել միայն երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով: Ընդերքի տեղամասերը չեն կարող լինել առքուվաճառքի, գրավի առարկա կամ օտարվել այլ ձևով: Իսկ ազգային տնտեսության մեջ հանքարդյունաբերության ոլորտը տնտեսապես գրավիչ է և հեռանկարային, քանի որ ապահովում է արտահանումից ստացվող բարձր եկամուտներ և օտարերկրյա ուղղակի մեծածավալ ներդրումներ, ինչպես նաև համեմատաբար բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծման աղբյուր է: Գնահատելով Հայաստանի օգտակար հանածոների պաշարի համախառն արժեքը՝ նշենք, որ այն գերազանցում է 120.0 մլրդ դոլարին համարժեք դրամը, իսկ հետախուզված և նախնական գնահատված պաշարների (առանց քաղցրահամ ջրերի) կորզվող արժեքը կազմում է շուրջ 90.0 մլրդ դոլարին համարժեք դրամ: Միաժամանակ պետք է նշել, որ Հայաստանում երկրաբանական ուսումնասիրության և հետազոտական աշխատանքները ավարտված չեն, քանի դեռ, ըստ հանրապետական երկրաբանական ֆոնդի, գրանցված են 1278 ոչ մետաղական, 68 ստորերկրյա ջրերի և 173 մետաղական պաշարներ, իսկ գիտական աղբյուրներում նշված են շուրջ 871 հաստատված հանքավայրեր (43 մետաղական, 760 ոչ մետաղական և 44 ստորերկրյա քաղցրահամ և 24 հանքային ջրերի) և 580 հանքերակույմներ: Համաձայն Համաշխարհային բանկի ուսումնասիրության՝ Հայաստանի պղնձանոլիբդենային ամենախոշոր հանքավայրը համաշխարհային խոշոր հանքավայրի ցանկում իր մեծությամբ 110-րդ հորիզոնականում է, իսկ ոսկու ամենախոշոր հանքավայրը՝ ոսկու 300 խոշորագույն հանքավայրերի ցանկից դուրս է: Քարհանքերի թիվը հարաբերականորեն մեծ է, սակայն, համեմատած երկրի չափերի հետ, շինարարական քարերի և լցանյութերի արտադրության ընդհանուր ծավալը փոքր է:

Ոլորտի զարգացման հեռանկարները դիտարկելիս նախևառաջ անհրաժեշտ է գնահատել օգտակար հանածոյի երկրաբանական և տնտեսագիտական ցուցանիշները: Առանձնացնում են *առկա հանքավայրեր* (պարունակում է երկրաբանական և տնտեսական գնահատված օգտակար հանածոյի պաշարներ՝ փաստացի և պոտենցիալ) և *օգտակար հանածոյի երևակումներ* (պարունակում է երկրաբանական և տնտեսական չգնահատված օգտակար հանածոյի պաշարներ) հասկացությունները:

Երկրաբանական ցուցանիշների (երկրակեղևի կառուցվածք, ապարների առաջացման պայմաններ, արտածին երկրաբանական գործընթացներ, հրաբխային

գործունեություն և այլն) ուսումնասիրությունները կատարվում են ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում: Դրանք ենթակա են պարտադիր պետական հաշվառման: Գոյություն ունի օգտակար հանածոների պաշարների, հանքավայրերի և երևակումների պետական հաշվառման երկու ձև՝

1. օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշիռ,
2. օգտակար հանածոների հանքավայրերի և երևակումների կադաստր:

Օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշիռը կազմվում և պարբերաբար փոփոխվում է դրանց հաստատված պաշարների և սահմանված կարգով ընդերքօգտագործողների կողմից ներկայացվող համապատասխան տեղեկատվության (հաշվետվությունների) հիման վրա: Այն պետք է տեղեկություններ ներառի արդյունաբերական նշանակություն ունեցող հանքավայրերում պարունակվող բոլոր տեսակի հայտնաբերված օգտակար հանածոների պաշարների քանակի, որակի և ուսումնասիրվածության աստիճանի, գործող կամ նախագծվող արդյունաբերական ձեռնարկության ուսումնասիրված և նախնական գնահատված պաշարներով ապահովվածության մասին:

Օգտակար հանածոների հանքավայրերի և երևակումների պետական կադաստրը վարվում է լիազոր մարմնում կուտակվող տեղեկատվության հիման վրա: Այն ներառում է տվյալներ, որոնք բնութագրում են յուրաքանչյուր հանքավայրի և երևակման երկրաբանական կառուցվածքը, դրանցում պարունակվող օգտակար հանածոների նախնական գնահատված, կանխատեսումային ուսումնասիրված պաշարները, հանքավայրերի շահագործման լեռնատեխնիկական, հիդրոերկրաբանական, էկոլոգիական և այլ պայմանները, ինչպես նաև երկրաբանատնտեսագիտական գնահատականը:

Ընդերքի որոշակի տեղամասի երկրաբանական ուսումնասիրության կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման իրավունքը տրամադրում է «Ընդերքի տրամադրման գործակալությունը»՝ հետևյալ հիմքերի վրա՝

- ընդերքօգտագործման թույլտվության կամ համաձայնության,
- լեռնահատկացման ակտի,
- ընդերքօգտագործողի հետ ընդերքօգտագործման պայմանագրի կնքման:

Ընդերքօգտագործման ժամկետներն ամրագրվում են ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերում, իսկ ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման ժամկետները տատանվում են 3-ից մինչև 50 տարի՝

- ընդերքի երկրաբանական ուսումնասիրության նպատակով՝ 3 տարին չգերազանցող ժամկետով, որը կարող է երկարաձգվել,
- օգտակար հանածոների արդյունահանման նպատակով, սահմանված կարգով փորձաքննություն անցած նախագծի համաձայն՝ սկզբում 50 տարի, որը հետագայում կարող է երկարաձգվել:

Ընդերքօգտագործումը վճարովի է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Ընդերքն օգտագործելիս կատարվում են հետևյալ վճարները՝

- բնապահպանական վճարներ, որոնք նախատեսված են բնապահպանական միջոցառումների իրականացման համար: Վճարների չափը սահմանվում է «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով,
- բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման վճարներ, որոնք նախատեսված են ընդերքօգտագործման ընթացքում խախտված հողերի վերականգնման համար (ռեկուլտիվացիոն),
- մշտադիտարկումների իրականացման, որոնք նախատեսված են օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման համար: Նախատեսված վճարի չափերի հաշվարկման և վճարման կարգը սահմանում է ՀՀ Կառավարությունը,
- բնօգտագործման (բացառությամբ մետաղական օգտակար հանածոների)՝ պետական սեփականություն համարվող բնական պաշարների օգտագործման համար վճարներ: Այս տեսակի վճարների չափը սահմանվում է «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով,
- ռոյալթի (մետաղական օգտակար հանածոների), նախատեսված է պետական սեփականություն համարվող բնական պաշարների օգտագործման համար: Այս տեսակի վճարների չափը սահմանվում է «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով,
- ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման պետական տուրք: նախատեսված վճարումը կատարվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ընդերքօգտագործման վճար չեն վճարում այն ընդերքօգտագործողները, որոնք՝

- սեփական կարիքների համար իրենց հատկացված հողամասի (անկախ սեփականության ձևից) սահմաններում կատարում են ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանում,
- իրականացնում են ռեգիոնալ երկրաբանական ուսումնասիրություններ (հրաբխային, սեյսմաբանական և արտածին երկրաբանական երևույթների մշտադիտարկում, այդ թվում՝ ինժեներաերկրաբանական, հիդրոերկրաբանական հետազոտություններ և այլն),
- ստեղծում են միներալոգիական, հնէաբանական և այլ հավաքածուներ,
- իրականացնում են եզակի երկրաբանական գոյացությունների, բնության հուշարձանների ուսումնասիրություն, նկարագրում և պահպանում:

Ընդերքի ռեսուրսների շահագործման հետևանքով կենսոլորտի վրա բացասական ազդեցության վնասակար հետևանքներն արտահայտվում են տնտեսության տարբեր ոլորտներում և ունեն սոցիալ-տնտեսական մեծ նշանակություն: Հանքավայրերի արդյունահանման բոլոր մեթոդներն աչքի են ընկնում կենսոլորտի վրա բացասական ազդեցությամբ, որը կարող է առաջանալ ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի (որպես ուղղակի ազդեցության հետևանք): Անուղղակի ազդեցության տարածման շրջանները, ըստ մասշտաբային մեծության, գլոբալ բնույթ են կրում, իսկ ուղղակի ազդեցության շրջան-



ները՝ տեղային: Որպես կանոն, անուղղակի ազդեցությամբ ընդգրկված շրջաններում ոչ միայն կենսոլորտն է վտանգվում, այլև մյուս բնական տարրերը: Ընդերքի ռեսուրսների շահագործման կազմակերպման շրջանում տեղի է ունենում հիդրոբալանսի խախտում, որն առաջանում է հանքավայրերի չորացման հետևանքով և պոչամբարների (արհեստական ջրամբարի տեսակ, որտեղ թափվում և մաքրվում են հեղուկ պոչերը՝ հեղուկ թափոնները) ձևավորման արդյունքում: Ստորերկրյա և մակերևութային ջրերն աղտոտվում են լեռնային արտադրության ընթացքում գոյացած թափոնակույտերից, չկազմակերպված աղտոտված դրենաժային ջրերի արտահոսքերից, արտադրական հրապարակներից, հարստահանող ֆաբրիկաներից, արտադրական արտահոսքերից: Շատ դեպքերում նկատվում է ջրային օբյեկտների երկրաքիմիական աղտոտում մթնոլորտային տեղումների հետևանքով (մթնոլորտային տեղումներով փոշու մասնիկների նստեցում, գազային աղտոտումների ողողում) և հողերի աղտոտման հետևանքով (գրունտային ջրերում աղտոտող նյութերի լվացում և գոլորշիացում): Մթնոլորտն աղտոտվում է պայթեցումների, հորատումների, քարհանքերի տեղափոխման, արտադրական ֆաբրիկաների գործարկման ժամանակ փոշեգազային արտանետումներով, ինչպես նաև հանքային հումքի մշակման և վերամշակման հետևանքով գոյացած լցակույտերից տարբեր վնասակար նյութերի արտանետումներով:

ՀՀ բնօգտագործման տնտեսական կառուցակարգի հիմնական տարրերն են շրջակա միջավայրի աղտոտման և բնօգտագործման վճարները, սակայն մեզ մոտ բացակայում են այնպիսի տարրեր, ինչպիսիք են բնապահպանական ֆոնդերը, ծրագրերը, աղտոտման իրավունքի վաճառքը, բնապահպանական ապահովագրությունը և այլն, որոնք լայնորեն կիրառվում են միջազգային պրակտիկայում: Առավել կարևորվում է բնապահպանական ֆոնդերի ստեղծումը, որոնք ավելի հասցեական կդարձնեն հավաքագրված բնապահպանական և բնօգտագործման վճարները:

**ՆԱԴԵԺՎԱ ԱՅՅԱՆ**

ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու

## ՆՐԱՆՔ ԱՐԺԵՎՈՐՈՒՄ ԵՆ ԵՐԵՎԱՆ ՈՒ ԱՅՍՕՐԸ, ՀԱՎԱՏՈՒՄ ԼՈՒՍԱՎՈՐ ՎԱՊՎԱՆ

«Շրջանավարտ – 2019» ավարտահանդեսը նախորդ ուսումնական տարեվերջն ամփոփեց ջերմ ու տոնական տրամադրությամբ: Ավանդաբար ամենամյա միջոցառումը մեծարում է Տնտեսագիտական մայր բուհը պատվով ավարտածներին, հանդիսավորությամբ հանձնում դիպլոմները և սրտագին մաղթանքներով նրանց մեծ կյանք ծանապարհում: Առանձնահատուկ դրվատանքի են արժանանում լավագույն շրջանավարտները, որոնք տարիներ շարունակ քրտնաջան սովորել են, ապահովել բարձր առաջադիմություն և լավագույն ուսանողի օրինակ կերտել: Այս տարի էլ հատուկ անվանակարգերում շնորհվեցին մրցանակներ, որոնք հիշարժան են և իրենց ոգևորիչ դրոշմն են թողնում ՀՊՏՀ-ում մասնագիտացած երիտասարդների կյանքում:

«Լավագույն շրջանավարտ» ճանաչվեց ֆինանսական ֆակուլտետից Աշխեն Գալստյանը, «Ամենաբարձր ՄՈԳ ունեցող Ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակից շրջանավարտ» կոչմանն արժանացավ տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետից Սևակ Կյուրեղյանը և «Ամենաբարձր ՄՈԳ ունեցող մարտական հերթապահություն իրականացրած շրջանավարտ»՝ նույն ֆակուլտետից Դավիթ Ասոյանը: Ավարտահանդեսին միայն լսեցինք նրանց անունն ու տեսանք բեմում մրցանակ ստանալիս, իսկ ահա «Տնտեսագետի» էջերից մեր լավագույնները ներկայանում են նորովի, ավելի անմիջական ու անկեղծ՝ արժևորելով իրենց երեկն ու այսօրը, հավատալով լուսավոր վաղվան, խոսելով կրթության, ուսանող լինելու պատասխանատվության, իրենց հետաքրքրությունների, անելիքների մասին:



### «ԵՐԲ ՎԱՅԵԼՈՒՄ ԵՍ ԱՃԽՍՏՆԱՔԻՊ ԲՍՈՂՊ ՊՏՈՒՂՆԵՐԸ...»

Աշխեն Գալստյանն այժմ ֆինանսներ մասնագիտացման մագիստրանտ է: Մի քանի ամիս առաջ որպես դիպլոմավորված մասնագետ աշխատանքի է անցել Էյչ Ես Բի Սի Բանկում:

«ՀՊՏՀ-ում ստացածս կրթության շնորհիվ ես այսօր միջազգային առաջատար բանկի աշխատակից եմ: Գիտե՞ք՝ գալիս է մի պահ, երբ սկսում ես վայելել աշխատանքիդ քաղցր պտուղները և կրկին հասկանում ես, որ զուր չէր այն ջանասիրությունը, որ ներդրել ես սովորելու մեջ: Ընկերներս հաճախ կատակում էին՝ ասելով՝ 100 ստանալը քեզ համար նպատակ է, բայց իրականում ինձ ոչ թե զնահատականն էր հետաքրքրում, այլ առարկան յուրացնելը: Մասնագիտությունս ավելի եմ սկսել սիրել հենց այն դասախոսների շնորհիվ, որոնք մեր կողքին կանգնած են եղել իբրև գիտական խորհրդատու, կրթող ու ոգևորող, մեր սովորելու ցանկությունը զնահատող ու շահամիտող: Իսկապես, կրթության արժեքը պետք է խորապես գիտակցել, դա օգնում է սիրել մասնագիտությունդ», - ասում է Աշխենն ու հավելում, որ մագիստրոսական կրթությունը թույլ է տալիս նոր լույսի ներքո ճանաչել մասնագիտությունը, ավելի մոտենալ դրա գիտական կողմին:

«Մագիստրատուրայում ուսումն ավելի ուսանողական է, այն լայն հարթակ է կարծիք հայտնելու, քննարկելու, զործնական ասպեկտով մեր ոլորտը դիտարկելու: Ուրախալի է տեսնել, որ Հայաստանում ևս ձևավորվում է կրթության ուսանողական տրամադրությունը: Կրթության մասին ուսանողի պատկերացումները միշտ փոխվում են, մենք որոնում ենք, փնտրում մեր հետաքրքրությունները բավարարելու նոր ուղիներ: Եվ այն, որ մեր բուհը բարեփոխումների ճանապարհին է՝ խոստումնալից է: Մենք մասնագիտանում ենք և՛ բուհում, և՛ աշխատանքում, և, ըստ իս, հենց այս տեսական և գործնական համակցման շնորհիվ ենք դառնում մրցունակ մասնագետ»:



**«ՍՈՎՈՐԵԼԸ ՊԵՏՔ Է ՄԵՐ ԿԿՆՔԻ ՈՒՂԵԿԻՅՈՒՆ ԼԻՆԻ, ՄԵՐ ՍՈՍՁՐԱԾՍՅՈՒՆ ԵՐԱՇԵՆԻՔԸ»**

Ապրիլյան քառօրյայի մասնակից Սևակ Կյուրեղյանի հետ զրույցում չէինք կարող շրջանցել նրա՝ պատերազմի մասնակից լինելը: 2014-2016 թթ. պարտադիր զինվորական ծառայությունը (Գորիսի N զորամաս) ճակատագրական եղավ. Սևակը անմիջական ականատեսը դարձավ մերօրյա արցախադրբեջանական մարտական գործողությունների՝ մասնակցելով Ջրականի (Ջեբրահիլ) պաշտպանությանը: Ինչպես ինքն է ասում՝ բանակը ոչ թե փոխում է մարդուն, այլ խտացնում է նրա հատկանիշները, իսկ պատերազմը՝ առավել քան. «Երբ դժվար իրավիճակում ես հայտնվում, ավելի պատասխանատու ես դառնում, ինչն էլ քո առջև դրված խնդիրը պատվով կատարելու կամք է զարգացնում: Հետագայում հայացքով դժվարանում եմ խոսել պատերազմից, հակասական զգացողություններ կան, դա էլ մի փորձություն էր...»:

ՀՊՏՀ լավագույն շրջանավարտի կոչումը Սևակը պատասխանատվությամբ է կրում և այժմ էլ՝ նույն մասնագիտությամբ մագիստրատուրայում ջանում է առաջավորների շարքերում լինել, արժանանալ դասախոսների վստահությանը և նշում. «Այն ինձ ստիպեց ավելի բարձր նշաձող սահմանել»:

«Ուսումնառության ընթացքում մենք ձեռք ենք բերում գիտելիք, փորձ ու հմտություն, ուրվագծում ենք մեր աշխատանքային հեռանկարները: Մեզանից է կախված մեր մրցունակությունը: Իհարկե, կրթական միջավայրն էլ է կարևոր, այն պետք է ժամանակին համահունչ լինի: Լավ սովորելն ինձ համար մոտիվացիա է, որը ձևավորվում է մի քանի ոգևորիչ հանգամանքից: Մոտ ապագայում նպատակ ունեմ աշխատել, ինձ համար գրավիչ է բանկային ոլորտը, հավանաբար, այստեղ էլ կսկսեմ կարիերաս: Բացի մասնագիտական հմտություններից, աշխատում եմ բարելավել անգլերենս: Արտերկրում սովորելու նպատակ էլ ունեմ: Առհասարակ, սովորելը պետք է մեր կյանքի ուղեկիցը լինի, մեր առաջընթացի երաշխիքը», - վստահ է Սևակը:

**«ԲՆՅԱԼՅՈՒՄ ԵՄ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ՏՎՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍՊԵՐՍՆԵՐԸ»**

Դավիթ Ասոյանը մարտական հերթապահությունը իրականացրած ուսանող է, ուսման 4 տարիներին արձանագրել է առաջադիմության գերազանց ցուցանիշ, ինչի շնորհիվ էլ արժանացել է համալսարանի ղեկավարության ուշադրությանը՝ լավագույնի կոչմանը: Մագիստրատուրան շարունակում է նույն՝ տնտեսագետ-միջազգայնագետի մասնագիտությամբ: Պարտադիր զինվորական ծառայությունն անցել է 2016-2018 թթ., Ջրականում իրականացրել (Ջեբրահիլ) մարտական հերթապահություն: Այժմ աշխատում է Cypress ընկերությունում որպես ծրագրավորող:

«Միջազգային տնտեսական հարաբերություններ մասնագիտությունը բավականին ընդգրկում է, թերևս դա էլ նրա գրավչությունն է: Այն ձևավորում է զլորալ մտածողություն: Հիմա իմ ուշադրության կենտրոնում է նաև տվյալագիտությունը, աղբյուրները տնտեսագիտության հետ: Մասնավորապես, ինձ հետաքրքրում է դրա կիրառությունը բիզնեսի ոլորտում: Այս արդիական մասնագիտության հանդեպ իմ սերը դեռ աշակերտական տարիներից է. սովորել եմ ֆիզիկամաթեմատիկական թեքումով դպրոցում», - պատմում է Դավիթը և խոսում ապագա պլանների մասին. «ՏՏ ոլորտում արդեն աշխատանք ունեմ և ուզում եմ հենց այստեղ էլ խորամուխ լինել, նպատակ կա նաև տվյալագիտություն մասնագիտությամբ սովորելու: Ամեն դեպքում, համոզված եմ պետք է լավ սովորել, լավ մասնագետ դառնալ: Ապահովագրական շուկան ևս տնտեսագիտության գրավիչ ծյուղերից է ինձ համար, այժմ ՀՀ ԿԲ Իսահակ Իսահակյանի անվան կրթաթոշակի մրցույթին մասնակցելու համար կատարում եմ «Բժշկական ապահովագրության մոդելները և ներդրման հնարավորությունները ՀՀ-ում» թեմայով հետազոտական աշխատանք: Չարգացնում եմ գիտահետազոտական հմտություններս, ինչը մագիստրատուրայի կարևոր բաղադրիչն է»:



Մեր լավագույններն իրավամբ իրենց կոչմանն արժանի են, անսահման նպատակասլացությունը, ուսման նկատմամբ բարձր գիտակցությունը, հայրենասիրությունը, պրպտել-գտնելու մղումը նրանց մրցունակության գրավականն է: Նրանց մաղթում ենք չմարող ջանասիրություն և հաջողություններ:

ՆԱՆԵ ԱՎԱՆԵՍՅԱՆ



**ԵԱՏՍ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ**

Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՍ) Բարձրագույն եվրասիական տնտեսական խորհրդի նիստին, որը կայացավ Երևանում հոկտեմբերի 1-ին (ԵԱՏՍ-ում Հայաստանի նախագահության շրջանակում), մասնակցում էին ԵԱՏՍ անդամ երկրների ղեկավարները՝ Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը, Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն, Դրոզստանի Հանրապետության նախագահ Սորոկոբայ ժենբեկովը, Ղազախստանի Հանրապետության նախագահ Կասիմ ժոմարտ-Տոկաևը և Եվրասիական տնտեսական համաձայնագրի կոլեգիայի նախագահ Տիգրան Սարգսյանը։ Որպես

իրավիրյալներ մասնակցում էին Իրանի նախագահ Հասան Ռոհանին և Սինգապուրի վարչապետ Լի Սյեն Լուև, իսկ դիտորդի կարգավիճակով՝ Մոլդովայի նախագահ Իգոր Դոդոնը։

ԵԱՏՍ նիստը կարևորվեց նրանով, որ ազատ առևտրի գոտու համաձայնագիր ստորագրվեց Սինգապուրի և ԵԱՏՍ-ի միջև, իսկ Հայաստանն ու Սինգապուրն էլ լրացուցիչ 5 պայմանագիր ստորագրեցին ներդրումների և առևտրային ծառայությունների վերաբերյալ։ Փոխհամաձայնություն ձեռք բերվեց Իրանի հետ ազատ առևտրի գոտու ստեղծման վերաբերյալ։ Սոտ ապագայում ազատ գոտու ստեղծման վերաբերյալ պայմանագիր կկնքվի նաև ԵԱՏՍ-ի և Սերբիայի միջև։

Արժանահիշատակ է, որ Իրանի նախագահ Հասան Ռոհանին ՀՀ վարչապետի հետ հանդիպման ժամանակ պատրաստակամություն հայտնեց ընդլայնելու «Գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց» ծրագրի շրջանակները։

Համաժողովը կարևորեց առևտրի և ծառայությունների ոլորտում խոչընդոտների վերացման ուղղությամբ համակարգային աշխատանքները և արձանագրեց, առարկայական բանակցություններ կան ԵԱՏՍ-ի և 13 երկրների ու ավելի քան 120 միջազգային կազմակերպությունների, կառույցների հետ։

**ՏՏ ՀԱՄԱՇՆԱՐՅԱՅԻՆ 23-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Տեղեկատվական տեխնոլոգիաների 23-րդ համաշխարհային համաժողովը (WCIT – 2019 թ.) տեղի ունեցավ 2019 թ. հոկտեմբերի 6-9-ը Երևանում, որը փաստում է, որ ՀՀ Կառավարության ռազմավարական նպատակը «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը ՀՀ տնտեսության շարժիչ ուժ դարձնելն է»։ Համաժողովին մասնակցում էր 70 երկրից ժամանած ավելի քան 2500 պատվիրակ՝ ոլորտի առաջատար մասնագետներ, նորարարներ, քաղաքական գործիչներ, հետազոտողներ, արվեստի և շոու բիզնեսի ներկայացուցիչներ։ WCIT-ը (World Congress On Information Technology) հիմնադրվել է 1978 թ.՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և ծառայությունների համաշխարհային դաշինքի կողմից և անցկացվում է երկու տարին մեկ անգամ։

WCIT-2019 համաժողովում ելույթ ունեցավ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը և նշեց, որ մեր հանրապետության համար մեծ պատիվ է այսպիսի համաժողովը հյուրընկալելը և միջազգային հանրությանը մեկ անգամ ևս իրազեկելը՝ «Հայաստանը բարձր տեխնոլոգիական արդյունաբերական երկիր դարձնելու մեր ռազմավարության մասին»։ Վարչապետը նշեց, որ Հայաստանը տպավորիչ աճ է գրանցում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և տեխնոլոգիական ապրանքների արտահանման ոլորտում։ Դրա մասին է վկայում այն, որ անցած 7 ամիսների կտրվածքով միջին տեխնոլոգիատար ապրանքների արտահանումը մեր երկրից աճել է 40,9%-ով, իսկ բարձր տեխնոլոգիատար ապրանքների արտահանումը՝ 34,4%-ով, վերջին 7 տարում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտն աճել է շուրջ 5 անգամ և ամեն տարի 20-25% կայուն աճ է արձանագրում։

Այս ամենը, ըստ վարչապետի, վստահություն է ներշնչում, որ «Հայաստանում տեղի ունեցող տնտեսական հեղափոխությունը կհանգեցնի տեխնոլոգիական հեղափոխության, և մենք կկարողանանք Հայաստանը դարձնել տեխնոլոգիական, նորարարական առաջատար երկրներից մեկն աշխարհում»։ Այս նպատակը, ինչպես նշվեց, իրատեսական է նաև այն պատճառով, որ հայ ժողովրդի բազմաթիվ զավակներ տեխնոլոգիական հանրահայտ նորարարությունների հեղինակ-

ներ են։ Ստորև ընթերցողին ենք ներկայացնում մեր հայրենակիցների նորարարություններից առավել հիշարժանները, որոնք ոչ միայն ոգևորիչ, այլև ճանաչողական նշանակություն ունեն.

- 1853 թ. *Հովհաննես Ղուկասյանն ստեղծեց կերոսինային լամպը՝ հեղափոխություն իրականացնելով մարդկանց առօրյա կյանքում։*
- 1854 թ. *Քրիստափոր Տեր-Սերոբյանն ստեղծեց ԱՄՆ-ի դոլարի կանաչ գույնը, որը մինչև հիմա համարվում է բացառիկ գույն։*
- 1911 թ. *Գաբրիել Կալանջյանն ստեղծեց մազեր չորացնող սարքավորումը՝ բոլորիս հայտնի ֆենը։*
- 1916 թ. *Ստեփան Ստեփանյանն ստեղծեց մեխանիկական բետոնախառնիչը։*
- 1930 թ. *Հովհաննես Աղամյանի տեխնոլոգիական գյուտը հնարավոր դարձրեց գունավոր հեռուստացույցների ստեղծումը։*
- 1931 թ. *Ասատուր Սաֆարյանն ստեղծեց ավտոմեքենաների ավտոմատ տուփը՝ նոր հնարավորություններ ընձեռելով ավտոմոբիլաշինության զարգացմանը։*
- 1939 թ. *Լյուբեր Գևորգ Սիմիրջյանն ստեղծեց բոլորիս հայտնի բանկրոմատը։*
- 1960-ական թթ. *Միքայել Տեր-Պողոսյանը դարձավ տոնոգրաֆիայի հիմնադիրներից մեկը, որը հեղափոխական նշանակության նորարարություն էր առողջապահության ոլորտում։*
- 1995 թ. *Էմիլ Ավակյանն ստեղծեց հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված ինքնագնաց սայլակը՝ փոխելով միլիոնավոր մարդկանց կյանքը։*
- 2006 թ. *Յուրի Օզանիսյանը հայտնաբերեց Մենդելևի պարբերական աղյուսակի 118-րդ քիմիական տարրը, որն ի պատիվ նրա կոչվում է «օզանեստոն»։* Եթե այս ամենին ավելացնում ենք այն փաստը, որ Իսրիդային Միության առաջին համակարգիչը՝ «Նաիրի» էլեկտրոնային հաշվիչ մեքենան, ստեղծվել է Հայաստանում, ապա առավել հպարտությամբ ու վստահությամբ ենք համակվում, որ Հայաստանը մոտ ապագայում դառնալու է բարձր տեխնոլոգիաների կենտրոն։

### ԱՄՈՒՍԱՐԻ ՈՍԿԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՅԱՆԵԼՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕԳՈՒՏՆԵՐՆ ՈՒ ՉՅԱՆԵԼՈՒ ԿՈՐՈՒՄՆԵՐԸ

Ներկայումս Հայաստանի տնտեսության կարևոր ոլորտներից է հանքարդյունահանումը: Բավական է նշել, որ ՀՀ արդյունաբերական արտադրանքի 17%-ը ստեղծվում է հանքարդյունահանման շնորհիվ (մի քանի տարի առաջ այն 21% էր կազմում): Հանրապետության ՀՆԱ-ի շուրջ 3%-ը ստեղծվում է հանքարդյունաբերության մեջ: Այս ոլորտում է զբաղված ավելի քան 10 հազ. աշխատող: Հանքարդյունահանումը կարևորվում է նաև նրանով, որ այն որոշակի գրավչություն ունի օտարերկրյա ներդրողների համար: Օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) մեծ մասը, ըստ էության, ուղղվում է դեպի հանքարդյունահանման ոլորտ: Նախքան Ամուլսարին անդրադառնալը՝ համառոտակի ներկայացնենք ՀՀ հանքարդյունահանման և մասնավորապես ոսկու արդյունահանման ոլորտը:

Հայաստանում ներկայումս գործում է 871 հանք, որից 43-ը մետաղական հանքեր են, այդ թվում՝ 24-ը ոսկու կամ ոսկի պարունակող: Ոսկու և գունավոր մետաղների մեծ մասը շահագործվում է օտարերկրյա ընկերությունների կողմից, որոնք տարեկան Հայաստանից արտահանում են շուրջ 1800 կգ ոսկու խտանյութ այն դեպքում, երբ ՀՀ կենտրոնական բանկում կա ընդամենը 70 կգ ոսկեղեն, որից միայն 1 հատ «բանկային ոսկու» ձուլածո: Մեր ընթերցողին հիշեցնենք, որ 2004 թ. ՀՀ կենտրոնական բանկի 1600 կգ ոսկին վաճառվել է արտասահմանում՝ 1 ունցիան (31,1 գրամ) 400 դոլարով: Դրանից տարիներ հետո ոսկու գինը Լոնդոնի ֆոնդային բորսայում հասել է մինչև 1900 դոլարի՝ 1 ունցիայի դիմաց: Ներկայումս ոսկու միջազգային գինը շուրջ 1200 դոլար է: ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյանը այս բորսայական գործարքը հիմնավորում է՝ ասելով, որ 2004-ին ԿԲ-ի ունեցած ոսկին վաճառելու իմաստը եղել է երկակի. առաջինը՝ ոսկու գները համեմատաբար աճել են, նաև այդ պահին բյուջեի եկամուտների հետ կապված խնդիր կար: Այն ժամանակ ոսկու կառավարումից ոչ մի տոկոս եկամուտ չէր ստացվում: Նա նշել է, որ շուտով Հայաստանում կբացվի ոսկու գտարկման (աֆինաժի) գործարան, որտեղ կարտադրվեն բանկային ձուլակտորներ:

Վերջերս ՀՀ Կառավարության որոշմամբ Հայաստանում ոսկի արդյունահանողները պարտավոր են դրա ծավալի 40%-ը իրացնել Հայաստանի ներքին շուկայում, որը կնպաստի ոսկու արժուրթային պաշարների մեծացմանը:

Ամբողջ աշխարհում կա շուրջ 31 հազ. տոննա ոսկի, որից շուրջ 8,8 հազ. տոննան ԱՄՆ-ում, 4 հազ. տոննան Չինաստանում: Բոլորիս է հայտնի, որ ոսկին ամենաբարձր իրացվելիություն (լիկվիդայնություն) ունեցող ապրանքն է փողից հետո (1979 թվականից Արժույթի միջազգային հիմնադրամի ճանաչված համաժողովի որոշմամբ ոսկու «ապարդամայնացում» է կատարվել): Պատահական չէ, որ զարգացած շատ երկրներ ներկայումս ձգտում են հնարավորինս մեծացնել իրենց ոսկու պաշարները:

Այժմ անդրադառնանք Ամուլսարի ոսկու հանքին և փորձենք ներկայացնել դրա հնարավոր օգուտներն ու վնասները: Այս հանքը շահագործող «Լիդիան Արմենիա» ընկերությունը, որի բաժնետոմսերի 100%-ի սեփականատերը «Լիդիան Ինթերնեշնլ» ընկերությունն է, գրանցված է Մեծ Բրիտանիային պատկանող օֆշորային Վիրջինյան կղզիներում՝ «Լիդիան ռեսուրսես Արմենիա» անվանումով: «Լիդիան Արմենիայի» օֆշորային ծագումն արդեն իսկ մտորումների տեղիք է տալիս: Նշենք նաև, որ «Լիդիան Արմենիայի» գոր-



ծուցության հետ առնչվում են Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ), Ռոտշիլդների ֆինանսական խումբը, Amber Capital UK LLP ինվեստիցիոն ֆոնդը (որի ներկայացուցիչը հայազգի Ջոզեֆ Ուղուրյանն է), «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (որի հիմնական բաժնետերը Ռուբեն Վարդանյանն է, 24 մլն դոլարի վարկ է տրամադրել «Լիդիան Արմենիային»)՝ Ամուլսարի հանքավայրում ոսկու արդյունահանման ծրագրի մշակման համար նախատեսված սարքավորումների գնման և ցիանիդի գործարանի կառուցման համար) և այլ շահագրգիռ կազմակերպություններ ու անձինք:

Ըստ «Լիդիան Արմենիայի» հայտարարության Ամուլսարի հանքավայրում մինչ այժմ կատարվել են 400 մլն դոլարից ավելի նախնական ներդրումներ և 130 մլն դոլար էլ դեռևս ներդրվելու է մինչև հանքի շահագործումը և բուն ոսկու արդյունահանումը: Դեռևս ոսկի չհանած Լիդիանը ՀՀ պետբյուջե է մուծել նաև 15 մլրդ դրամի հարկ: Հանքի շահագործման դեպքում 750 աշխատող կներգրավվի բուն հանքում և բազմարկային (մուլտիպլիկատիվ) էֆեկտով կավելանա մոտավորապես 4500 աշխատատեղ՝ հանքի շահագործման հետ կապված ծառայություններ և սպասարկում մատուցող այլ ոլորտներում: Լրիվ գործարկման պարագայում ՀՀ պետբյուջե կմուծվի տարեկան շուրջ 45-50 մլն դոլարի հարկ: «Լիդիան Արմենիայի» արտադրանքի արտահանման ծավալը նախատեսվում է 250 մլն դոլար, որի շնորհիվ Հայաստանից արտահանման ծավալը կավելանա 10%-ով: Ամուլսարի հանքի կարևորությունը գնահատելու համար նշենք, որ դրա գործարկման արդյունքում Հայաստանի ՀՆԱ-ի աճը կավելանա 1,5%-ային կետով, որը 5-6% տնտեսական աճի պարագայում էական նշանակություն ունի մեր հանրապետության համար:

Ինչպես նկատում ենք, Ամուլսարի գործարկման արդյունքում մեր հանրապետության ստացվելիք տնտեսական օգուտները ակնհայտ են, սակայն դրանք պետք է գնահատել այն էկոլոգիական վնասների համատեքստում, որոնք կարող են առաջանալ հանքի շահագործման հետևանքով: Թեև Ամուլսարի հանքի շահագործումը ժամանակակից տեխնոլոգիական հիմքի վրա է իրականացվելու, այնուհանդերձ, անխուսափելի են վնասակար արտանետումների և օդային, ջրային ավազանները, հողատարածքները, մարդկանց առողջությունը թունավորելու ռիսկերը, գյուղատնտեսական արտադրության և զբոսաշրջային ոլորտի կորուստները, եթե չըջակ միջավայրի անվտանգության գնահատման (ՇՄԱԳ) արդյունքում հաստատվի, որ հանքի շահագործումը չըջակա միջավայրին սպասվածից ավելի մեծ վնաս կարող է հասցնել:

Այժմ անդրադառնանք, թե ինչ կորուստներ կունենա Հայաստանը Ամուլսարի հանքի փակման պարագայում: Նախ՝ վիճահարույց է, թե ինչպես պետք է լուծվի «Լիդիան Արմենիայի» կատարած 400 մլն դոլարի նախնական ներդրումների հարցը: Եթե միջազգային ատյանները պարտադրեն Հայաստանին դա փոխհատուցել, ապա ծանր կմատի մեր հանրապետության պետական բյուջեի վրա: Այն եկամուտները, որոնք կարող էին ստացվել Ամուլսարի շահագործման դեպքում, բնականաբար, կդառնան կորսված եկամուտներ կամ բացթողնված հնարավորությունների ծախսեր, որոնք նույնպես հսկայական տնտեսական կորուստներ են կազմում: Պակաս կարևոր չեն նաև այն բարոյական վնասները, որոնք կարող է ունենալ Հայաստանը:

**ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՇԱՐՇՆՆԹԱՅՆ ՀԵՏԵՈՐՈՂԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ**

Խորհրդային Միությունը գրեթե 30 տարի է՝ գոյություն չունի, սակայն պարբերաբար վերլուծական նյութեր են հրատարակվում նախկին 15 հանրապետությունների մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ, որոնք հնարավորություն են տալիս համեմատություններ կատարել և զուգահեռներ տանել ոչ միայն դրանց շարժման, այլև ներկայիս տարածաշրջանային վիճակի վերաբերյալ:

Ժողովրդագրական (դեմոգրաֆիական) իրավիճակի ցուցանիշները կարևոր դեր են խաղում մակրոտնտեսական համեմատական վերլուծությունների ու դատողությունների համար, ուստի կարծում ենք՝ մեր ընթերցողին կհետաքրքրի նախկին խորհրդային հանրապետություններում ժողովրդագրական իրավիճակի շարժման (փոփոխությունը) 1990-2019 թթ. ժամանակահատվածում (ներկայացնենք հետևյալ աղյուսակի տեսքով):

Նախքան բերված փաստական տվյալները գնահատելը, նշենք, որ խորհրդային տարիներին բոլոր

N	Երկիրը (ըստ բնակչության թվաքանակի)	1990 թ. (հազ. մարդ)	2019 թ. (հազ. մարդ)	Տարբերություն (հազ. մարդ)	Տարբերություն (%-ով)
1	Ռուսաստան	147665	146900	-765	-1
2	Ուկրաինա	51557	42217	-9343	-18
3	Ուզբեկստան	20322	32653	+12331	+61
4	Ղազախստան	16690	18157	+1467	+9
5	Բելառուս	10189	9492	-697	-7
6	Ադրբեջան	7132	9898	+2766	+39
7	Վրաստան	5424	3730	-1695	-31
8	Տաջիկստան	5248	8931	+3683	+70
9	Ղրղզստան	4367	6257	+1890	+43
10	Մոլդովա	4359	3548	-812	-19
11	Լիտվա	3694	2809	-885	-24
12	Թուրքմենստան	3622	5850	+2228	+62
13	Հայաստան	3515	2973	-542	-15
14	Լատվիա	2668	1934	-734	-27
15	Եստոնիա	1571	1329	-242	-15

**ՀՀ ԿԲ-Ն ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՍԱՀՄԱՆԵՑ 5,5%**

ՀՀ կենտրոնական բանկի (ԿԲ) խորհուրդը վերջերս վերաֆինանսավորման տոկոսադրույքն իջեցրեց 0,25%-ով և 5,75-ից դարձրեց 5,5%: Ի՞նչ ազդեցություն կունենա դա ՀՀ տնտեսության վրա: Նշենք, որ վերաֆինանսավորման տոկոսադրույքը այն տոկոսի նորման է, որով ԿԲ-ն վարկային ռեսուրսներ է տրամադրում առևտրային բանկերին ու վարկային կազմակերպություններին, իսկ վերջիններս էլ դրանք վարկերի ձևով տրամադրում են տնտեսավարող սուբյեկտներին ու քաղաքացիական անձանց: Վերաֆինանսավորման տոկոսադրույքը կարևոր դերակատարություն ունի գործարար ակտիվության զարգացման համար, որովհետև դրանից է նաև կախված վարկի տոկոսադրույքը, որը, ըստ ՀՀ օրենսդրության, չի կարող գերազանցել տոկոսի հաշվարկային դրույքի (12%) կրկնակի չափը՝ 24%-ը: Բնականաբար, որքան ԿԲ սահմանած վերաֆինանսավորման տոկոսադրույքը ցածր լինի, այնքան այլ հավասար պայմաններում առևտրային բանկերն ավելի ցածր տոկոսով կամ էժան վարկեր կտրամադրեն, որն էլ կխթանի ներդրումներն ու գործարար ակտիվության զարգացումը:

Հիշեցնենք, որ վերաֆինանսավորման տոկոսադրույքը տարիներ առաջ 10,75% էր կազմում, և դրա գրեթե կրկնակի իջեցումը էական ազդեցություն կունենա մեր երկրի տնտեսության զարգացման համար: Սրանում է արտահայտվում ԿԲ-ի խթանիչ դրամավարկային քաղաքականության կամ «էժան փողի» քաղաքականության դրսևորումներից մեկը: Նշենք նաև, որ 5,5% վերաֆինանսավորման տոկոսադրույքը, ըստ էության, այնքան էլ ցածր չէ, եթե համեմատենք Եվրամիության (ԵՄ) երկրների հետ, որտեղ այն միջինը 1,5-2% է կազմում: Կան նաև երկրներ (Ճապոնիա), որտեղ առանձին ժամանակահատվածներում վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0% է սահմանվում՝ տնտեսական աճը էականորեն խթանելու նպատակով:

Ամուլսարի հանքի փակումը որոշակի ազդեցություն կունենա օտարերկրյա ներդրողների վրա: Հայաստանի ներդրումային գրավչությունը կարող է որոշակիորեն նվազել: ՕՈՒՆ-ի ռիսկայնությունը նույնպես կբարձրանա, որի արդյունքում կարող են պակասել առանց այն էլ էապես կրճատված օտարերկրյա ներդրումների ծավալները:

Վերը նշված հանգամանքները վկայում են, որ Ամուլսարի հարցում Հայաստանը երկնտրանքի առջև է կանգնած. կամ թույլատրել արդյունահանել ոսկին իր տնտեսական օգուտներով ու հավանական էկոլոգիական վնասներով հանդերձ, կամ փակել հանքը իր տնտեսական կորուստներով ու բարոյական վնասներով հանդերձ:

հանրապետություններում բնակչության աճի շարժմանը դրական է եղել, և տարբեր էր միայն դրա տեմպը: Հետխորհրդային երկրներում ժողովրդագրական իրավիճակի շարժմանը 1990-2019 թթ. ժամանակահատվածում տեսանելի է դարձնում պետությունների երեք խմբերի առանձնացումը.

1. բնակչության բուռն աճ ունեցող երկրներ՝ Տաջիկստան, Թուրքմենստան, Ուզբեկստան, Ղրղզստան, Ադրբեջան,
2. համեմատաբար կայուն բնակչությամբ երկրներ՝ Ղազախստան, Ռուսաստան, Բելառուս,
3. նվազող բնակչությամբ երկրներ՝ Հայաստան, Եստոնիա, Ուկրաինա, Մոլդովա, Լիտվա, Լատվիա, Վրաստան:

Բերված տվյալների շարժման ակնհայտ է նաև մահմեդական երկրների բնակչության աննախադեպ բարձր տեմպերով աճը՝ մինչև 60-70%-ով: Դրան հակառակ՝ այս ոլորտի փորձագետները կարծում են, որ նման միտումների շարունակականության պարագայում վտանգավոր գոտում կհայտնվեն այն երկրները, որտեղ բնակչության նվազումը կհասնի 25-30%-ի, որը, ըստ էության, այդ երկրների ազգային լինելիության իրական վտանգի կարող է հանգեցնել:

Չանդրադառնալով բնակչության արտագաղթի պատճառներին ու հետևանքներին՝ միայն փաստենք, որ նախկին խորհրդային երկրներից, այդ թվում և Հայաստանից, արտագաղթը հիմնականում դեպի Ռուսաստան է: Միայն 2018 թ. ՌԴ քաղաքացիություն է ստացել. Ուկրաինայից՝ 83081 մարդ, Ղազախստանից՝ 45362, Տաջիկստանից՝ 35732, Հայաստանից՝ 27134, Ուզբեկստանից՝ 21067, Մոլդովայից՝ 17071, Ադրբեջանից՝ 12152, Ղրղզստանից՝ 8793, Բելառուսից՝ 4708, Վրաստանից՝ 2502 և այլն:



### ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական արդարության հիմնախնդիրը բազմաբովանդակ հասկացություն է, որը դարեր շարունակ գտնվել ու ներկայումս էլ գտնվում է փիլիսոփայության, տնտեսագիտության, իրավագիտության, սոցիոլոգիայի, հոգեբանության և շատ այլ գիտությունների հետազոտության տեսադաշտում: Տնտեսագիտության մեջ սոցիալական արդարության հիմնախնդիրն առավելապես կապվում է հասարակության եկամուտների արդարացի բաշխման սկզբունքի հետ, որը պետք է արտահայտվի հասարակության բոլոր անդամների կենսամիջոցների և իրավունքների հավասարությամբ:

Եկամուտների հավասարությունը, շատերի կարծիքով, մարմնավորում է սոցիալական արդարության բովանդակությունը: Ըստ տնտեսական բարեկեցության տեսության արդարացի է համարվում եկամուտների այնպիսի բաշխումը, որի արդյունքում հասարակության յուրաքանչյուր անդամ մեկ ուրիշի ունեցվածքն ու եկամուտները չի գերադասում իր ունեցվածքից:

Համաձայն ժամանակակից տնտեսագիտական ըմբռնումների սոցիալական արդարությունը ոչ թե եկամուտների հավասարության մեջ է, այլ՝ հավասար աշխատանքային ջանքերի ու ներդրումների դիմաց հավասար եկամուտներ ստանալու իրավունքի մեջ: Առավել ևս, որ շուկայական տնտեսավարումը և եկամուտների հավասարությամբ գնահատվող սոցիալական արդարությունը միմյանց հակադիր երևույթներ են համարվում, քանի որ «սոցիալական արդարություն, թե՞ տնտեսական արդյունավետություն» երկընտրանքում նախապատվությունը տրված է արդյունավետ տնտեսավարման ապահովմանը:

Ներկայումս ՀՀ Կառավարության կողմից իրականացվող տնտեսական բարեփոխումների հիմքում մասնակցային կամ ներառական տնտեսական աճի մոդելին անցումն է, որը ենթադրում է ոչ միայն հասարակական արդյունքի ստեղծմանը բոլորի հնարավորությունների իրավահավասար ներառվածություն և հավասար մրցակցային մեկնարկային պայմանների ապահովում, այլև ստեղծված հասարակական արդյունքի կամ «կարկանդակի բաշխմանը» բոլորի արդարացի մասնակցության ապահովում, որոնք կնպաստեն հասարակության մեջ սոցիալական արդարության և սոցիալական համերաշխության սկզբունքների արմատավորմանը: Այս առումով անհրաժեշտ ենք համարում համառոտակի ստուգաբանել նշված հասկացությունները:

Եկամուտների շուկայական բաշխման սկզբունքի համաձայն՝ սոցիալական արդարությունը եկամուտների այնպիսի բաշխումն է, որն ապահովում է արտադրության յուրաքանչյուր գործոնի (աշխատանք, կապիտալ, հող, ձեռներեցության ընդունակություն) սեփականատիրոջ եկամտի համապատասխանությունը տվյալ գործոնի ներդրումից ստացվող սահմանային արդյունքին: Այս դեպքում եկամուտների անհավասարությունը և դրա խորացումը համարվում են ոչ միայն անխուսափելի, այլև տնտեսապես արդարացված, քանի որ շահադրդում են հասարակական արդյունքի ծավալների ավելացմանը և շատ ավելի են նպաստում հասարակության բարեկեցության բարձրացմանը, քան եկամուտների հավասարական բաշխումը, որը թուլացնում է աշխատանքի նկատմամբ նյութական խթաններն ու շահադրդիչները:

Սոցիալական համերաշխությունը սոցիալական արդարության ժամանակակից ըմբռնումներից է և ենթադրում է հասարակության բոլոր անդամների սոցիալական ապահովվածության նվազագույն մակար-

դակի և աղքատության սահմանից ոչ ցածր եկամուտ ստանալու երաշխիքներ: Այս դեպքում, հասարակության սոցիալական բևեռվածությունը հարուստների և աղքատների, օրինաչափ է, և վերջիններս իրենց համարում են հասարակության իրավահավասար և լիարժեք անդամներ, քանի որ գտնվում են պետության հոգածության ներքո: Հասկանալի է, որ սոցիալական համերաշխությունը, որին ձգտում է հասնել նաև մեր հանրապետությունը, տասնամյակների խնդիր է: Այնուհանդերձ, ՀՀ Կառավարության սոցիալական քաղաքականության գերակա խնդիրներից է ապագայում սոցիալական համերաշխության հասարակության ձևավորումը, որի համար կարևորվում են հետևյալ առաջնահերթ լուծումները.

1. Հնարավորություն ստեղծել, որպեսզի յուրաքանչյուր ոք կարողանա ազատորեն դրսևորել բարիքներ ստեղծելու իր հնարավորություններն ու տաղանդը, որի արդյունքում Հայաստանը պետք է դառնա *հավասար հնարավորությունների և ոչ թե հավասար եկամուտների երկիր*:

2. Պայքարել ապօրինի հարստացման մեխանիզմների դեմ և ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ հարստանալ հնարավոր է միայն օրինական ճանապարհով, որն աստիճանաբար կփոխի հարուստների և հարստության նկատմամբ հասարակության ներկայիս բարոյահոգեբանական վերաբերմունքը:

3. Պետությունը պետք է հոգա այն սոցիալական խավերի կարիքները, որոնք տարբեր պատճառներով ի վիճակի չեն օգտվել պետության ընձեռած հավասար հնարավորություններից և ստեղծել իրենց արժանապատիվ կյանքի համար անհրաժեշտ պայմաններ:

Հուսանք, որ մոտ ապագայում սոցիալական արդարության և սոցիալական համերաշխության սկզբունքները կդառնան նաև մեր հասարակության համակեցության բաղադրիչները և քաղաքակիրթ հասարակության ձևավորման երաշխիքները:

### ՀՀ-ՈՒՄ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԿԴԱՌՆԱ 68 ՀԱԶ. ԴՐԱՄ

Նվազագույն աշխատավարձը Հայաստանում 2020 թ. հունվարից կբարձրանա և ներկայիս 55 հազ. դրամից կդառնա 68 հազ. դրամ: Այս բարձրացումը կանդրադառնա շուրջ 80 հազ. մարդու վրա, որոնք 68 հազ. դրամից ցածր աշխատավարձի սանդղակում են գտնվում (շուրջ 35 հազ. մարդ բյուջետային համակարգից սնվողներ են, 45 հազ. մարդ՝ ոչ պետական հատվածի աշխատողներ):

Նվազագույն աշխատավարձի տրամաբանությունը պետք է բխի տվյալ երկրում նվազագույն սպառողական զանբյուրղի արժեքից, որն ըստ էության համահունչ է մեր հանրապետության այսօրվա իրավիճակին:

Նվազագույն աշխատավարձի սահմանումը վարձատրության նվազագույն շեմի՝ պետականորեն երաշխավորված մակարդակն է, որը պետք է ապահովվեն ոչ միայն պետական, այլև՝ ոչ պետական կազմակերպությունները: Նվազագույն աշխատավարձի 68 հազ. դրամ սահմանումը ՀՀ պետական բյուջեի համար լրացուցիչ 2 մլրդ դրամի ծախս կհանդիսանա, որը կնպաստի բնակչության աղքատության որոշակի կրճատմանը:

### ՍԱՄԿԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ





### «#դատապարտված\_ենք\_սովորելու ինչպես ուսյալ բանտարկյալներ»

*#արի\_ժող, որ հանոգվես, որ մեր ուսանողները նույնիսկ քայլելիս և երազելիս են տարբերվում ....*

Գիտե՞ս՝ շատ հետաքրքիր է կյանքը. այն իր հետ բերում է նոր անուններ, նոր դեմքեր՝ ծանոթ, անծանոթ: Բերում է նոր միջավայր, նոր մարդկանց ու նոր երազանքներ: Իրականությունն դարձրու քո երազանքները, պահը վրա է հասել՝ բարի գալուստ ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ:

Սեպտեմբերի 2-ին մասնաճյուղում տոն էր: Բոլորը գեղեցկացել էին, ստացել տոնական տեսք և նոր ուսումնական տարվա առաջին օրը ներկայացել համալսարան: Ամենուր հնչում էին ջերմ բարևներ, կարոտած խոսքեր ու ողջույններ: Առաջին կուրսեցիները՝ շփոթված ու հուզված, մի քիչ էլ վախեցած հայացքներով փնտրում էին իրենց լսարանները: Իսկապես, երազկոտ ուսանողի հայացքից մինչև սարսափած ուսանողի հայացքը ընդամենը մեկ քայլ է:

Ինչպես նախատեսված էր, ժամը 9:00-ին ուսանողներին ողջույնի ջերմ խոսքեր հղեց ՀՊՏՀ ԳՄ-ի տնօրենի պաշտոնակատար Կարեն Պետրոսյանը:

Առաջին դասաժամին ուսանողների համար ընթերցվեցին **կատակ-կանոնները**... դա ուղղակի տեսնել էր պետք: Դե՛ ինչ, տեսնենք.

- Չկտրել լսարանի տեսախցիկները:
- Ուսանողը քննության նախորդ օրը պետք է լինի offline ռեժիմում: Այն ստուգվում է online հանձնաժողովի կողմից:
- Անվճար սովորող ուսանողների կրթաթոշակները կհարկվեն:
- Տնօրենի սենյակի մոտ աղմկելը խստիվ արգելվում է:

վում է: Աղմկողը կպատժվի օրենքի «տարրի» համաձայն:

- Դաս լսելիս չերազել:
- Ի գիտություն բոլոր ուսանողների՝ դասի ժամին արգելվում է մաստակ ծամել, բացառությամբ այն դեպքերի, երբ ծամելիս չի շարժվում ստորին ծնոտը:
- Դասաժամին, քանի դեռ դասախոսը չի կորցրել ինքնատիրապետումը, ուսանողը չպետք է կորցնի հույսը:
- Դասախոսներին դիմել «պատվելի»-ով:
- Ուշադիր եղեք դասախոսի թևին կապված թևնոցի գույնին. եթե կարմիր է՝ օրը սկսվում է վատ, եթե կանաչ է՝ հաջող օր է, իսկ եթե դեղին է՝ շնորհավորում են՝ դու այլևս ուսանող չես:
- Յուրաքանչյուր աշխատասենյակ մուտք գործելուց առաջ դուռը թակել 3 անգամ, ԴԱՆԴԱԴ:

Մասնաճյուղի հետնամասում ուսանողներին սպասվում էր անակնկալ՝ ժպտացող աչքեր, լայն ժպիտներ, զարդարված բակ և հոլիվուդյան կարմիր գորգի վրայով քայլող ուսանողներ .... Ինչ խոսք, հրաշալի օր էր:

**«Սիրելի՛ առաջին կուրսեցիներ, սրտանց շնորհավորում են ձեզ Հայաստանի լավագույն բուհերից մեկն ընդունվելու առթիվ: Ուզում են վստահեցնել, որ դուք այսօրվա հաղթողներն եք».** սա էր գլխավոր ուղերձը:

Հաղթող եղիր, բարեկանս, գրկի՛ր քեզ բաժին հասած էս կյանքն ու ամուր, արժանապատիվ քայլի նրանով, որ ինքը կողքովդ չանցնի:

Ինքս էլ ոչ վաղ անցյալում եղել են առաջին կուրսեցի և իմ հուշերում դեռ վառ են ուսանողական մեծ կյանք մտնելու բերկրանքը հավերժացնող ակնթարթները: Մաղթում են, որ ձեր ուսանողական տարիները լինեն բազմազան ու հետաքրքիր, որ մի ակնթարթ անգամ չզղջաք հենց այս բուհն ընտրելու համար:

Քայլում էին կարմիր գորգի վրայով՝ ինչպես հայտնի աստղերը, նկարվում էին #դատապարտված\_ենք\_սովորելու՝ ինչպես ուսյալ բանտարկյալները կարգախոսի ներքո, իսկ երազելիս չէին բարձրաձայնում, որովհետև երազանքները թռչելու հատկություն ունեն: Դրա համար մեր ուսանողները իրենց երազանքները գրի առան թղթի վրա և գցեցին երազանքի սրվակի մեջ:

Այս ամենը պատմելով չեք պատկերացնի... պարզապես պետք էր ներկա լինել: **Սիրեն Գը ժողս...**

Արփինե Մխիթարյան  
Գործարար վարչարարություն,  
1-ին կուրս, մագիստրատուրա



### Էլեկտրոնային միասնական հարթակ կամ Ուսանող.am ՀՊՏՀ ԳՄ-ից

- Դասախոսությունների տեքստերի բազմազման համար ժամերով տպագրատանը սպասելուն:
- Գնահատականներն իմանալու համար ավագի ու դասախոսի հետ բանակցություններին:
- Բացակայության պարագայում առաջադրանքներն իմանալու համար հերթով կուրսեցիներից հարցում կատարելուն...

Մեզ մոտ շարունակում են զարգանալ ու զարգացել:

Անցում ենք կատարում էլեկտրոնային միասնական հարթակի, որի կիրառությունը դասախոսներին ու ուսանողներին ներկայացրեցին ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի աշխատակիցները:

Այսուհետ յուրաքանչյուր կուրս ունի միայն իր համար բացված էլեկտրոնային հասցեն, որտեղ կարող են մուտք գործել միայն տվյալ կուրսի ուսանողներն ու այն դասախոսները, որոնք այդ կուրսում դասավանդում են տվյալ ուսումնական տարում: Մուտք գործելով էլ.փոստ (gmail-drive) կգտնեք՝

- դասախոսությունները,
- առաջադրանքները,
- գնահատման թերթիկը՝ գնահատականներով,
- տվյալ առարկայի հարցաշարը,
- անհատականների ու գիտահետազոտական աշխատանքների թեմաները,
- տվյալ առարկայի շրջանակներում գրականություն,
- ուսումնամեթոդական ծրագրերը:

Ասում են՝ տարին ինչպես սկսես, այնպես էլ կավարտես, իսկ մենք մոր ուսումնական տարին սկսում ենք նորարարություններով ու հստակ համոզմամբ, որ ՀՊՏՀ ԳՄ-ում սովորելը հաճույք է լինելու:

### Տնակից տուն մեկ քայլ է, սոցիալական

#### պատասխանատվության եւս մեկ քայլ

3-րդ հարկի ճեմարահ, երկար դասամիջոց, բազմատեսակ, առատ ու համեղ խորտիկների բույր... սա նշանակում է, որ ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղում կրկին #Յամեղ ընդմիջում է:

Կարկանդակների պակաս չկար, իսկ մատուցման, հաճախորդին իրենց կողմը գրավելու համար էլ մարքեթինգային քայլերը վաղուց էին մտածել, կողմնորոշվել ու ընտրությունը դժվար էր:

Կառավարում 4-րդ կուրսի ուսանողներն առաջարկում էին արագ, բայց միևնույն ժամանակ թարմ



սնունդ. բուրգերներ, որոնք տաքացվում էին հենց հաճախորդի աչքի առջև՝ միկրոալիքային վառարանում:

Կառավարում մասնագիտությամբ սովորող առաջին կուրսեցիների տաղավարում էլ հնարավոր էր քաղցը մի լավ հագեցնել՝ սմբուկից մինչև քաղցրավենիք ճաշակելով: Ուսեստների բազմազանությունը հաճախորդներին երկար ժամանակ պահում էր տաղավարում:

Իսկ ահա, ֆինանսներ առաջին կուրսի ուսանողների տաղավարի մոտ գրեթե միշտ հերթ էր կուտակված:

«Զգուշացեք, ներսում ձեզ սպասում է թղթե հարձակում» գրությունը հակառակ ազդեցությունն ուներ: Բոլորը փորձում էին այն կարկանդակները, որոնց մեջ հայտնաբերում էին խորհուրդներ ու բարենախոսություններ:

Առաջին կուրսեցիները պահպանել էին նաև ազնիվ առևտրի կանոնները: Յուրաքանչյուր գնումից հետո հաճախորդը ստանում էր խորհրդանշական կտորոն, որը շատ հաճախ նաև շահումով էր:

Վերջին տաղավարն էլ ֆինանսներ 3-րդ կուրսինն էր: Այստեղ աչք էին ծակում թվածաբալիթից պատրաստված տնակները՝ դասախոսների անուններով:

Ուսանողներն ասում են, որ խորհրդանշական տնակ գնելով՝ անձը հնարավորություն ունի տնակից տուն տեղափոխել մեկ գյումրեցի ընտանիքի: Ոչ միայն այս, այլև բոլոր տաղավարներից ստացված հասույթը տրամադրվեց «Գյումրին առանց տնակների» հիմնադրամին:

Արդեն խորհրդանշական խճանկարի մոտ ուսանողներին միացան բուհի անձնակազմն ու դասախոսները՝ իրենց ներդրումներով ու միասին փակցրեցին խճանկարի այն կտորները, որոնց միջոցով ապացուցվելու է, որ տնակից տուն մեկ քայլ է:

**Լենա Զովհաննիսյան  
ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի  
հանրային կապերի պատասխանատու**



# TED հանրու թյու նը հավատում է գաղափարի ուժին

Սեպտեմբերի 29-ին տեղի ունեցավ երկար սպասված TEDxASUE միջոցառումը՝ «Կոտրելով սահմանները» կարգախոսի ներքո:

ՀՊՏՀ ռեկտորի պաշտոնակատար Դիանա Գալոյանը, ողջունելով ներկաներին, նշեց. «Հարգելի հյուրեր, ներկաներ, ուրախ եմ, որ այսօր ՀՊՏՀ-ն հյուրընկալում է TEDxASUE միջոցառումը: Մենք վստահ ենք, որ նմանատիպ միջոցառումները մեր համալսարանում շարունակական են լինելու այն նախաձեռնող ուսանողների շնորհիվ, ինչպիսին ֆինանսական ֆակուլտետի ուսանողուհի Գոհար Գրիգորյանն է, ով ՀՊՏՀ-ի հետ համատեղ երկարատև և արդյունավետ համագործակցության արդյունքում հաջողությամբ կազմակերպեց այս միջոցառումը, որը զարգացման ճանապարհին մի կարևոր քայլ է և բուհում իր տեսակի մեջ առաջինը: TEDxASUE-ն իրականացվում է TED միջազգային գրասենյակի տրամադրած լիցենզիայի հիման վրա: TEDx զրույցները ուսուցողական են, տեղեկատվական, որը ենթադրում է, որ մեր համալսարանը ֆորմալ կրթությանը զուգահեռ մեծ կարևորություն է տալիս ոչ ֆորմալ կրթությանը և: Վերջինս իր ոչ պակաս կարևոր ներդրումն է ունենում անձի ինքնագարգացման, կատարելագործման ծանապարհին, նպաստում է նաև համալսարանական կյանքի աշխուժացմանը, նոր հնարավորություններ է ստեղծում տարբեր ոլորտի մասնագետների միջև ցանցի ստեղծման և հետագա համագործակցության հեռանկարի տեսանկյունից»:

Միջոցառումը վարեցին Գոհար Կարապետյանը (ՀՊՏՀ շրջանավարտ) և Հայկ Քալանթարյանը (ՀՊՏՀ ուսանող):

Առաջին խոսնակը Հայարփի Սահակյանն էր՝ ձախողումների թեմայով, ապա Արեգ Միքայելյանը՝ աստղագիտության, Գոհար Հայրապետյանը՝ կանանց նվիրված, էմմանուել Ղանդիլյանը՝ բիոտպագրության:

Ընդմիջմանը հյուրերը լուսանկարվեցին TEDxASUE մամուլ պատի հետնապատկերին՝ օգտագործելով կամավորական թիմի պատրաստած photo booth-երը, մասնակցեցին խաղի, ստացան մրցանակներ, շփվեցին խոսնակների հետ, ծանոթություններ հաստատեցին:

Միջոցառման երկրորդ մասում Արման Աթոյանն անդրադարձավ լրացված և վիրտուալ իրականության ներկային և ապագային, Ռազմիկ Սարգսյանը՝ coaching (անձի վերակերտում, ներուժի բացահայտում, փոփոխություններին աջակցություն) թեմային: Ռուբեն Հայրապետյանը խոսեց տնտեսագիտական կրթության, դրա կարևորության, ամկա մարտահրավերների և դրանք հաղթահարելու մասին: Վերջին խաղաղության թեմայով հանդես եկավ Նարինե Վարդանյանը:

**Ֆինանսական ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողուհի Գոհար Գրիգորյանը, ով նախաձեռնեց և միջազգային կապերի բաժնի հետ համատեղ կյանքի կոչեց այս միջոցառումը, «Տնտեսագետի» հյուրասենյակում է:**

**– Գոհար, հաջողված, աննախադեպ և իսկապես բարձր նշանոթի սահմանը գերազանցած միջոցառումը առիթ է, որ TED-ի փակագծերը (ուղղակի՝ հապավման և անուղղակի՝ գաղափարի իմաստով) այսօր բացվեն ավելի լայն լսարանի համար, ներկայացվի այն առանցքային հենքը, որի վրա ձևավորվել է կազմակերպությունը:**

– Շնորհակալ եմ նման բարձր ու հաճելի գնահատականի համար: TED-ը ոչ առևտրային կազմակերպություն է, որը զբաղվում է արժեքավոր գաղափարների տարածմամբ (կարգախոսը՝ Ideas worth spreading): Գաղափարների տարածումը իրականացվում է կարճ և ազդեցիկ ելույթների միջոցով:

TED-ն առաջին անգամ անցկացվել է 1984 թ. փետրվարին, Ռիչարդ Սաուլ Ուուրմանի կողմից՝ որպես տեխնոլոգիաների (technology T), զվարճանքների (entertainment E) և դիզայնի (design D) մասին գիտաժողով, իսկ այսօր այն ներառում է



գոյություն ունեցող գրեթե բոլոր թեմաները՝ ավելի քան 100 լեզուներով: TED-ը միջազգային հարթակ է, որը ողջունում է բոլոր նրանց, ովքեր աշխարհին ավելի խորը հասկանալու և, իհարկե, իրենց փորձառությունը աշխարհի հետ կիսելու ձգտում ունեն:

TED հանրությունը հավատում է գաղափարի ուժին. այն կարող է փոխել վերաբերմունքը, կյանքը և ի վերջո՝ աշխարհը:

Այն ներառում է TED Audacious project-ի կողմից իրականացվող ծրագրերը, TED ելույթները, TED թարգմանիչների հանրությունը, TED և TEDx կոնֆերանսները, TED-ED դասընթացների շարքը, որոնցից յուրաքանչյուրն ուղղված է մեկ մեծ նպատակի՝ տարածել արժեքավոր գաղափարներ: Հուսամ ՀՊՏՀ-ն կկարողանա ներառվել այս բոլոր ծրագրերում և առավելագույն օգուտ ստանալ TED-ը որպես ոչ ֆորմալ կրթության մեծ հարթակ օգտագործելով:

**– Պատմիր, խնդրեմ՝ ինչպե՞ս հարեցիր այդ կազմակերպությանը, մասնավորապես՝ ինչպե՞ս ծնվեց TEDxASUE համագործակցության գաղափարը:**

– Ըստ էության, յուրաքանչյուրը, ով գնահատում և արժևորում է այլոց գաղափարները, ինչ-որ չափով հարում է TED-ին: Այլ հարց է, թե ով ինչ չափով է մասնակցություն ունենում կազմակերպության ծրագրերին: ՀՊՏՀ-ում սովորելու մեկ

ու կես տարվա ընթացքում նկատել էի, որ համալսարանում շատ խնդիրներ կան, որոնք հնարավոր է լուծել միայն ավելի լայն ու բազմաշերտ մտածելակերպ ձևավորելով, իսկ TED-ի ծրագրերը հենց դրան են նպաստում: Նպաստում են, որ մարդն իրեն ամենահաճելի տարբերակներով սովորի. տանը նստած հոլովակ դիտելով, հետաքրքիր միջոցառումների մասնակցելով և այլն, կարողանա բացել իր մտքի սահմաններն ու դուրս գա իր կամ հասարակության կողմից ստեղծված կաղապարից: Երբ գիտակցում ես, որ այն, ինչ կարող ես անել, օգտակար կլինի ընկերներիդ, դասընկերներիդ ու համալսարանիդ, չանելն այդքան էլ ճիշտ որոշում չէ, ու ես որոշեցի ճիշտ վարվել: Գաղափարը ծնվեց օգտակար լինելու ցանկությունից, և չէի էլ կասկածում՝ սկսե՞լ, թե՞ ոչ:

TEDxASUE-ն ինքնանպատակ չէր, միջոցառում չէր միայն միջոցառում անելու համար. այն արվեց հստակ նպատակով՝ օգուտ տալ ՀՊՏՀ-ականների և գաղափարների զենեքացման, տարածման, կրթա-

պետյանն ինձ տվեց միջոցառումն իրականացնելու և ASUE հապավումը լիցենզիայի ստացման գործընթացում օգտագործելու թույլտվությունը: Միջազգային կապերի բաժնի պետ Վարդ Ղուկասյանը, կազմածս նախնական ծրագրին ծանոթանալով, ասաց. «Սկսի՛ր, լիցենզիան կստանաս՝ կանենք»: Ստացա ու արեցինք:

Աշխատանքը երկար էր, փուլեր կային, որ շատ դժվար էր երկրորդ կուրսի ուսանողի համար, բայց թե՛ Վարդ Ղուկասյանը, թե՛ արտաքին ղեկարտամենտի նախկին տնօրեն Պարույր Ջանգուլյանը միշտ օգնում ու աջակցում էին ու ոչ թե գործը իմ փոխարեն անելով, այլ ճիշտ ու գրագետ ուղղորդելով, ինչի արդյունքում ինձ համար ոչ թե ղեկավար դարձան, այլ մենթոր: Յուրաքանչյուր ուսանողի համար լավագույնը, որ կարող է լինել, հարազատ բուհում մենթորներ գտնելն է: Ես հաջողակ եմ, քանի որ մեկի փոխարեն երեքին եմ գտել. նրանք հավատացին, վստահեցին ու օգնեցին ինձ. ուսանողին դիտարկեցին որպես հավասարը հավասարին:



կան ծրագրերին թարմություն, դասապրոցեսին հետաքրքրություն, իսկ համալսարանական կյանքին աշխուժություն ավելացնելու համար: Այս ամենի արդյունքը կարճաժամկետում գոհացուցիչ է. միջոցառումը հաջողվեց, իսկ հաջողությունը ավելի կարևոր կետերով գնահատելու համար դեռ շատ ժամանակ է հարկավոր. պետք է հասկանալ, թե ՀՊՏՀ-ականները որքանով կկարողանան օգուտ քաղել TED-ի ընձեռած լայն ու անվճար հնարավորություններից:

**– Հավանաբար, գտար ընկերներիդ մեջ համախոհներ, և նրանք քո կողքին էին այս նախաձեռնությունը կյանքի կոչելիս: Արդյո՞ք դուրսից էր միջոցառումը կազմակերպելը և ի՞նչ խոչընդոտների հանդիպեցիր:**

– Ընկերներս սովոր են, որ ես իմ որևէ նախաձեռնություն երկար քննարկել չեմ սիրում և ինչպես միշտ այս անգամ էլ տեղեկացան ու առանց երկար բարակ հարցեր տալու կանգնեցին կողքիս: Ինչ վերաբերում է համախոհներին՝ կասեմ, որ նրանք ոչ միայն ընկերներս էին, այլև բուհի ղեկավարությունը. նամակ-դիմումից շատ կարճ ժամանակ անց Ռուբեն Հայրա-

Ամենածանրը թերևս վերջին մեկ ամիսն էր, քանի որ նախորդ ամիսների աշխատանքը սկսում էր առարկայական դառնալ, ու շնորհակալ եմ ղեկավարությանն ու աշխատանքներում ներգրավված բաժինների բոլոր աշխատակիցներին իրենց աջակցության համար:

**– Ինչպե՞ս կմեկնաբանես «Կտրելով սահմանները» կարգախոսը, ո՞ր սահմանների մասին է խոսքը (չլուսաբանված կամ չձևակերպված հիմնախնդիրներ, խոսքի ազատություն, աշխարհագրական սահմաններ, միջամտման շփումներ):**

– Երևի թե այս անգամ էլ չեմ բացի փակագծերն ու չեմ ասի թե ինչու եմ հենց սա ընտրել: Փոխարենը կարող եմ ավելի հետաքրքիր մեկ այլ փաստ նշել. թե՛ մասնակիցների, թե՛ խոսնակների, թե՛ կամավորների հայտադիմումների մեջ կար պարտադիր լրացման ենթակա մի տող՝ «սահմանները...». և, որքան էլ զարմանալի է, 700-ի հասնող հայտերի մեջ երկու միանման պատասխան չկար: Ինձ համար սա կարևոր էր, քանի որ ընտրված կարգախոսը, փաստորեն, հոգեհարազատ էր շատերին:

**– Ի՞նչ սկզբունքով է կատարվել մասնակիցների, թեմաների, խոսնակների ընտրությունը:**

– Թեմաները ընտրվել են երկար քննարկումների արդյունքում: Միջոցառման նախնական ծրագիրը TED գրասենյակի կողմից հավանության էր արժանացել, աշխատանքի ընթացքում կատարելագործվեց, ու ստացանք ծրագիր, որտեղ ներառվեցին ութ տարբեր թեմաներ՝ տարբեր ճաշակի ու հետաքրքրության տեր մարդկանց համար: Թեմաների ընտրության հարցում միակ դժվարությունը եղել է այն, որ դրանց թիվը պետք է սահմանափակ լիներ, իսկ միակ նախապայմանը «Կոտրելով սահմանները» կարգախոսի ներքո առավելապես հետաքրքիր լինելն էր:

Խոսնակներից յոթը հրավիրյալ էին. ոմանց առաջարկել էի ես, ոմանց ընտրել էինք քննարկումների ընթացքում: Մեզ համար մի բան հստակ էր. խոսնակները չպետք է ընտրվեն միայն մեր ցանկությանը, և մենք որոշեցինք հայտադիմում բացել ու ընդգրկել բոլոր նրանց, ովքեր կարգախոսի ներքո կարող են իրենց գաղափարները ներկայացնել աշխարհին:

Հայտադիմումի արդյունքում ընտրվեց մեկ խոսնակ, ում, հայտ չբացելու պարագայում, մենք հազիվ թե կարողանայինք գտնել: Հայտ ուղարկողների մեջ կային մարդիկ, ովքեր հիանալի խոսնակներ կարող էին լինել TEDx-ի համար և, համոզված եմ հետագայում լինելու են, սակայն մեր միջոցառման համար, կարգախոսի շրջանակներում, ստիպված էինք ընտրել ամենահամապատասխան թեման, և արդյունքում ընտրվեց մեկը:

Մասնակիցներին ևս ընտրել ենք հայտադիմումով. դիտարկել ենք նրանց հետաքրքրությունը միջոցառման ու նոր գաղափարների նկատմամբ:

Իսկ ահա կամավորները ընտրվել են շատ երկար ու յուրօրինակ հայտադիմումի, հարցազրույցի, հոգեբանական թեստեր լրացնելու, մի խոսքով՝ շատ երկարատև գործընթացի արդյունքում, և, իմ զնահատմամբ, կարող ենք հպարտանալ, որ կամավորական թիմը, որը ձևավորեցինք վերջին մեկ ամսում, աննկարագրելի պայծառ անհատականություններից է բաղկացած:

**– Ի՞նչ արձագանքներ եղան միջոցառումից հետո և հետադարձ կապի հնարավորությունը ի՞նչ հետևությունների է հանգեցրել աշխատանքային թիմին:**

– Լավագույն արձագանքը, որ կազմակերպիչը կարող է ստանալ, հանդիսատեսի ոգևորված, հիացած (մեր դեպքում նաև հուզված) դեմքերը տեսնելն է. այդ ամենը մենք վայելեցինք: Արձագանքները շատ են, հաճելիորեն դրական. կարծում եմ TEDx-ASUE-ի տված պտուղները կամավորական թիմն ու մասնակիցներն անպայմանորեն քաղելու են տարբեր առումներով:

**– Նոր գիտելիք, նորաստեղծական գաղափարներ կրող և տարածող երիտասարդներից ի՞նչ խորհուրդ կուղղես:**

– Մեր խոսնակներից մեկն իր ելույթն ավարտեց հետևյալ խոսքով. «Եղե՛ք նախաձեռնող, մի՛ վախեցե՛ք սխալվելուց, փորձե՛ք լինել բացառիկ և եղե՛ք բացառիկ»: Թերևս ավելի լավ ուղերձ ես ինքս չեմ կարողանա ձևակերպել:

**– Շնորհակալություն:**

Ձրուցեց Արմինե ՎԱՐԴԱՆՅԱՆԸ

**Լ Ի Ա Ն Ո Ս**



**Գ**եղարքունիքի մարզի Սարուխան գյուղի դպրոցում հոկտեմբերի 12-ին տեղի է ունեցել ՀՊՏՀ պրոֆեսոր, մշակութաբան, հայագետ Սուրիկ Սարգսյանին նվիրված հուշ-ցերեկույթ: Միջոցառումը կազմակերպել էին պրոֆեսորի համագյուղացիները՝ Սարուխան գյուղի մշակույթի տան ղեկավարությունն ու դպրոցի տնօրինությունը, նրա ընտանիքը, բարեկամներն ու հարազատները:

Ցերեկույթին ՀՊՏՀ-ից մասնակցել են Սուրիկ Սարգսյանի երկարամյա գործընկեր ու մտերիմ ընկեր, ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ, պրոֆեսոր Արամ Սարգսյանը և համակուրսեցի, դոցենտ Սարգիս Հայրապետյանը:

Մշակույթի պատվո պատին ամրացվել է Սուրիկ Սարգսյանի հուշատախտակը, հասարակագիտական հոսքի լավագույն աշակերտի համար սահմանվել է միանվագ կրթաթոշակ, ինչպես նաև դպրոցի դասարաններից մեկն անվանակոչվել է նրա անունով:

*Ուսանկարը տրամադրել է Արամ Սարգսյանը:*

**Մ**արքեթինգ մասնագիտության 3-րդ կուրսեցիները «Մարքեթինգային էթիկա» առարկայի շրջանակում հոկտեմբերի 3-ին ունկնդրեցին «ՎիվաՍԵլ-ՄՏՍ»-ի ՄՌ պլանավորման և զարգացման բաժնի պետ Մարիանա Էդիլյանին, որին հրավիրել էր մարքեթինգի ամբիոնի դոցենտ Լիլիթ Քոլյանը: Ինքնակենսագրության մշակումը և հարցազրույցը այն կետերն էին, որոնց վրա կանգ առավ բանախոսը և հանգամանալից պարզաբանեց ինչպես և ինչու: Նա նաև տեղեկացրեց «ՎիվաՍտարտ» ուսուցողական ծրագրի մասին:

**Ա**սպիրանտ Ծովակ Ոսկանյանի նախաձեռնությամբ և ռեկտորի պաշտոնակատար Դիանա Գալոյանի աջակցությամբ հոկտեմբերի 7-ին բուհի հարակից այգում կազմակերպվել էր աստղադիտում: Դիտելով երկնային մարմիններ՝ ուսանողները նախնական գիտելիք ձեռք բերեցին տիեզերքի կառուցվածքի, երկնային մարմինների շարժի վերաբերյալ: Աստղադիտումը կազմակերպելուն աջակցել էր ուսանողների հետ տարվող աշխատանքների գծով ռեկտորի խորհրդական Լիլիթ Դադայանը: Ներկա են եղել Դիանա Գալոյանը, դասախոսներ:

**Մ**արքեթինգ և մարքեթինգային հաղորդակցություններ մասնագիտությունների մագիստրանտները հոկտեմբերի 10-ին ուսումնական պարապմունք են անցկացրել «Ռոստելեկոմի» գլխամասային գրասենյակում: Նրանք ընկերությունում հյուրընկալվել են մարքեթինգի ամբիոնի դոցենտ Լիլիթ Դադայանի հետ: Ընկերության արտաքին կոմունիկացիաների բաժնի ղեկավար Սիրանուշ Գյուրջինյանը ներկայացրել է «Հաղորդակցության տրանսֆորմացիան և ժամանակակից ընկալումները» խորագրով դասախոսություն, հանդիպում-քննարկումներ են տեղի ունեցել ընկերության ՄՌԿ դեպարտամենտի ղեկավար Անի Գրիգորյանի, հաճախորդների սպասարկման դեպարտամենտի ղեկավար Աննա Անանյանի և գովազդի գծով մենեջեր Քրիստինե Մարգարյանի հետ:



# ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՄԲ

Ջվարթնոց տաճարի որմնակամարաշարը, ամբողջությամբ շրջանցելով տաճարը, կիսավեր կառույցի ամրության, գեղեցկության, վեհության քարեղեն ներդաշնակությունն է փոխանցում: Խոյակներով պսակվող սյուներից յուրաքանչյուրն անկրկնելի է, ինքնատիպ, ուժ հաղորդող: Խորհրդանշական է, որ Ռաֆայել Երվանդյանը վերջերս լույս ընծայված «Մեծերի մշտական ներկայությունը» իր հուշապատումի շապիկը հենց այդ պատկերներով է ցանկացել ներկայացնել, այդպես է տեսել հայ արվեստի, գրականության, գիտության անվանի գործիչների մասին պատմող գրքի մուտքը: Յուրաքանչյուր սյունը՝ մի երկնուղեշ սլացք, բարձր ու ոգեղեն, հաջորդի հետ կամար կապելով, միասնության մեջ դառնում է ավելի ու ավելի գորեղ ու անհաղթելի:

Ռաֆայել Երվանդյանի նոր գիրքը ծնունդ է հայ մշակույթի, գիտության գործիչների հանդեպ հեղինակի անսահման սիրո ու ակնածանքի: Տարբեր հեղինակների հուշագրություններից քաղված ամեն առանձին պատմություն, հետաքրքրական դեպք ու դիպված, չվրիպելով նրա ամենատես աչքից, նրա հլու գրչի տակ, նրա դիպուկ լրացումներով բյուրեղացել է, զոհարակերտ փայլ, նոր շունչ ու համահավաք տեսք ստացել:

Գրքի նախապատրաստվող հրատարակության մասին «Տնտեսագետի» նախորդ համարում գրել էինք, սակայն այսօր, փոփոխված վերնագրով, այն մի նոր խորհուրդ ու բովանդակություն է ստացել՝ հաջորդելով նախորդ շրջանի գրքերին՝ **«Լակտոնների քիմիայի նահապետը»**, **«Մեր նոր դպրության աստեղային ժամը»**, **«Վերածննդի դարաշրջանի հայելին/Արվեստաբանություն»**, **«Անանց հուշեր»**, տասնյակ հոդվածներին ու պատմվածքներին և նախապատրաստելով նորերի ծնունդը. հեղինակը, 80-ամյակի փառավոր բարձունքում, սթափ մտքով, պայծառ հիշողությամբ, եռանդով ու աշխատասիրությամբ շարունակում է իր ակտիվ ստեղծագործական կյանքը և ապահովում հենց իր մշտական ներկայությունը մեր բոլորի, ընթերցասեր հասարակության կյանքում, ներկայություն, որը հագեցած է իմաստնությամբ ու բարությամբ:

Այդ ներկայությունն ապահովող օղակներից մեկն էլ «Տնտեսագետ» ամսագիրն է, որը 1977 թվականին Ռաֆայել Երվանդյանի հիմնադիր-խմբագրի մասնագիտական, մարդկային ուժով ու եռանդով դարձավ Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի պաշտոնաթերթը, որը շուրջ 30 տարի կյանք ու շունչ առավ խմբագիր-ուսուցչի շուրջ համախմբվող խմբագրակազմերի աշխատանքով՝ ձևավորելով տպագիր խոսքի, գրական աշխատանքի, լրագրության մշակույթ և ուրույն ձեռագիր: 2004 թվականին Ռաֆայել Երվանդյանի անմիջական հետևողականությամբ ու ջանքերով ծնունդ առավ նաև մեր համալսարանի գիտական պարբերականը՝ «Բանբեր ԵրՊՏԻ» (այժմ «Բանբեր ՀՊՏՀ») հանդեսը՝ դառնալով բուհում գիտական-հետազոտական աշխատանքի ու արդյունքի ներկայացման ու հրապարակայնացման հարթակ:

Ռաֆայել Երվանդյանի մարդկային արժանիքների ու ստեղծագործական տաղանդի մասին նրան ճանաչողներս երկար կարող ենք խոսել ու գրել, սակայն նրա մտքին ու հոգուն հաղորդակցվելու ճանապարհը այսօր նախևառաջ նրա ընթերցողը դառնալն է, ինքնակենսագրական պատումներով հեղինակին ճանաչելը, գեղագիտական ընդհանրացումներից ու հարուստ կենսափորձից նրա դասերը քաղելը:

Շնորհակալություն, պարոն Երվանդյան, Ձեր ինքնօրինակ, հարուստ ու հպարտ ներկայության համար, որը հավաստիացնում ենք՝ մշտական է ու ընդմիշտ... և երկնուղեշ խոյակազարդ սյուների խորհուրդն է իր մեջ ամփոփում:

Թող որ Ձեր կյանքի ութերորդ և գալիք տասնամյակները լինեն առողջ, արևաշատ ու նույնքան բեղմնավոր:

**ԱՐՄԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

*Սիրով ընթերցողին ենք ներկայացնում «Մեծերի մշտական ներկայությունը» հուշապատումից Կոմիտասի մասին պատմող ուշագրավ դրվագներ և կրկին տուրք մատուցում մեծ երգահանի հանճարին ու պայծառ հիշատակին:*

Ավերիք Բահակյան

«Մի գեղեցիկ օր էջմիածնում հյուր էի Կոմիտասի մոտ: Նստել էինք նրա փոքրիկ պարտեզում ստվերաշատ տանձենու տակ: Կոմիտասը նոր էր գտել «Մոկաց Միրզան» և մշակում էր այդ էպիկական հուժկու երգը: Շատ ոգևորված էր և երջանիկ էր զգում իրեն այդ գյուտով: Կատարեց ինձ մոտ արվեստի բարձր կատարելությամբ: Անկարելի է նկարագրել այդ: Ես հիացած էի և նույնպես երջանկացած: Դեռ մինչև այսօր հոգուս մեջ տեսնում եմ ոգևորված Կոմիտասին և լսում եմ նրա հոգեբուխ ձայնը...»

«Այդ երգը շատ հին երգ է, հեթանոսական դարերից. տես խոսքերն ու եղանակը ինչպես միաձուլվել են: Բարձր լեռներից, շառաչուն ջրերից, խոժոռ ժայռերից է ծագում առել: Մեր քաջ նահապետների հոգուց է բխել՝ այնքան հին է, որ Ձենով Օհանը երգել է, և Սասունցի Դավիթը՝ լսել...»

Եվ ուրախությունից փայլում էին Կոմիտասի աչքերը»:

Փանոս Թերլեմեյան

...Պոլսի Բանկալթիի թաղամասի Շիտակ փողոցում վարձակալած հարմարավետ տանը ապրում և ստեղծագործում էին երկու մեծատաղանդ այրերը՝ Կոմիտասը և Թերլեմեյանը:

«Օսմանյան հանրային գործոց նախարարի տեղակալը՝ ֆրանսիացի պ. Յյունբերը, որ հաճախ էր այցելում մեզ, «Քելեր, ցուլեր» երգելով էր բարձրանում սանդուղքները: Իտալացի համբավավոր դաշնակահարներ կային, որոնց հաճախակի հանդիպում էի Կոմիտասի սենյակում՝ խոնաված նրա աշակերտների հետ, ունկնդրելիս նրանց փորձերը»:

\*\*\*

«Մի անգամ, երբ իմ աշխատանոցում էի, խոհարարը եկավ, թե ոսկե զարդերով կառք կա կանգնած դռանը և քեզ են հարցնում: Վար իջա, տեսնեմ՝ կայսեր արարողապետ Իսմայիլ Ջանանի բեյը, որ կառքի միջից թույլտվություն խնդրեց նկարներս տեսնելու:

Բարձրացանք մեր տան երկրորդ և երրորդ հարկերը, ու նա ուշի ուշով դիտեց բոլոր նկարները: Իջնելիս, երբ Կոմիտասի սենյակի դռան առջևից էինք անցնում, ասացի՝ «Չէի՞ք բարեհաճում Կոմիտաս էֆենդիին ծանոթանալ»: Նա պատասխանեց. «Կուզեի, բայց կըրնա ըլլալ, որ խանգարեմ»: Ասացի. «Բնավ չեք խանգարի» և Կոմիտասի սենյակի դուռը բանալով՝ ներս հրամցրի: Նրանք ծանոթացան, և արարողապետը ոտքի վրա դիտեց այդ սենյակում կախված իմ նկարները:

Սուրճ խմելուց հետո ինձ դարձավ. «Չեմ համարձակվում, ապա թե ոչ, պիտի խնդրեի Կոմիտաս էֆենդիին որևէ մի բան նվագեր կամ երգեր»: Կոմիտասը, լսելով այդ կամացուկ և ֆրանսերենով ասված խոսքը, անմիջապես գնաց պիանոյի մոտ, ինքն իրեն ակորդներ վերցնելով՝ երգեց Շուբերտից գերմաներեն մի երգ, անչափ խորունկ զգացումով, որ մենք քարացել էինք: Նրա վերջացնելուց հետո էլ բավական ժամանակ լուռ էինք, երբ թուրքիո դիվանագետը, ինքն իրեն չկարողանալով զսպել, ձեռքը սեղանին խփեց և ասաց. «Sapristi!» (Գրողը տանի), ութ հարյուր տարվա պետություն ենք, ցարդ այսպիսի մի արվեստի և արվեստագետների տաճար չունեցանք»: Սուլթանական գործեր վարող այդ դիվանագետը մեկնեց սրտմտած: Նրա մեկնելուց հետո ես շնորհավորեցի Կոմիտասին այդ հաղթանակի համար և վեր կացանք երկուսս միասին «Լաչին նանա» պարեցինք»:

Տիգրան Չիթունի

«Միրտը նման էր էն փրլա՛ծ փրներ...»

«Այն ժողովուրդը, որ այդ պատկերը փռեց իմ տեսած ճամբուն վրայ, չի մահանար», - կըսեր, կը յեղյեղեր՝ դարձնել յետոյ՝ ամեն առիթով:

Ու կը պատմեր.

«Աքսորի ճամբուն վրայ, օր մը, - արշալոյսին, հազարաւոր հայերու հալածավար կարաւան մը, - կնիկ, տղայ, մեծ ու փոքր, բլուրի մը գլուխ գիշերած, առտուան նորածագ աղօթարնին շողերուն առաջ, յանկարծ՝ մէկ մարդու պէս՝ ծունկի եկան, գլուխ բաց, ձեռները երկինք տարածած, արտասուալից աչքերով, մեծ Բնութեան բաց տաճարին տակ, միաձայն դղրդացուցին՝

«Առաւօտ լուսոյ՝  
Արեգակն արդար,  
Առ իս լոյս ծագեա» շարականը...»:

– Այս մեծավայելուչ ու սրտագրաւ նկարը, կը թուի՝ երբեք չէղծուեցաւ Կոմիտասի հոգիի ու մարմնի աչքերէն: Ու այդ չէղծուած պատկերը, օրէ օր, յամրաբար կրծեց, փորեց, եղծեց նրա բանական տաճարն ու խորանը: Աքսորի ճամբայէն իր Բանին դագաղը Կոմիտաս հետն էր բերեր:

«Միրտը նման էր էն փրլա՛ծ տըներ,  
Կոտրե՛ր էր գերաններ, խախտե՛ր էր սըներ...»:

Ի՛ր իսկ ձայնագրած եղերաշունչ երգին նմանակ...





**«Աղետի գոտուց զարգացման գոտի՝ անցյալի դասերը եւ ժամանակի մարտահրավերները»...**

**ՀՊՏՀ ԳՄ առաջին միջազգային գիտաժողովը**

«Եզակի, աննախադեպ» այս բառերը լրատվամիջոցները ընտրեցին, երբ լուսաբանում էին ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի նախաձեռնությամբ կյանքի կոչված միջազգային գիտաժողովը և իսկապես այն եզակի էր իր ձևաչափով: Առաջին անգամ միախառնվել էին տնտեսագիտությունն ու երկրաֆիզիկան կամ ասել է թե՛ աղետը, խնդիրները, լուծման ճանապարհներն ու զարգացումը: Բայց, ի վերջո, թե ինչպես ծագեց նման ուղղվածությամբ գիտաժողովի գաղափարը, պարզաբանեց ՀՊՏՀ ԳՄ տնօրենի պաշտոնակատար Կարեն Պետրոսյանը. «*Գիտաժողովի գաղափարը ծագեց այն ժամանակ, երբ մենք քննարկում էինք, որ աղետից անցել է ավելի քան 30 տարի և մեզ համար կարևոր է հասկանալ, թե ինչ տեղի ունեցավ, ինչ փոխվեց և ինչպես կարող է գիտական միտքը աջակցել երկրի տնտեսական զարգացման հեռանկարների ձևակերպմանը: Եվ մենք ձեռնամուխ եղանք այս միջազգային գիտաժողովին*»:

Հատկանշական է, որ գիտաժողովը գործընկերների լայն շրջանակ ընդգրկեց: Բուհին իրենց աջակցությունը հայտնեցին Գ.Վ. Պլեխանովի անվան Ռուսաստանի տնտեսագիտական համալսարանը, Գյումրու գիտության և մշակույթի ռուսական կենտրոնը, Շիրակի պետական համալսարանն ու Գյումրու քաղաքապետարանը: Այսպիսով, իրականություն դարձավ ՀՊՏՀ ԳՄ առաջին միջազգային գիտաժողովը, որին մասնակցում էր ինչպես Հայաստանի, այնպես էլ արտասահմանյան ավելի քան 10 բուհերի 80 մասնակից 60 գիտական զեկուցումներով:

«Կարծում եմ, որ այս առանցքային խնդրին պետք է ուշադրություն դարձնել հենց մարզի կարևորագույն համալսարաններից մեկը՝ Տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղը: Ես մեծ հույս ունեմ, որ գիտաժողովից հետո և մոտ ապագայում մենք առիթ չենք ունենա այս տարածաշրջանը կոչելու աղետի գոտի, և այսուհետ այն մեզ համար կլինի զարգացման գոտի», - գիտաժողովի բացման խոսքում նշեց ՀՊՏՀ ռեկտորի պաշտոնակատար Դիանա Գալոյանը: Շարունակելով բուհի ղեկավարի միտքը՝ Կարեն Պետրոսյանն ավելացրեց, որ անցել են այն ժամանակները, երբ գիտաժողովների հոդվածները մնում էին թղթի վրա, այսօր դրանք պետք է հայտնվեն պետական կառավար-

ման մարմինների, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ու տեղական ինքնակառավարման մարմինների օրակարգում:

«Եթե գիտնականը ստեղծագործում է իր համար, ուրեմն այդ աշխատանքը այնքան էլ մոտ չէ գիտությանը, գիտնականը պետք է ստեղծագործի ժողովրդի ու պետության համար, որովհետև սա է մեր հայրենիքը ևս մեկ քայլով ավելի լավը դարձնելու տեսլականը», - ասաց Կարեն Պետրոսյանը:

Շիրակի մարզպետն ու Գյումրու փոխքաղաքապետը պատրաստակամություն հայտնեցին գիտաժողովի արդյունքներն ու հնչեցված առաջարկու-



թյունները օգտագործել մարզի ու քաղաքի ռազմավարությունը մշակելիս:


Երեք օր շարունակ 17 պրոֆեսոր, 36 դոցենտ, 18 գիտությունների թեկնածու, շուրջ երկու տասնյակ ասպիրանտ ու ռուսաճյուղ խոսեցին աղետի հետևանքներից, մարզի զարգացման խոչընդոտներից ու ցույց տվեցին բարգավաճման ուղին:

Ներկայացված առաջարկությունները շուտով հայտնվելու են պետական կառավարման մարմինների ու պարզապես շահագրգիռ անձանց սեղաններին, որ դառնան գործնական քայլեր ու Գյումրին և Շիրակը դադարեն աղետի գոտի կոչվելուց՝ հռչակվելով զարգացած ենթակառուցվածքներով, իրապես սպորտի, մշակույթի, ինովացիայի, զբոսաշրջության... զարգացման գոտի:

Լենա Հովհաննիսյան  
ՀՊՏՀ ԳՄ հանրային  
կապերի պատասխանատու

Համառ աշխատասիրությամբ և սեփական ուժերի հանդեպ անսպառ հավատով Ջորջ Պարկերը հեռագրային գործ դասավանդող շարքային ուսուցչից վերածույն է համաշխարհային խոշորագույն ընկերության հիմնադրի: «Պարկեր» (Parker) գրիչը դառնում է հաջողության խորհրդանիշ՝ արտահայտելով տիրոջ՝ այն գործածողի, կշիռն ու ճաշակը: Ջորջ Պարկերը ծնվել է 1863 թ. Շալսբերգում, ԱՄՆ-ի Վիսկոնսին նահանգում: 17 տարեկանում սկսել է աշխատել հեռագրային դպրոցում (որտեղ հետագայում բացել է իր երեք հիմնական արտադրական ձեռնարկություններից առաջինը): Դպրոցում աշխատավարձը ցածր էր, այն բավականացնում էր միայն առաջին անհրաժեշտության ծախսերի համար: Լրավճար ստանալու նպատակով Ջորջը դառնում է փետրավոր գրիչների վաճառքով զբաղվող The John Holland Fountain Pen Company ընկերության վաճառքի գործակալ: Հիմնական գնորդները նրա ուսանողներն ու գործընկերներն էին: Նրա վաճառած, ինչպես նաև մյուս բոլոր գրիչներն այդ ժամանակաշրջանում, անորակ էին, տեխնիկական թերություններ ունեին. թանաքը հոսում էր և գրչածայրին քիչ էր հասնում, հետևաբար՝ մշտական խնամքի ու նորոգման անհրաժեշտություն էր զգացվում: Բողոքներ ստանալով՝ Ջորջ Պարկերը պարտավորված է զգում վերանորոգել դրանք և կատարում է սիրով ու խնամքով: Նրա հեղինակությունը հետվաճառքային ծառայության շնորհիվ սկսում է աճել: Այնուհանդերձ, Պարկերը հասկանում է, որ թերություններն անընդհատ վերացնելու փոխարեն ավելի լավ է մեկընդմիջտ արմատախիլ անել դրանք: Եվ ահա անհրաժեշտ գիտելիքներով զինված՝ նա նախագծում և ստեղծում է առաջին սեփական փետրավոր գրիչը՝ որպես հիմնաքար հետագա վերընթաց ու զարգացող արդյունաբերության:

Սեկ տարի չանցած՝ Ջորջ Պարկերն արդեն գրիչների ոլորտում ձեռնարկատիրական գործունեությամբ էր զբաղվում: 1888 թ. ամերիկյան Ջեյնսվիլ քաղաքում ստեղծվում է Parker Pen Company-ին՝ իր առջև նպատակ դնելով լավագույն գրիչն արտադրել:



«ՊԱՐԿԵՐ»  
ԳՐԵՎՎՈՐ ԽՈՍՍԹԻ  
ՏԱՐԱԾՈՂՆ ՈՒ  
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ  
ԳՐԻՉԸ



1881-ին Ջորջ Պարկերը հանդիպում է ապահովագիր Ու. Պալմերին, որը սկսնակ գործարարին համոզում է 1000 դոլարով իրեն վաճառել ընկերության և պատենտում իր բաժնեմասի կեսը: Parker Pen Company-ի անունով դուրս գրված անդորրագիրը սկիզբ է դնում Պարկերի և Պալմերի միջև ծաղկուն ու եկամտաբեր գործընկերության: Սեկ տարի անց ընկերությունը պաշտոնապես գրանցվում է: Այդ պահը շրջադարձային է դառնում Պարկերի կյանքում, և երեք տարի անց ընկերությունը հեղինակում է կարևոր տեխնիկական նորարարություն՝ թանաքի փոխանցման lucky curve համակարգի տեսքով: Թանաքը մղող կոր խողովակը կանխում էր թանաքի արտահոսքը կամ չորացումը՝ շնորհիվ մազախողովակի հետպահման սկզբունքի կիրառման: Այս lucky curve համակարգը Parker գրիչներում կիրառվել է 34 տարի շարունակ: Սակայն իր գոյության ավելի քան 130 տարիների ընթացքում ընկերությունը երբեք կանգ չի առել ձեռքբերումների վրա. լավագույն գրիչի, կատարյալ գրող սարքերի ստեղծումը եղել է նրա զլխավոր նպատակն ու ձգտումը:

1899 թ. ընկերությունը մշակում ու պատենտավորում է առաջին **առանց միացումների** գրիչը՝ Jointless pen: Այն չունեի ակոսավոր միացումներ, որոնց պատճառով կարող էր կոտրվել և չունեի ճեղքեր, որոնցից կարող էր արտահոսք լինել: Jointless pen-ը մեծ ընդունելություն է գտնում: Հենց այս գրչով է Ջաջ Դեյր՝ Ամերիկյան խաղաղ կոմիսիայի նախագահը, իր ստորագրությունը դնում Խաղաղության մասին հայտնի համաձայնագրի մերթ՝ փետրվարի 10-ին Փարիզում:

1904 թ. ընկերությունը մշակում և մայիսի 3-ին արտոնագրում է թանաքի հավաքման մեխանիկական համակարգով (որն իրենից սովորական ռետինե պարկ էր ներկայացնում) առաջին գրիչը:

Ջորջ Պարկերը հասկանում էր, որ հաջողությունը մեծ է, սակայն երազում էր միանմյա առաջատար լինել: Նա «համաշխարհային շրջագայության» է դուրս

գալիս՝ ճանապարհին հիմնելով արտասահմանյան մասնաճյուղեր: Բոլոր ուժերն ուղղված էին ընկերության ընդլայնմանն ու հզորացմանը: Բայց դա չի խանգարում թողարկել THE better pen-ը (լավագույն գրիչ): 1905 թ. նորածն է դառնում Giant (հսկա) գրիչը. այն մարմնավորում էր փետուրով գրիչների ամփոփելի հեղինակության խորհուրդը: Դինոզավր գրչին Պարկերի պատասխանը լինում է Black giant-ը: Դա հսկա գրիչ էր՝ շարժական զլխիկով, սահուն անցումներով, լիցքավորվում էր կաթիչով և ուներ սովորական ակոսավոր միացում: Այն երկար կյանք ապրեց և հանրաճանաչ էր մինչև 1921 թ. արտադրությունից հանելը:

Ամեն տարի Պարկերն իր երկրպագուներին հնարավորություն էր տալիս ձեռք բերել գրչի մի նոր մոդել, ցանկանում էր ամեն ինչում հասնել իդեալի, հետևաբար ընկերությունը ոչ միայն նոր մոդելների մշակմամբ էր զբաղվում, այլև կատարելագործում էր զլխիկը, թանաքի մատակարարման մեխանիզմը. ամեն ինչ նշանակություն ուներ:

Առաջին համաշխարհային պատերազմը շատ ընկերությունների անդամալի վնաս հասցրեց: Մի քանիսն այդպես էլ չկարողացան ոտքի ելնել: Այնպիսի տպավորություն էր, որ Parker Pen Company-ն չի ընդունում պատերազմի պայմանները: 1914 թ. նա թողարկում է Trench բացառիկ գրիչը. այն մի «գզրոց» ուներ, որտեղ պահպանվում էին սև բյուրեղիկներ և օրի հետ խառնվելով՝ դառնում էին թանաք՝ զինվորին հնարավորություն տալով խրամատից դուրս չգալով լիցքավորել գրիչը: Պատերազմի ավարտից հետո՝ 1918 թ., մինչ մրցակիցները դրա հետևանքներն էին թոթափում, Parker Pen Company-ի տարեկան շրջանառությունը գերազանցում է 1 միլիոն դոլարը:

1921 թ. շուկա է մտնում ընկերության ամենախոշոր և արտահայտիչ ձեռքբերումներից մեկը Parker duofold-ը կամ ինչպես հետագայում անվանեցին Big red-ը: Այս վառ նարնջագույն գրիչը ոչ միայն ամեն

նագրավիչն էր, այլև ամենաթանկը: Գինը միջինը 7 դոլար էր, այն ժամանակ առաջարկվող միջին գին ունեցող գրիչներից զգալի թանկ: Դրա հետ մեկտեղ, ամեն գնորդ գիտեր, որ այդ գրիչի հետ միասին ցկյանս օգտագործման երաշխիք է ձեռք բերում:

Փորձ կատարելով հեռանալ իր ավանդական հե- նարանից՝ ճկուն ռետինից, որն այնքան էլ դիմացկուն չէր, ընկերությունը ներդնում է պլաստմասսան անվանելով Perma- nite: Գովազդային գործակալությունը, որն ու- ղեկցում էր Perma- nite-ի արտադրությունը, տարբեր գրավիչ ու դիտարժան գործողություններ էր նախատե- սում՝ ապշեցնելու համար հասարակությանը: Գրիչնե- րի ամրությունն ապացուցելու համար դրանք նետում էին բարձրաբերձ ժայռերից և ինքնաթիռից: Անցում կա- տարելով նոր, բարձր դիմացկունությանը նյութի՝ Պար- կերն իր արտադրանքին տվեց հավերժական երաշխիք:

Եվ ինչպես միշտ, ձեռքբերումները չէին բավակա- նացնում, ընկերությունը հետզհետե ավելի կատարյալ գրիչներ էր արտադրում: Parker vacumat-с-ն դառնում է մի նոր պոռթկում՝ համարվելով Ջորջ Պարկերի գլուխ- գործոցը: Այն երկու անգամ ավելի շատ թանաք էր պա- րունակում, քան նախորդը: Նյութորքյան լավագույն նկարիչներից մեկը՝ Ջոզեֆ Պլատո, պատվեր է ստա- նում Պարկերի ամենաճանաչելի գրիչ՝ սեղմակ-սլաք- ների ապրանքանիշի մշակման: Այդ ժամանակից ի վեր սեղմակ-սլաքները դառնում են Parker-ի կորպորատիվ լոգոտիպի մի մասը և աշխարհում նրա «ստեղծագոր- ծությունների» բացարձակ առավելության նշան:

Պարկերի գործերը հրաշալի էին ընթանում, սա- կայն ընտանիքը ծանր կորուստ է կրում, մահանում է նրա որդին՝ Ռասելը: Parker Pen Company-ի յոթա- նասունամյա ղեկավարն այդպես էլ չի կարողանում հարվածից ուշքի գալ և թոշակի է անցնում: 1933 թ. հուլիսի 19-ին Ջորջ Պարկերը մահանում է 2իկագոյի Բիլինգս հիվանդանոցում:

Պարկերի մահից հետո ընտանեկան գործը շարու- նակվում է, և ապրանքանիշը հետևողականորեն կա- տարելագործվում է: Շուտով ընկերությունը բացառիկ թույլտվություն է ստանում՝ բրիտանական արքայական պալատ մատակարարել թանաքով գրիչներ: Տասնամ- յակների ընթացքում թագավորական գերդաստանը գեթ մեկ անգամ կասկածի չի ենթարկում դրանց որա- կական հատկանիշները:

1954 թ. թողարկվում է առաջին բարձրորակ գնդի- կավոր գրիչը՝ Parker jotter: Այն հինգ անգամ ավելի շատ էր գրում սովորական գնդիկավոր գրիչներից: Թողարկման առաջին տարում վաճառվում է 3,5 մի- լիոն գրիչ: Վեց տարի անց ընկերությունից հեռանում է նախագահը և կառավարման խորհրդի ղեկավարը՝ պարկերների ընտանիքի վերջին գործող անդամը՝ Քենեթ Պարկերը:

1964 թ. Parker Pen Company-ի ծննդյան 75-րդ տա- րեդարձը նշվում է «Պարկեր-75»-ի թողարկմամբ. բացառիկ փետրավոր գրիչ՝ մաքուր արծաթից և ոսկյա ծայրով: Իսկ չորս տարի անց սկիզբ է դրվում Special edition classic գրիչների թողարկման՝ արծաթյա մա- սերով: 1980-ականների սկզբին «լույս աշխարհ է գա- լիս» Parker premier-ը՝ նամակի համար նախատես- ված շքեղ հավաքածուն: Այս ձեռագործ «արվեստի նմուշները» պատված էին ազնիվ մետաղներով, և պատրաստման համար պահանջվում էր մինչև 6 շա- բաթ: Գինը 75-ից մինչև 3 000 ֆունտ ստեռլինգ էր:

1993 թ. մայիսին Parker Pen Company-ն միավոր- վում է The Gillette Company-ի հետ, որից հետո գրիչնե- րի արտադրության մեջ առանց այն էլ անվիճելի առա- ջատարն անհասանելի է դառնում մրցակիցների հա- մար:

2000 թ. Ջեյնսվիլի ընկերությունը փակ- վում է: Ներկայում բրեյ- դը պատկանում է ամե- րիկյան Newell Rub- bermaid ընկերությանը, Մեծ Բրիտանիայում է արտադրվում Parker Jotter, Parker Vector, Parker Frontier, Park- er Duofold, Parker 45

շարքը, Ֆրանսիայում՝ Parker Sonnet, Parker IM-ը:

Այսօր էլ Ջորջ Պարկերի «զավակը» շարունակում է լինել շուկայի առաջատարը, որի հավասարն աշխար- հում դեռ չկա: Այն արտադրում է ինքնատիպ գրեմական պիտուլքներ, որոնք հմտության ու դիզայնի զուգակ- ցում են և խորհրդանշում են ընկերության պատմու- թյան նոր փուլը, որի նպատակն է մարդուն օգնել խոր- հրդրածել, նորովի բացահայտել սեփական անհատա- կանությունը և համախմբել մտքերը: Ներկայացուց- չություններ ունենալով աշխարհի 45 երկրներում՝ այն տարածում է իր հավատամքը՝ *գրավոր խոսքի արժեքը, այն, որ արտաբերված խոսքը կարող է լսելի լինել շատերին, սակայն գրի առնված մտքերը ժառանգվում են սերունդներին, քանի որ ժամանակն անգոր է դրանց հանդեպ:*

2018 թ., շարունակելով նշել իր ավանդույթների և վարպետության 130-ամյակը, Parker-ը հանդես եկավ նոր հատուկ հավաքածուով՝ «Գրիր քո ճակատագիրը» խորագրով, որն արժանին է մատուցում մարդկային երազանքներին ու ձգտումներին և հիշեցնում չկա ան- հասանելի ոչինչ այն մարդկանց համար, որոնք խի- զախում են ու ձգտում հասնել նպատակներին:

Ջորջ Պարկերի ամբողջ պատմությունը՝ ուսուցչից մինչև գրիչ պատրաստող և ընկերության հիմնադիր, աշխարհին ապացուցեց, որ վճռականությունը, աշխա- տասիրությունն ու հմտությունը մարդկությանը կարող են նորաստեղծություններ նվիրել:

*«Պարկեր»-ը հաճախ անվանել են «խաղաղության գրիչ»:* *խաղաղության շատ պայմանագրեր ստորա- գրվել են դրանով, քանզի քաղաքական շատ գործիչ- ներ գերադասում էին հենց այն:*

1896 թ. Ջակոնո Պուչինին այս գրչով է գրել՝ «Բո- հեն» օպերան: Իսկ Արթուր Կոնան Դոյլը՝ Շերլոկ Ֆոլմ- սի դետեկտիվ պատմվածքների նշանավոր հեղինակը, Parker Pen Company-ի տնօրենների խորհրդի նախա- գահ լրորդ Սոուլսուորտին խոստովանել է, որ ինքը Parker duofold-ի շնորհիվ գտավ իր հարազատ գրիչը: Երկրորդ աշխարհամարտում Գերմանիայի անվերա- պահ կապիտուլյացիայի ակտը ստորագրվել է Parker- 51 երկու գրիչներով, որոնք պատկանում էին գեներալ Դուայթ Էյզենհաուերին: Parker-75 գրիչը ականատես է դարձել 1973 թ. Փարիզյան խաղաղ համաձայնագրի ստորագրման, որով վերջ դրվեց Վիետնամի պատե- րագմին: 1987 թ. ԱՄՆ նախագահ Ռոնալդ Ռեյգանը և ԽՍՀՄ զլխավոր քարտուղար Միխայիլ Գորբաչովը հատուկ պատվիրված Parker-75 արծաթյա դրվագա- զարդ գրիչներով Վաշինգտոնում ստորագրում են Մի- ջին հեռավորության միջուկային ուժերի մասին համա- ձայնագիրը: 1990 թ. Parker duofold էին օգտագործում Գլուստոնում «Մեծ յոթնյակի» երկրների տնտեսական գագաթնաժողովի մասնակիցները: Parker duofold-ի գնդիկավոր գրիչներ են օգտագործել նախագահներ Ջորջ Բուշը և Բորիս Ելցինը՝ Սոչիում «Ստարտ - 2» հա- մաձայնագրի ստորագրման ժամանակ:

**Պատրաստեց ԱՐՄԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ**

Աղբյուրը՝ <http://www.wibes.ru/company/parker-simvol-stilya>





**ՀՊՏԿ**-ն և ՀՀ Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը սկսել են համագործակցություն, որի մեկնարկը տրվել է սեպտեմբերի 5-ին, հանձնաժողովի նախագահ Մանե Թանդիլյանի և ՀՊՏԿ գիտության գծով պրոռեկտոր Թաթև Ակրտչյանի կողմից համագործակցության հուշագրի ստորագրմամբ: Նպատակն է ստեղծել հարթակ, որը միտված է մեր երկրի ֆինանսատնտեսագիտական հանրության միտքն ու փորձագիտական ներուժը ծառայեցնելու խորհրդարանի վերահսկողական գործառնությունների ամբողջական իրականացմանը: Մանե Թանդիլյանը փաստել է, որ այն լավագույն միջոցն է ոլորտում ունենալ այնպիսի գիտական ներուժ, որը թույլ կտա համարժեք արձագանքել ծառայած տնտեսական խնդիրներին: Բազմակողմ հանդիպմանը քննարկվել են հուշագրից բխող աշխատանքային մոտեցումները: Հանձնաժողովը պատրաստական է նաև ընդունել մեր ուսանողներին փորձառություն անցնելու նպատակով:

**Եվ**րասիական տնտեսական միության մասին պայմանագրի ստորագրման 5-րդ տարեդարձի և եվրասիական ինտեգրման գաղափարի 25-ամյակի կապակցությամբ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, «Եվրասիական փորձագիտական ակումբի» անդամ Աշոտ Թավադյանը, պարգևատրվել է «**Եվրասիական տնտեսական միության զարգացման գործում ունեցած ավանդի համար**» մեդալով: Պարգևատրման արարողությունը տեղի է ունեցել ՀՀ նախագահի նստավայրում, մեդալները հանձնել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահ Տիգրան Սարգսյանը և ՀՀ փոխվարչապետ Սիեր Գրիգորյանը:

«**Եվրասիական տնտեսական միության զարգացման գործում ունեցած ավանդի համար**» մեդալով է պարգևատրվել նաև միկրոտեխնոլոգիայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի վարիչի ժ/պ, պրոֆեսոր, ՀՀ ԱԺ տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Միքայել Մելքունյանը: Նա այդ օրը գործուղման է եղել և պարգևը ստացել է հոկտեմբերի 8-ին:

**Նույնանուն մեդալով** պարգևատրվել են նաև միկրոտեխնոլոգիայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոնի ասիստենտ ՀՀ էկոնոմիկայի նախարարության ԵԱՏՄ և արտաքին առևտրի վարչության պետի տեղակալ Էմմա Մովսիսյանը, ՀՊՏԿ շրջանավարտ Արմինե Յարալովան:

**ՀՊՏԿ**-ի և Չինաստանի հասարակական գիտությունների ակադեմիայի համաշխարհային տնտեսագիտության և քաղաքագիտության ինստիտուտի միջև մայիսին համագործակցության հուշագիր է ստորագրվել (նախաձեռնությունը՝ «Ամբերդ» կենտրոնի փոխտնօրեն-ավագ փորձագետ, Վարդան Աթոյանի): Նախատեսվում են ակադեմիական փոխանակումներ, համատեղ հետազոտություններ և նախագծեր, համատեղ գիտական միջոցառումներ:



**Բ**անկային գործունեության կազմակերպում մասնագիտացման մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Անդրանիկ Սարգսյանը ծրագրավորման իր փորձը ՀՊՏԿ-ականներին փոխանցելու նպատակով ուսումնական տարվա ընթացքում երկրորդ անգամ ուսանողներին հրավիրեց «Մեքենայական ուսուցում՝ տնտեսագետների համար» խորագրով դասընթացին, որի առաջին համոդիպումը մայիսի 29-ին էր: Նախաձեռնության կազմակերպիչը աշխատաշուկայի և շրջանավարտների հետ աշխատանքի բաժնի պետ Լիլիթ Գյուլգյուլյանն էր:



«**Ինգո Արմենիա**» ԱՓԲԸ կենտրոնում մայիսի 29-ին տեղի ունեցավ հայաստանյան բուհերի ուսանողների հավաստագրերի հանձնման հանդիսավոր արարողություն: Նրանց թվում էր ընկերության վարպետության դասերին մասնակցած ֆինանսներ մասնագիտության 3-րդ կուրսի 18 ուսանող: Մասնակցում էր բանկային գործի և ապահովագրության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Աննա Ասլանյանը, աշխատաշուկայի և շրջանավարտների հետ աշխատանքի բաժնի պետ Լիլիթ Գյուլգյուլյանը:

Ելույթ ունեցան ընկերության գործադիր տնօրեն, տնօրինության նախագահ Արևշատ Մելիքսեթյանը, ՄՌԿ բաժնի պետ Զառա Գրիգորյանը: Արևշատ Մելիքսեթյանը ուսանողներին հանձնեց հավաստագրեր, Աննա Ասլանյանին՝ շնորհակալագիր:

**ՏԿ** և ՄՏՀ ֆակուլտետի դեկան Գրիգոր Նազարյանի առաջարկությամբ և էլեկտրոնային սարքավորումների սպասարկման և ծրագրային ապահովման բաժնի մասնագետ Արման Օհանյանի հեղինակությամբ ներդրվել է ավարտական աշխատանքների թեմաների ընտրման ավտոմատ համակարգ, որի փորձարկումը տեղի ունեցավ մայիսի 30-ին: Տնտեսագիտություն մասնագիտության բակալավորիատի 3-րդ կուրսերի 124 ուսանող ծրագրի միջոցով միաժամանակ ընտրեց իր թեման: Համակարգի գործարկմանը ներկա էին վերոնշյալ բաժնի պետ Սամվել Հովհաննիսյանը, աշխատակիցները:

**Ս**ոսկվայի Լոնոնոսովի անվան համալսարանում մայիսի 28-ին տեղի է ունեցել Եվրասիայի գյուղատնտեսության, պարենային անվտանգության և պարենավորման 4-րդ ամենամյա միջազգային գիտաժողովը՝ նվիրված Պարենային քաղաքականության միջազգային գիտահետազոտական ինստիտուտի (IFPRI, Վաշինգտոն) «2019 թ. գլոբալ պարենային քաղաքականությունը» զեկույցին: Գիտաժողովին մասնակցել է «Ամբերդ» կենտրոնի ավագ փորձագետ, պրոֆեսոր Սամվել Ավետիսյանը և հանդես եկել «ՀՀ գյուղական տարածքներում այլընտրանքային զբաղվածության զարգացման հնարավորությունների գնահատումը» զեկույցմամբ: Քննարկվել է «2019 թ. գլոբալ պարենային քաղաքականությունը» զեկույցը, ներկայացվել են գյուղական տարածքների ռիտալիզացիայի, աղքատության հաղթահարման, զբաղվածության մակարդակի բարձրացման, կանանց կենցաղի և աշխատանքային պայմանների բարելավման հիմնախնդիրները:

**ՀՀ** էկոնոմիկայի նախարարության ՆՁԱԿ-ի գիտատեխնիկական գրադարանը հունիսի 7-ին «Հանդիպում զրքերի հեղինակների, գիտնականների հետ» միջոցառումների շրջանակում կազմակերպել է Շրջակա միջավայրի համաշխարհային օրվան նվիրված «Ավելի մաքուր, առողջ և կանաչ Երկիր մոլորակ» խորագրով քննարկում ժամանակակից տեղեկատվական միջավայրում կարևորելու զրքի դերակատարումը բնապահպանական կրթության, հանրության իրազեկության և ռեսուրսների արդյունավետ օգտագործման խնդիրներում, մասնագիտական հայերեն զրքերով համալրելու ՆՁԱԿ-ի գրադարանի հավաքածուն: Միջոցառմանը ներկա են եղել «Ամբերդի» ավագ փորձագետ, պրոֆեսոր Սամվել Ավետիսյանը, բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի դոցենտներ Ալիսա Գևորգյանը, Աննա Կարապետյանը, ասիստենտներ Նորա Այվազյանը, Նադեժդա Աֆյանը:

Պրոֆեսոր Սամվել Ավետիսյանը ներկայացրել է «Բնական պաշարների օգտագործման նորամուծական եղանակների միջազգային փորձը և Հայաստանում կիրառման հնարավորությունները» և այլ հրատարակություններ: Գրադարանին արժեքավոր զրքեր նվիրաբերելու համար Սամվել Ավետիսյանին հանձնվել է շնորհակալագիր: Գործել է «Բնապահպանություն» խորագրով գրականության թեմատիկ ցուցահանդես:

**Բ**նօգտագործման տնտեսագիտության ամբիոնի և «Ֆլալեաս» կորպորացիայի (ԱՄՆ) համագործակցության շրջանակում բնօգտագործման տնտեսագիտություն և հողագույքային հարաբերություններ մասնագիտությունների բակալավորիատի և մագիստրատուրայի մի խումբ ուսանողների համար կազմակերպվել էր անգլերենի եռամսյա, անվճար դասընթաց: Հունիսի 12-ին նշված ամբիոնի վարիչի ժ/պ Գագիկ Աղաջանյանի, ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետի ղեկան Գրիգոր Նազարյանի և դասախոսների ներկայությամբ դասընթացն ավարտած 12 ուսանող հավաստագիր ստացավ: Ողջույնի խոսքում ղեկանը կարևորեց այս նախաձեռնությունը, դասընթացավար, լեզուների ամբիոնի դոցենտ, «Շրջակա միջավայրի տնտեսագիտություն» զրքի հեղինակ Անուշ Խաչատրյանն էլ հույս հայտնեց, որ օտար լեզվի լավ իմացությունը կծառայի մասնագիտական առաջընթացին: Ամենապարտաճանաչ մասնակից ճանաչվեց մագիստրատուրայի 2-րդ կուրսը գերազանցությամբ ավարտած Արտյոմ Քոսակյանը:

**Ա**շխատաշուկայի և շրջանավարտների հետ աշխատանքի բաժինը հունիսի 20-ին կազմակերպեց «Երևակ» կրթահամալիրի 11-րդ և 12-րդ դասարանի աշակերտների հյուրընկալությունը: Նրանց ողջունեց վերոնշյալ բաժնի պետ Լիլիթ Գյուլգյուլյանը, ապա հանդիպեցին ռեկտորի պաշտոնակատար Ռուբեն Հայրապետյանը, արտաքին կապերի ղեկարարանենտի տնօրեն Պարույր Ջանգուլյանը, աշխատակիցներ:

**Բ**արձրագույն մաթեմատիկայի ամբիոնի պրոֆեսոր Մաքսիմ Մուրադյանի հեղինակությամբ, ՀՀ ԿԳՆ և ՀՊՏՀ գիտական խորհրդրդի երաշխավորությամբ լույս է տեսել «Բարձրագույն մաթեմատիկա» դասագիրքը՝ նախատեսված տնտեսագիտական և հարակից մասնագիտությունների ուսանողների համար, ներառում է բարձրագույն մաթեմատիկայի դասընթացի հիմնական բաժինները, հագեցած է տեսական նյութերով, խնդիրներով ու վարժություններով, որոնց զգալի մասն ունի տնտեսագիտական բովանդակություն:



**Լ**ույս է տեսել ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի ասիստենտ Մարե Խաչատրյանի «Մաքսային գործ» (ընդհանրական ակնարկ) ուսումնական ձեռնարկը, որում նկարագրված են մաքսային գործին առնչվող հիմնական գործընթացները, ԵԱՏՍ տարածքում դրանց կարգավորման մասին օրենքները, ինչպես նաև մաքսային ոլորտի հիմնահարցեր: Տպագրվել է «Տնտեսագետ» հրատարակչությունում:

Գիրքը հասցեագրված է ուսանողներին, մաքսային գործով հետաքրքրված անձանց: Առկա է ՀՊՏՀ գրադարանում:

**Ո**ւսանողի ուղեցույց-2019»-ը ներկայացնում է ուսանողների իրավունքները, պարտականությունները, ուսումնական գործընթացի կազմակերպման, ինչպես նաև գիտելիքի գնահատման սկզբունքները: Ուսումնական տարվա սկզբին այն բաժանվել է առաջին կուրսեցիներին, իսկ էլեկտրոնային տարբերակը հասանելի է ՀՊՏՀ պաշտոնական կայքի «Ուսանող» խորագրի ներքո՝ «Ուսանողի ուղեցույց» բաժնում:



**Ռ**եկտորի պաշտոնակատար Ռուբեն Հայրապետյանը և Նախագծերի կառավարման ինստիտուտի (PMI) հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Թոմաս Մազեջյանը հունիսի 19-ին մեր համալսարանում ստորագրեցին փոխընթաց հուշագիր՝ ուղղված ՀՀ-ում կրթության և գիտության զարգացման նպատակների իրագործմանը: Ներկա էին պրոռեկտորներ Դիանա Գալոյանը, Տիգրան Մնացականյանը, ղեկարարանենտի տնօրեն Արամ Հովհաննիսյանը, բաժինների ղեկավարներ Աղավնի Հակոբյանը, Վարդ Դուկասյանը, Լիլիթ Գյուլգյուլյանը, աշխատակիցներ, նշված կազմակերպության ներկայացուցիչներ: Հուշագիրը նախատեսում է փոխգործակցություն, որը կնպաստի ուսանողների մասնագիտական կարողությունների բարձրացմանը, անձնակազմի վերապատրաստմանը, համալսարանի գիտահետազոտական ուղղության աշխուժացմանը:

**Բ**ակալավորիատի 4-րդ կուրսի ուսանողների շրջանում հունիսի 19-ին «Այդի բանկը» իրականացրեց բազային գիտելիք ստուգող թեստ, որի արդյունքներով լավագույնները կմասնակցեն բանկի վերապատրաստման ծրագրին, ապա աշխատանքի կանցնեն: Բանկի ՄՈԿ գլխավոր մասնագետ Արսինե Փանոսյանը նշեց, որ ծրագրի մասնակիցները ֆինանսական կրթություն ստացող ավագ կուրսերի ուսանողներն են, և նպատակն է բանկի թիմը երիտասարդ ու եռանդուն կադրերով համալրելը: Թեստավորման կազմակերպմանն աջակցել էր համալսարանի աշխատաշուկայի և շրջանավարտների հետ աշխատանքի բաժինը:



**Հ**ունիսի 27-ին մեկնարկեց Հայկական տնտեսագիտական միության տարեկան գիտաժողովը, որին մասնակցում էին հայաստանյան և արտերկրի բուհերի պրոֆեսորներ, տնտեսագետներ, հյուրեր: Բացման խոսքով հանդես եկան ռեկտորի պաշտոնակատար Ռուբեն Հայրապետյանը և ՀՏՄ նախագահ Գուրգեն Ասլանյանը: Մասնակցի ելույթով հետազոտությունների կենտրոնի ղեկավար, պրոֆեսոր Ֆրիդրիխ Հայնեմանը վերլուծեց միասնական ելույթական արժույթի պատմությունը, ելույթական երկրների տնտեսական համագործակցության, զարգացման և ինտեգրացիոն հիմնախնդիրները, ելույթական միասնական արժույթի տրմտեսական և քաղաքական ազդեցությունը:

Գիտաժողովը շարունակվեց «Ինչո՞ւ է կարևոր տնտեսագիտական կրթությունը» թեմայով պանելային քննարկմամբ: Մասնակիցների թվում էին «Ամերիաբանկ» ՓԲԸ տնօրինության անդամ, զարգացման գծով տնօրեն Տիգրան Ջրբաշյանը, ՀԱՀ գործարարության և տնտեսագիտության ֆակուլտետի ղեկան Վաչե Գաբրիելյանը, ՀԱԱՀ ռեկտոր Վարդան Ուռուտյանը, Նյու Յորքի Սիթի համալսարանի պրոֆեսոր Ռենդալ Ֆիլերը, վարում էր Գուրգեն Ասլանյանը: Քըննարկումները շարունակվեցին նաև «Էմպիրիկ արդյունաբերական կազմակերպում», «Աշխատանքի տնտեսագիտություն» և «Կենսաթոշակային տնտեսագիտություն» խորագրերի ներքո: Հաջորդ երկու օրերին գիտաժողովը ընթացավ ՀԱԱՀ-ում և ՀԱՀ-ում:



**«Հ**ինաստան-Եվրասիա» քաղաքական և ռազմավարական հետազոտությունների խորհրդի» և ՀՊՏՀ-ի հետ համատեղ «Վերախմաստավորելով Հինաստանի արտաքին քաղաքականությունը և տնտեսությունը – 2019» հատուկ դասընթացը հունիսի 14-20-ն էր, նվիրված էր 2017-2019-ամյակին: ՀՊՏՀ Հինաստանի լսարանում ողջունյալ խոսք ասացին ՀՀ ԱԺ փոխնախագահ, ԱԺ Հայաստան-Հինաստան բարեկամական խմբի ղեկավար Լեոն Նազարյանը, 2017 ղեկավար Ռուբեն Վարդանյանը, ՀՊՏՀ ռեկտորի պաշտոնակատար Ռուբեն Հայրապետյանը և «Հինաստան-Եվրասիա» քաղաքական և ռազմավարական հետազոտությունների խորհրդի ղեկավար Միեր Սահակյանը: Դասախոսեցին ղոկտոր, պրոֆեսոր Մեթյու Քրոսսթոնը, Իվան Ջուլենկոն, պրոֆեսոր Վախթանգ Չարայանը, ղոկտոր Մա Բինը, Ջասփեր Վեակմանը, Թրենդ գործակալության լրագրող Տաի Յուլունը, հայկական կողմից՝ Միեր Սահակյանը, Վարուժան Գեղամյանը, Անահիտ Պարզյանը, Վազգեն Պետրոսյանը:

Դասընթացի 34 մասնակցից 27-ը հավաքեց անհրաժեշտ միավորներ և արժանացավ վկայականների: Մասնակիցներին դասընթացն ավարտելու առթիվ շնորհավորեց արտաքին կապերի ղեկարտամենտի տնօրեն Պարույր Ջանգուլյանը:



**Հ**ունիսի 21-ին ՀՊՏՀ-ի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության միջև ստորագրվեց հուշագիր: Համագործակցության հիմքում բուհի մասնագիտական ներուժն է և ՀՀ սոցիալական ապահովության ծառայության փորձն ու դրա կարևորությունը: Հուշագիրը ստորագրեցին ռեկտորի պաշտոնակատար Ռուբեն Հայրապետյանը և Սոցիալական ապահովության ծառայության պետ Սուրեն Դամբարյանը: Ներկա էին պրոռեկտորներ Դիանա Գալոյանը, Տիգրան Մնացականյանը,

ղեկարտամենտի տնօրեններ Պարույր Ջանգուլյանը, Արամ Հովհաննիսյանը, բաժնի պետեր Աղավնի Հակոբյանը, Վարդ Դուխայանը, դասախոսներ, աշխատակիցներ, սոցիալական ապահովության ծառայության պաշտոնատար անձինք:

Հուշագրի շրջանակում նախատեսվում է ուսանողներին ներգրավել Սոցիալական ապահովության ծառայության աշխատանքներում:

**Բ**նօգտագործման տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ Նահեժդա Աֆյանը և ֆինանսների ամբիոնի դոցենտ Արմինե Սչանյանը սեպտեմբերի 12-15-ը Արցախում մասնակցել են «Հայոց պետականության անցյալը, ներկան ու ապագան» միջազգային երիտասարդական 4-րդ գիտաժողովին՝ նվիրված ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին: «Տնտեսագիտություն» բաժանմունքում Նահեժդա Աֆյանը ներկայացրել է «Հանքավայրերի շահագործման շահագրգիռ կողմերի հակասումները» զեկուցումը, Արմինե Սչանյանը՝ «Կենսաթոշակային բարեփոխումների անհրաժեշտությունը, կարևորությունը և շարժընթացը ՀՀ-ում»: Գիտաժողովին մասնակցել է նաև ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի 5 ներկայացուցիչ:

**«Ա**մբերդ» կենտրոնի ավագ փորձագետ, պրոֆեսոր Սամվել Ավետիսյանը, «Ամբերդի» արդյունաբերական գյուղատնտեսության ինովացիոն ծրագրերի ուսումնասիրության շրջանակում, այցելել է Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի նորաբաց «Խելացի» անասնաֆերմա: Այն փորձացուցադրական է և հետաքրքրություն է ներկայացնում նաև Ստեփանավանի գյուղատնտեսական քոլեջի ուսանողների համար: Քոլեջի տնօրեն Սամվել Հունանյանի և սեփականատեր Արմեն Ջաղիմյանի հետ Սամվել Ավետիսյանը քննարկել է բիզնեսի ընդլայնման, կադրերի վերապատրաստման հարցեր:

**«Ա**մբերդ» կենտրոնը հրապարակել է «Աշխատաշուկայի միտումները Հայաստանում» հետազոտությունը, որն իրականացվում է աշխատաշուկայի մշտադիտարկման արդյունքների հիման վրա: Մեր համալսարանի շրջանավարտներին և ուսանողներին դրանք հնարավորություն են ընձեռում հասկանալու, թե գործատուները ինչ կարողություններ և հմտություններ են ակնկալում տվյալ ոլորտի մասնագետից և ինչպիսի գործառույթներ է նա իրականացնելու իր աշխատավայրում: Հետազոտության արդյունքները ներառում են 22 էլեկտրոնային կայքերում հրապարակված շուրջ 1800 աշխատատեղերի հայտարարությունների ընդհանրացված տվյալներ՝ ՀՊՏՀ մասնագիտական ուղղվածության բոլոր մասնագիտությունների գծով:

*Հետազոտությունը հասանելի է ՀՊՏՀ պաշտոնական կայքի «Ամբերդ» բաժնում:*

**Ս**ոսկվա և Ստավրոպոլ քաղաքներում հունիսի 2-9-ը ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո կայացել է «BRICS և Շանհայի համագործակցության կազմակերպության երկրների ուսանողական գարուն» 3-րդ միջազգային փառատոնը, որի մասնակից հայաստանյան 65 հոգանոց պատվիրակության թվում են եղել «Ամբերդի» հետազոտող, ասպիրանտ Աստղիկ Յովհաննիսյանը, ուսանողուհիներ Յեղիմե Յախնազարյանը և Անաստասիա Մարգարյանը (ներկայացնում էր Երիտասարդության հայ-ռուսական միությունը):



Միջոցառումը նվիրված է եղել Շանհայի համագործակցության կազմակերպությունում 2019-2020 թթ. ՌԴ նախագահության տարվա բացմանը, մասնակցել է 23 երկրի 2500 պատվիրակ: «Նոր սերունդ» ծրագրի մասնակիցների համար փառատոնը սկսվել է Պետդունայում և ՌԴ ԱԳՆ-ում, Ռուս համագործակցության դաշնային գործակալության ներկայացուցիչների հետ հանդիպումներով: Աշխատանքը շարունակվել է Ստավրոպոլում: Ծրագիրը ներառել է հանդիպումներ, բացման հանդիսավոր արարողություն, ամենօրյա աշխատանք և քննարկում 6 բաժանմունքում, շնորհանդես, բիզնես-ֆորում, մշակութային միջոցառումներ ու մրցույթներ և այլն: Մասնակիցները ստացել են վկայականներ:

Վերադարձից հետո «Նոր սերունդ» ծրագրի մասնակիցները ՀՀ-ում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպանի հրավերով մասնակցել են Ռուսաստանի օրվան նվիրված պետական ընդունելության:

**IAB** Բիզնեսի միջազգային ակադեմիան, KPMG ընկերության հետ համատեղ, հունիսի 27-ին ՀԲԸՄ-ում կազմակերպել էր ամենամյա ֆինանսական մրցույթ, որը հնարավորություն է տալիս հաշվապահական հաշվառում, աուդիտ և ֆինանսներ ուսումնասիրողներին ցուցաբերել իրենց մասնագիտական հմտություններն ու գիտելիքները:

Մրցույթին մասնակցում էին հայաստանյան բուհերի 4-րդ կուրսերի ուսանողներ, այդ թվում՝ ՀՊՏՀ երկու թիմ՝ Ի/Ի և աուդիտի ու ֆինանսական ֆակուլտետների: Նրանց աշխատանքները համակարգում էին ֆինանսական հաշվառման ամբիոնի դոցենտ Լևոն Սահակյանը և ֆինանսների ամբիոնի ասիստենտ Ասյա Խալթայանը: KPMG ընկերությունը մասնակից բոլոր թիմերին առաջադրեց մեկ կազմակերպության ֆինանսական փաստաթղթերի փաթեթ, որում առկա սխալները պետք է գտնեին ուսանողները: Մասնակից 7 թիմերից առաջին հորիզոնականը հավասար միավորներով կիսեցին ՀՊՏՀ երկու թիմերը: Հաղթողները հնարավորություն ստացան մասնակցելու ամառային ճամբարի, արժանացան վկայականների:

«**Ամբերդ**» կենտրոնի փոխնախագահ Կորնադեա Վարդան Աթոյանը հունիսի 7-17-ը Վարշավայում (Լեհաստան) մասնակցել է Եվրասիական ամառային ակադեմիային, որի կազմակերպիչներն էին Եվրոպայի քոլեջը, ԱՄՆ գերմանական Մարշալի հիմնադրամը և Լեհ-ամերիկյան ազատության հիմնադրամը: Միջոցառման աջակիցն էր Լեհ-ամերիկյան Ֆուլբրայթի հանձնաժողովը: Գիտակրթական ծրագիրը ընդգրկել է միջազգայնորեն ճանաչված փորձագետների դասախոսություններ, տեսական և գործնական պարապմունքներ, թեմատիկ և ոլորտային քննարկումներ՝ մարդու և տեխնոլոգիաների հարաբերությունների, կեղծ լուրերի, արհեստական բանականության և ալգորիթմների, մեդիագրագիտության, ժամանակակից լրագրության և այլ թեմաներով:

**ՀՈՒՄՖ** 25-ամյակին նվիրված գիտաժողովը և արտահերթ ընդհանուր ժողովը սեպտեմբերի 13-ին տեղի ունեցան մեր համալսարանում: Մինչ միջոցառումները ձեկտորի պաշտոնակատար Դիանա Գալոյանն իր աշխատասեյակում ընդունեց Եվրոպայի համալսարանական սպորտի ասոցիացիայի նախագահ Ադամ Ռոշեկին և զլխավոր քարտուղար Մաթիաս Պեչովնիկին: Նրանց ուղեկցում էր ՀՊՏՀ ֆիզդաստիարակության, ԱԻ և ԶՊ ամբիոնի վարիչի ժ/պ, ֆեդերացիայի զլխավոր քարտուղար Յովհաննես Գաբրիելյանը և ֆեդերացիայի ուսանողական կոմիտեի անդամ Գրիշա Ամիրխանյանը:

Հնչեցին զեկուցումներ, որոնցում արժարժվում էին համալսարանական սպորտի զարգացման հիմնահարցերը, շարունակվեց պարզատրմամբ: Խորհրդանշական մրցանակներ հանձնվեցին Հայաստանի ուսանողական սպորտի զարգացման գործում մեծ ավանդ ներդրած անձանց՝ բուհերի ֆիզդաստիարակության ամբիոնի վարիչների, դասախոսների, մարզիչների, տարբեր մարզաձևերի ֆեդերացիաների ներկայացուցիչների: ՀՈՒՄՖ արտահերթ ներկայացուցչական ընդհանուր ժողովն ավարտվեց ՀՈՒՄՖ նախագահ Ռազմիկ Ստեփանյանի հրաժարականի քննարկմամբ և նոր նախագահի ընտրությամբ: Ընտրվեց Յովհաննես Գաբրիելյանը:

**Հ**ունիսի 15-19-ը, «Անցումային տրանսագիտության մարտահրավերները» խորագրով 2-րդ միջազգային ամառային դպրոցի շրջանակում, քրեմլարկվեցին տնտեսագիտության տեսության ժամանակակից հարցեր: Կազմակերպիչներն էին ՌԴ «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարանը, նշված բուհի տնտեսագիտության ֆակուլտետը, Լյուքսեմբուրգի համալսարանը և ՀՊՏՀ-ն: Ամառային դպրոցի մեկնարկն ազդարարեց ռեկտորի պաշտոնակատար Ռուբեն Յայրապետյանը: Դասախոսեցին ՌԴ Տընտեսագիտության բարձրագույն դըպրոցի, Լյուքսեմբուրգի համալսարանի երիտասարդ գիտնականներ Ջարոլի Յակոբյանը, Անդրեյ Կոստիրկան, Դարյա Պուրովան, Պոլինա Կոբոլովան և Ռամիս Խաբիբուլլինը: Մասնակիցները լսեցին նաև «Տնտեսագիտության բարձրագույն դպրոցի» ֆինանսների դպրոցի դոցենտ Մադինա Կարամիշևայի «պատվավոր զեկույցը»՝ նվիրված պրոդեցիալ քաղաքականությանը և պարբերական ռիսկերին:

**Ս**եպտեմբերի 12-ին ՌԻՄ ուսումնագիտական հանձնաժողովը «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» խաղով սկսեց ինտելեկտուալ, կրթադաստիարակչական, զարգացնող միջոցառումների շարքը՝ համախմբելով ֆակուլտետների գիտակներին, այդ թվում՝ առաջին կուրսեցիներին: Հաղթող դարձավ «Աղեկվատ» թիմը: Առաջին կուրսեցիների «Սոկրատես» թիմը փայլուն ելույթի համար արժանացավ պատվոգրի:



**1**-ին կուրսի մագիստրանտներ Անուշ Հարությունյանը (մակրոտնտեսական վերլուծություն) և Հասմիկ Բաղդասարյանը (բանկային գործունեության կազմակերպում) մասնակցել են «IDBank-ի անվան կրթաթոշակ» ծրագրին և տեղ գրավել հաղթող հնգյակում՝ արժանանալով 1-ական մլն ՀՀ դրամ կրթաթոշակի՝ ուսումը մագիստրատուրայում շարունակելու համար: Կրթաթոշակների շնորհման հանդիսավոր արարողությունը տեղի է ունեցել օգոստոսի 16-ին:



**Ս**եսիլիա դը Բոկը ամերիկյան «Ֆուլբրայթ» կրթական փոխանակման ծրագրի կրթաթոշակակիր է և մեր համալսարանում մասնակցելու է օտար լեզվի համադասավանդման գործընթացին: Սեպտեմբերի 16-ին՝ ծրագրի մեկնարկի նախաշեմին, նրան և ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան մշակութային/կրթական ծրագրերի մասնագետ Հասմիկ Միքայելյանին իր աշխատասենյակում ընդունեց ռեկտորի պաշտոնակատար Դիանա Գալոյանը: Ներկա էին արտաքին կապերի դեպարտամենտի տնօրեն Լուսինե Դանիելյանը, միջազգային կապերի բաժնի պետ Վարդ Դուկասյանը, լեզուների ամբիոնի վարիչի ժ/պ Լուսինե Հարությունյանը:

Կրթաթոշակակիրը կընդգրկվի լեզուների դասավանդման գործընթացում, ինչը երկուստեք փորձի փոխանակման հնարավորություն կտա, նաև կհյուրընկալվի ՀՊՏՀ «Անգլախոսների ակումբում»՝ ներկայացնելու ամերիկյան մշակույթը, կրթությունը:

**Կ**առավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի դոցենտ Վահան Բաբայանի հրավերով սեպտեմբերի 6-ին հ/հ և հարկում մասնագիտության բակալավրիատի 2-րդ և աուդիտ մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրսերում «Ֆինանսական ենթակառուցվածքների աուդիտ» առարկայի շրջանակում բանախոսեց ՀՀ ԿԲ լիցենզավորման և կորպորատիվ ֆինանսների վարչության պետ Էդգար Սարգսյանը: Իսկ սեպտեմբերի 9-ին նույն մասնագիտության 4-րդ կուրսեցիները «Ներքին վերահսկողություն» առարկայի շրջանակում ունկնդրեցին ՀՀ ԿԲ ֆինանսական վերահսկողության վարչության բանկային վերահսկողության բաժնի պետ Վաղինակ Ստեփանյանի դասախոսությունը: Քըննարկվեցին ռազմավարական ծրագրի էությունը, ընկերության կառավարման, ներքին հսկողության համակարգը, դրա տեղը և դերը: Ներկա էին հ/հ և աուդիտի ամբիոնի ղեկան Մերի Բաղայանը, կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչ Լիանա Գրիգորյանը, ղեկանի տեղակալ Սոնա Ղազարյանը:

**Ե**րևանում գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության (DAAD) տեղեկատվական կենտրոնի ներկայացուցիչները սեպտեմբերի 11-ին ուսանողների համար անցկացրին ամենամյա տեղեկատվական հանդիպում: Կենտրոնի ուսումնական և կրթաթոշակային ծրագրերի ավագ խորհրդատու Մերի Նավասարդյանը և Հայաստանում DAAD դասախոս Աննեգրեթ Բայերը ուսանողության հետ հանդիպումից առաջ հյուրընկալվեցին ռեկտորի պաշտոնակատար Դիանա Գալոյանի աշխատասենյակում: Բուհի ղեկավարը, արտաքին կապերի դեպարտամենտի տնօրեն Լուսինե Դանիելյանը և միջազգային կապերի բաժնի պետ Վարդ Դուկասյանը գործընկերների հետ քննարկեցին համագործակցության առկա խնդիրները: Այնուհետև միջազգային ծրագրերի կենտրոնում Մերի Նավասարդյանը ներկայացրեց DAAD կրթաթոշակները: Երկրորդ հատվածում ՀՊՏՀ ՄՏՀ մասնագիտացման շրջանավարտ, DAAD-ի կրթաթոշակակիր (2018-2020 թթ.) Տաթևիկ Հովհաննիսյանը, որը սովորում է Մյունխենի տեխնիկական համալսարանի մագիստրատուրայում, ներկայացրեց իր փորձը:



**Ս**եպտեմբերի 19-ին մեր համալսարանում էին «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ-ի հրատարակչական, էլեկտրոնային, տեղեկատվական շտեմարանի պահպանման, սպասարկման և պաշտոնական ինկորպորացիայի բաժնի վարիչի տեղակալ Գայանե Անանյանը, գլխավոր մասնագետ Տաթևիկ Մարտիրոսյանը, սրբագրիչ, նույնականացնող Ամալյա Մանուչարյանը և առաջատար մասնագետ Էդմոն Դավթյանը: Հյուրերին ողջունեց շարունակական կրթության և վերապատրաստումների բաժնի պետ Աղավնի Հակոբյանը: Ներկա էին իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնի վարիչի ժ/պ Լյուբա Մեհրաբյանը, դասախոսներ, ուսանողներ: Գայանե Անանյանը խոսեց Arlis.am կայքի բովանդակության մասին, այն քայլերի, որոնք հնարավորություն են տալիս որոնել-գտնել անհրաժեշտ իրավական տեղեկություններ: Անդրադարձ կատարվեց նույն ընկերության կողմից թողարկվող «ՀՀ պաշտոնական տեղեկագիր» և «ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր» պարբերականներին:

**Ս**եպտեմբերի 14-15-ը Աղվերանում ՀՈԿԿ-Հայաստան կազմակերպությունը, ԱՄՆ ՄԶԳ Հայաստանի աջակցությամբ, «ՀԿ ԴեՊո» ծրագրի շրջանակում կազմակերպել էր հայաստանյան վերլուծական կենտրոնների առաջին համաժողովը, որտեղ «Ամբերդ» կենտրոնը ներկայացրել է դոցենտ Վահե Բուլանիկյանը: Քննարկումներին անդրադարձ է եղել «Ամբերդի» գործունեությանը, նրա առաջավոր փորձին: Հիմնական նպատակը հետազոտական կազմակերպությունների կարողությունների զարգացումն ու հզորացումն էր՝ հանրային քաղաքականությանն ուղղված կիրառական հետազոտական ծառայությունների շուկայի, ֆոնդախայթայթման միտումների, կազմակերպչական և զարգացման կարիքների բացահայտումը: Կազմակերպվել է նաև գործնական աշխատանք, վեր են հանվել հետազոտական, վերլուծական կենտրոնների հիմնական խնդիրները, տեսլականները և ծառայած խնդիրների լուծման ճանապարհները: Միջոցառումն ավարտվել է հռչակագրի ընդունմամբ, ըստ որի՝ անհրաժեշտ է ստեղծել հայաստանյան հետազոտական, վերլուծական կենտրոնների միասնական հարթակ և լուծել համակարգային բոլոր խընդիրները:

**Ա**զգային անվտանգության նոր ռազմավարության մշակման շրջանակում սեպտեմբերի 20-ին Ախ գրասենյակում տեղի է ունեցել աշխատանքային հանդիպում փորձագիտական հանրության ներկայացուցիչների հետ, որին ՀՊՏՀ-ից մասնակցել է «Ամբերդ» կենտրոնի փոխտնօրենավագ փորձագետ Վարդան Արոյանը: Փորձագետներին ներկայացվել է ԱԱԹ կառուցվածքի նախագիծը: Տեղի է ունեցել բովանդակային քննարկում և աշխատանքային ձևաչափերի հստակեցում:

**Մ**արքեթինգի ամբիոնի ասիստենտ Նաիրա Հայրապետյանը մարքեթինգ մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողներին բիզնես-քեյս է առաջադրել՝ «Ակրա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկի» Cashback տեսակի քարտերի տարածման համար մշակել «հաղորդակցային պլան»: Առաջադրանքը «Մարքեթինգային հաղորդակցություններ» առարկայից է, նախաձեռնության շրջանակում սեպտեմբերի 24-ին նշված կուրսի 2 հոսքերում դասախոսեց բանկի հաղորդակցային ղեպարտամենտի ղեկավար Արտյոմ Ղազարյանը: Ներկա էր մարքեթինգի ամբիոնի վարիչի ժ/պ Վաղին Գրիգորյանը: Թեման ժամանակակից մարքեթինգի միտումների, մասնավորապես՝ սոցիալական ցանցերում և առևտրային համացանցում բրենդի կամ բիզնեսի առաջնորդման եղանակներին, սպառողների հետ հետադարձ կապի պահպանմանն էր վերաբերում:





**Մ**եպտեմբերի 23-ին համալսարանի բակում ուսանողները ուսխորհրդականների նախաձեռնությամբ ներկայացրին պարային ֆլեշմոբ՝ նվիրված ՀՀ Անկախության 28-րդ տարեդարձին:

**Դ**իլիջանի միջազգային դպրոցում սեպտեմբերի 22-ին տեղի է ունեցել համաշխարհային բնապահպանական համաժողով, որին մասնակցել են ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի դոցենտներ Ալիսա Գևորգյանը, Աննա Կարապետյանը և ասիստենտ Նորա Այվազյանը: Համաժողովը նվիրված է եղել կլիմայական փոփոխությունների դեմ պայքարին և քննարկել է աղբի վերամշակման, Սևանա լճի ճահճացման, մաքուր էներգետիկայի օգտագործման, ջերմոցային գազերի կառավարման հարցեր:

**Ֆ**ինանսների ամբիոնի ասիստենտ Աննա Վարդանյանի նախաձեռնությամբ կառավարման ֆակուլտետի 3-րդ կուրսում սեպտեմբերի 23-ին «Կառավարման հոգեբանություն» առարկայի դասին իր հաջողակ պատմությամբ հանդես եկավ «Բլիզզարդ» ընկերության հիմնադիր-տնօրեն, ՀՊՏՀ շրջանավարտ Արմենուհի Խաչատրյանը՝ ներկայացնելով անձնակազմի կառավարման առանձնահատկությունները, առաջնորդի հոգեբանությունը, արդյունավետ կառավարման հիմունքները:

**Ա**ռկա ուսուցման բակալավրիատի 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողները մասնակցում են MS Office-ի անվճար լրացուցիչ դասընթացների: Սա բուհի ղեկավարության նոր նախաձեռնությունն է, որը շարունակական է և ապահովելու է ուսանողի բազմակողմանի զարգացումը: Դասընթացների մեկնարկից առաջ սեպտեմբերի 25-ին ռեկտորի պաշտոնակատար Դիանա Գալոյանը հանդիպեց հայտագրված ուսանողների, տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի վարիչ Վարդան Սարգսյանի, արտաքին կապերի դեպարտամենտի տնօրեն Լուսինե Դանիելյանի, շարունակական կրթության և վերապատրաստումների բաժնի պետ Աղավնի Հակոբյանի և բաժնի աշխատակիցների հետ՝ քննարկելու դասընթացին առնչվող բովանդակային և կազ-

մակերպական հարցեր, ընդգծեց, որ ուսանողները դասընթացի նկատմամբ բավականին մեծ հետաքրքրություն են ցուցաբերել, և փորձ է արվում լրացնելու ուսանողների ոչ մասնագիտական գիտելիքների բացը: Վարդան Սարգսյանն անդրադարձավ դասընթացի բովանդակային կողմին, Աղավնի Հակոբյանն էլ պարզաբանեց կազմակերպական հարցերը: Լավեցին կարծիքներ ու առաջարկություններ: Նախատեսվում է դասընթացներ կազմակերպել նաև այլ թեմաներով:

Առկա ուսուցման բակալավրիատի 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողների համար հոկտեմբերի 1-ին անցկացվեց թեստավորում ըստ իմացության մակարդակի 4 խումբ ձևավորելու համար: Դասընթացները մեկնարկեցին հոկտեմբերի 8-ին:

**Կ**որպորատիվ կառավարման կենտրոնը, Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոնի (CIPE) հետ համագործակցության շրջանակում, սեպտեմբերի 26-ին կազմակերպել էր «Կոռուպցիայի դեմ պայքարում բիզնեսի համատեղ գործողությունների նշանակությունը» թեմայով կլոր սեղան-քննարկում, որին մասնակցում էր «Ամբերդ» կենտրոնի ավագ փորձագետ, պրոֆեսոր Սամվել Ավետիսյանը: Քննարկումը ծավալվել է Կորպորատիվ կառավարման կենտրոնի տնօրեն Նարինե Մելիքյանի և Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոնի հակակոռուպցիոն և կառավարման կենտրոնի տնօրեն Ֆրանկ Բրաունի ելույթների շուրջ:

**Ռ**եկտորի պաշտոնակատար Դիանա Գալոյանը հոկտեմբերի 1-ին հյուրընկալեց «Ֆլալեսս» կորպորացիայի (ԱՄՆ) նախագահ Ալեքսանդր Մարգարյանին, ներկա էին նաև բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչի ժ/պ Գագիկ Աղաջանյանը, տնտեսական և ինժեներատեխնիկական բաժնի պետ Արմեն Ղազարյանը: «Ֆլալեսսը» ՀՊՏՀ բուժկետին նվիրեց գույք և դեղորայք: Ալեքսանդր Մարգարյանն ընդգծեց, որ պատրաստ է աջակցել ուսանողներին, աշխատակիցներին ուղղված տարատեսակ ծրագրերի իրականացմանը:

**Լ**եզուների ամբիոնի հրավերով հոկտեմբերի 14-ին «Երիտասարդ առաջնորդների միջազգային դպրոցին (BuissUp)» մասնակցելու նպատակով Օմսկից Հայաստան ժամանած տնտեսագետ-իրավաբան Ալինա Ֆիսենկոն ռուսաց լեզվի դասաժամին (դասախոս՝ Ալլա Մկրտչյան) հյուր էր տնտեսագիտություն մասնագիտության առաջին կուրսեցիներին և զրույց վարեց այն մասին, թե ինչու և ինչպես պետք է երիտասարդները առաջնորդական հմտություններ ձևավորեն:



**Ռ**եկտորի պաշտոնակատար Դիանա Գալոյանը և գիտության գծով պրոռեկտոր Թաթուլ Մկրտչյանը սեպտեմբերի 30-ին այցելեցին ՀՊՏՀ գրադարան, շրջեցին ընթերցասրահներում, գրապահոցում, հանդիպեցին գրադարանի տնօրեն Արմինե Հովհաննիսյանին, հետաքրքրվեցին կազմակերպական և գրքային ֆոնդի խնդիրներով: Համալսարանի ղեկավարը աշխատակիցներին հորդորեց բարձրացնել սպասարկման որակը, առկա գրքերը հնարավորինս մատչելի դարձնել ուսանողներին: Ընդնարկվեցին նաև գրքային ֆոնդի հարստացման հնարավորությունները:



**Մ**արքեթինգի ամբիոնի հրավերով հոկտեմբերի 8-ին և 9-ին «Բրենդինգ» թեմայով բաց դասախոսությամբ հանդես եկավ Braind ընկերության համահիմնադիր Կարեն Բաբաջանյանը: Մասնակցում էին ոչ միայն մարքեթինգի, այլև տարբեր մասնագիտությունների ուսանողներ: Նա ներկայացրեց 8-ամյա պատմություն ունեցող ընկերությունը, ստեղծած բրենդերը, «Բրենդինգն իրականում» խորագրի ներքո խոսեց բրենդինգի առանձնահատկությունների մասին:

**ԵՊՀ** տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի և Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության նախաձեռնությամբ հոկտեմբերի 9-ին անցկացվել է «Ի՞նչ անել-2. տնտեսական հեղափոխություն. ընկալումը և գործարկումը» գիտագործնական խորհրդածողովը, որին մասնակցել են ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, գործարար և ակադեմիական շրջանակների ներկայացուցիչներ: ՀՊՏՀ-ից մասնակցել են ռեկտորի պաշտոնակատար, պրոֆեսոր Դիանա Գալոյանը և «Ամբերդ» կենտրոնի ավագ փորձագետ, պրոֆեսոր Սամվել Ավետիսյանը: Վերջինս հանդես է եկել «Ազդարային ոլորտի զարգացման հնարավորությունները ՀՀ-ում» զեկուցմամբ:

«Ռիսկերի տեսությունն և ապահովագրությունն» առարկայի դասին (դասախոս՝ բանկային գործի և ապահովագրության ամբիոնի դոցենտ Լուսինե Ղազարյան), հոկտեմբերի 16-ին բանախոսեց «Ինգո Արմենիա» ընկերության անդերոաթինգի բաժնի ղեկավար, ՀՊՏՀ ասպիրանտ Լևոն Քոչարյանը: Նա լուսաբանեց ՀՀ ապահովագրական շուկայի առանձնահատկությունները, ներկայացրեց այն իբրև ռիսկերի կառավարման մեխանիզմ, խոսեց միտունների, ապահովագրական նոր պրոդուկտների մասին:



Դպրոցների հետ համագործակցության շրջանակներում հոկտեմբերի 17-ին ՀՊՏՀ մեծ դահլիճը համախմբել էր խաչիկ Դաշտենցի անվան թիվ 114, Անդրանիկ Մարգարյանի անվան թիվ 29 և «Հերացի» ավագ դպրոցների տնտեսագիտական ու բնագիտական հոսքերում սովորող աշակերտներին: Դպրոցականներին ջերմորեն ողջունեցին համալսարանի ղեկավարությունն ու ուսանողությունը: Ռեկտորի պաշտոնակատար Դիանա Գալոյանը ներկայացրեց բուհը, ընթացիկ բարեփոխումները: ՀՊՏՀ 6 ֆակուլտետների ՌԻՍ նախագահների մասնակցությամբ տեղի ունեցավ պանելային քննարկում, որը ներկայացնում էր ֆակուլտետների, մասնագիտությունների առավելությունները, անցկացվեց գիտելիք ստուգող խաղ, ցուցադրվեցին տեսանյութեր, որոնք արտացոլում էին բուհական կյանքը, ուսանողական առօրյան: Ուս նախագահի տեղակալ Իռեն Թալալյանը ներկայացրեց ՌԻՍ գործունեության ուղղությունները, իսկ ընդունելության գործընթացը մանրամասնեց ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Մանուկ Մովսիսյանը:

Աշակերտները շրջեցին համալսարանի տարածքում, ծանոթացան ֆակուլտետներին, այցելեցին գրադարան, մարզադահլիճ:

Միջոցառումը կազմակերպել էին արտաքին կապերի ղեկարարամենտը՝ ՌԻՍ-ի հետ համատեղ և մարքեթինգի ամբիոնի դոցենտ, ուսանողների հետ տարվող աշխատանքների գծով ռեկտորի խորհրդական Լիլիթ Դադայանը:

«Միջազգային տնտեսական հարաբերություններ» առարկայի դասաժամին (դասախոս՝ ՄՏՀ ամբիոնի ասիստենտ Կարմեն Գրիգորյան), հոկտեմբերի 16-ին կառավարման ֆակուլտետի հեռակա կրթաձևի 5-րդ կուրսերի համար թվային արժույթների մասին զեկուցում ներկայացրեց ֆինանսներ մասնագիտության 4-րդ կուրսեցի Անի Եղոյանը (բլոկչեյն, մայնինգ հասկացությունները, բիթքոյնների կիրառության ընդլայնման հեռանկարները, ռիսկերը):

Հոկտեմբերի 16-18-ը երևանում կայացել է Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST) կողմից կազմակերպվող «Փոխակերպելով բանականությունը» խորագրով գլոբալ ինովացիոն համաժողովը: Սեպտեմբերի 26-ին ՀՊՏՀ-ում հիմնադրամի տվյալագիտության փորձագետ Միեր Մաթևոսյանը և հաղորդակցման և սոցիալական մեդիայի մասնագետ Արմինե Պետրոսյանը ներկայացրին սպասվող համաժողովի բովանդակային կողմը:

Եռօրյա այս համաժողովի շրջանակում, հոկտեմբերի 18-ին ՀՊՏՀ մեծ դահլիճում ՀՀ ԿԲ-ի հետ համատեղ տեղի ունեցավ «Սոդեվալորման բարդությունները տնտեսագիտության մեջ» թեմայով պանելային բաց քննարկում, որին մասնակցում էին ռեկտորի պաշտոնակատար Դիանա Գալոյանը, արտաքին կապերի ղեկարարամենտի տնօրեն Լուսինե Դանիելյանը, դասախոսներ, աշխատակիցներ, ուսանողներ ու ասպիրանտներ: Ձեկուցումներով հանդես եկան Թաֆթս համալսարանի (ԱՄՆ) պրոֆեսոր Բոյուս Բոգոսյանը՝ «Վիճակագրական ֆիզիկայի կիրառությունը տնտեսագիտության մեջ», Մերիլենդի համալսարանի (ԱՄՆ) պրոֆեսոր Վիկտոր Յակովենկոն՝ «Տնտեսական անհավասարությունը վիճակագրական ֆիզիկայի տեսանկյունից», Հռոմի Սապիենզա համալսարանի պրոֆեսոր Լուչիանո Պիետրոներոն՝ «Տնտեսական համապատասխանությունը և բարդությունը» թեմաներով: Քննարկման մոդերատորը ՀՀ ԿԲ խորհրդի անդամ Մարտին Գալստյան էր:

«Էրեբունի-Երևան-2801» տոնակատարությանն ընդառաջ համալսարանի բակում ՌԻՍ նախաձեռնությամբ հնչում էին մայրաքաղաքին նվիրված երգեր, հ/հ և աուդիո ֆակուլտետի ուսանողական խորհուրդն էլ հյուրասիրում էր անուշեղեն ու գինի: Անցկացվեց նաև խաղ-մրցույթ: Բուհի ղեկավար Դիանա Գալոյանը, հ/հ և աուդիո ֆակուլտետի ղեկան Մերի Բադալյանը, դասախոսներն ու աշխատակիցները միացան ֆլեշմոբին:

Բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնը նախաձեռնել է արտագնա ուսումնական պարապմունքներ գործնական միջավայրում: Հոկտեմբերի 18-ին բնօգտագործման տնտեսագիտություն մասնագիտացման մագիստրատուրայի 1-ին կուրսը «Տեղեկատվության տրամադրման կանոնակարգերը բնօգտագործման տնտեսագիտությունում» առարկայի դասին հյուրընկալվել է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեում: «Առջանց միջավայրում երկրատեղեկատվական համակարգերի միջոցով ջրային համակարգերի էլեկտրոնային կառավարում» թեմայով դաս է վարել բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի դոցենտ, Ջրային կոմիտեի մոնիթորինգի և վերլուծությունների վարչության պետի տեղակալ Գևորգ Ալոյանը, թեմայի շուրջ պարզաբանումներ է կատարել նաև կոմիտեի ոռոգման և կոլեկտորադրենաժային համակարգերի վարչության խորհրդակալ, բնօգտագործման տնտեսագիտություն մասնագիտության շրջանավարտ Սուրեն Նազարյանը:

ՄՏՀ ամբիոնի ասիստենտ Ալբերտ Հայրապետյանը հոկտեմբերի 15-18-ը Ուզբեկստանի մայրաքաղաք Տաշքենդում մասնակցել է Բրիտանական խորհրդի կազմակերպած «Անգլերենի դերը բարձրագույն կրթության մեջ և վերջինիս ազդեցությունը շրջանավարտների աշխատանք գտնելու վրա» միջազգային գիտաժողովին, որի նպատակն էր պարզել, թե որքանով է ոչ անգլալեզու երկրների բուհերում անգլերենով դասավանդումը նպաստում ուսանողների մասնագիտական աճին: Մասնակիցները 8 երկրների կրթության ոլորտի պաշտոնյաներ էին, դասախոսներ, որոնք դասավանդում են անգլերենով: Ավարտին մասնակիցներին իր կեցավայրում ընդունել է Ուզբեկստանում ՄԹ դեսպան Թիմ Թուրլոտը:

Ալբերտ Հայրապետյանը պատրաստակամ է՝ ձեռք բերած գիտելիքը փոխանցել գործընկեր դասախոսներին, որոնք մասնագիտական առարկաները դասավանդում են անգլերենով:

«Արտաքին տնտեսական գործունեության տրանսպորտային ապահովում» առարկայի դասախոս, ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետի ղեկան, ՄՏՀ ամբիոնի վարիչի Ժ/պ, դոցենտ Գրիգոր Նազարյանը տնտեսագիտություն մասնագիտության 4-րդ կուրսում «Ավտոմոբիլային միջազգային փոխադրումներ» թեմայով բանախոսելու էր հրավիրել «Սաթի» միջազգային բեռնափոխադրումներ և տուրիզմի գործակալություն» ՓԲԸ տնօրեն Սակար Առաքելյանին: Բաց դասին ներկա էին ամբիոնի դասախոսներ:



# Դափնեկիրներն են Մայլ Կրեմերը, Աբիջիդ Բաներջին, Էսթեր Դուֆլոն



Յուրեղների 7-14-ը Ստոկհոլմում կայացավ 118-րդ Նոբելյան շաբաթը: Շվեդիայի գիտությունների թագավորական ակադեմիան առաջին օրը հրապարակեց ֆիզիոլոգիայի և բժշկության բնագավառի դափնեկիրների անունները՝ բրիտանացի **Փիտեր Ռետկլիֆ** և ամերիկացիներ **Ուիլյամ Քելին** կրտսեր ու **Գրեգ Սենենցա**: Ֆիզիկայի բնագավառի դափնեկիրը հայտնի դարձավ հոկտեմբերի 8-ին՝ կանադացի **Ջեյմս Փիլս** և Շվեյցարիայի ներկայացուցիչներ **Միշել Մայոր** և **Դիդյե Կելո**, քիմիային՝ հոկտեմբերի 9-ին՝ ամերիկացի ֆիզիկոս **Ջոն Գուդենաֆ**, բրիտանացի քիմիկոս **Ստենլի Ուիտհինսեն** և ճապոնացի քիմիկոս **Ակիրե Իոշինո**: Հաջորդ օրը հայտնի դարձան գրականության ոլորտի 2018 և 2019 թթ. դափնեկիրները, քանի որ անցյալ տարի այդ մրցանակը չէր շնորհվել: 2018 թ. դափնեկիր դարձավ լեհ գրող **Օլգա Տոկարչուկը**, 2019 թ.՝ ավստրիացի գրող և դրամատուրգ **Պետեր Հանդկեն**: Յուրեղների 11-ին Խաղաղության նոբելյան մրցանակակիր հռչակվեց Եթովպիայի վարչապետ **Աբիյու Ահմեդ Ալին**:

Նոբելյան շաբաթն ավարտվեց Ալֆրեդ Նոբելի հիշատակի մրցանակաբաշխությամբ՝ հայտնի դարձնելով տնտեսագիտության բնագավառի նոր դափնեկիրներին: Եվ այսպես ամերիկացի տնտեսագետներ **Մայքլ Կրեմերը**, **Աբիջիդ Բաներջին** և ծագումով ֆրանսիացի, ամերիկացի տնտեսագետ **Էսթեր Դուֆլոն** մրցանակն ստացան աղքատության դեմ պայքարի փորձարարական մոտեցման համար:

Նոբելյան կոմիտեի հաղորդագրության մեջ մասնավորապես ասված է. «**Չնայած վերջին կտրուկ փոփոխություններին, մարդկության ամենահրատապ խնդիրներից մեկը գլոբալ աղքատության կրճատումն է՝ բոլոր ձևերով: Ավելի քան 700 միլիոն մարդ դեռ գոյատևում է ծայրահեղ ցածր եկամտով: Ամեն տարի հինգ տարեկանից ցածր հինգ միլիոն երեխա մահանում է հիվանդություններից, որոնք կարելի էր կանխել կամ բուժել ոչ թանկ դեղամիջոցներով: Աշխարհի երեխաների կեսը դեռևս լքում է դպրոցը՝ առանց հիմնական գրագիտության և տարրական հմտությունների, ապա՝ Այս տարվա դափնեկիրները մի նոր մոտեցում են ներկայացրել՝ ստանալու համար հստակ պատասխաններ, թե որոնք են աշխարհում աղքատության դեմ պայքարի լավագույն ուղիները»:**

Գիտնականները համաշխարհային աղքատությունը մեղմելու գլոբալ հիմնախնդրի լուծումը տեսնում են մաս առ մաս, որի դեպքում առանձին կարգավորումները վերջնական արդյունքում հանգեցնում են ընդհանուր խնդրի լուծմանը: Օրինակ, Մայքլ Կրեմերը և նրա գործընկերները 1990-ական թվականներին ապացուցեցին, որ առանձին քայլերի հաջորդականությամբ կարելի է բարելավել Արևմտյան Քենիայի աշակերտների առաջադիմությունը և ցույց տվեցին, թե որքան հզոր կարող է լինել փորձարարական մոտեցումը. նրանք դաշտային փորձեր կիրառեցին՝ թեստավորելու համար այն միջոցները, որոնք կարող էին բարելավել Արևմտյան Քենիայի դպրոցական կրթական արդյունքը:

Նոբելյան կոմիտեի հաղորդագրությունում նրշվում է. «**Դափնեկիրների, ինչպես նաև նրանց հետևորդ այլ գիտնականների հետազոտությունների արդյունքները էականորեն բարելավել են աղքատության դեմ պայքարի մեր հնարավորությունները**»: Որպես օրինակ՝ այդ հետազոտությունների շնորհիվ 5 միլիոն հնդիկ երեխա դպրոցներում օգտվել է շտկող (կորեկցիոն) կրթության ծրագրերից, և շատ երկրներում լրահատկացումներ են կատարվել կանխարգելիչ առողջապահության համակարգում:

Բենեբջին և Դուֆլոն, երբեմն Կրեմերի հետ համագործակցությամբ, համանման հետազոտություններ են կատարել այլ հարցերի շուրջ ևս և ուրիշ երկրներում: Նրանք ցույց են տվել, որ դպրոցները դասագրքերով ապահովելը չի ավելացնի երեխաների գիտելիքը. կրթության մակարդակի բարձրացման համար հարկավոր է բարելավել դասավանդման որակը և զարգացնել աշակերտի նկատմամբ անհատական մոտեցումը: «**Նրանց հետազոտական մեթոդներն այժմ լիիրավ կերպով գերիշխում են զարգացման տնտեսագիտության մեջ**», ասվում է կոմիտեի հաղորդագրությունում: Դափնեկիրներն իրենց մոտեցումները կիրառել են նաև միկրոֆինանսավորման և բժշկական ծառայությունների արժեքի ուսումնասիրության մեջ:

Լրագրողների այն հարցին, թե ինչպես է մտադիր ծախսել մրցանակը, Դուֆլոն հիշել է Նոբելյան դափնեկիր Մարիա Սկլոդովսկայա-Կյուրիի խոսքերը՝ նշելով, որ ինքը մտադիր է այդ գումարով գնել «մեկ գրան՝ ռադիոն»\*: «**Կարծում եմ՝ երեքս միասին**

\* Նոբելյան երկու մրցանակի դափնեկիր Մարի Կյուրին ճամփորդում էր՝ նպատակ ունենալով միջոցներ հայթայթել ռադիոնի հատկությունները բացահայտելու համար: 1921 թ. նա մեկնում է Միացյալ Նահանգներ, որպեսզի իր փորձերը շարունակելու համար 1 գրան ռադիոն նվեր ստանա: 1929-ին Միացյալ Նահանգներ կատարած իր երկրորդ այցի ընթացքում նա ստանում է նվիրատվություն, որով ձեռք է բերում ևս մեկ գրան ռադիոն՝ Վարշավայի հիվանդանոցներից մեկում բուժական օգտագործման համար:

**կքննարկենք և կորոշենք, թե ինչն է մեզ համար մեկ գրամ ռադիումը»,** - ասել է Դուֆլոն:

Նա նաև նշել է, որ աղքատները հաճախ են պատկերվում ծաղրանկարներում, և նույնիսկ նրանք, ովքեր փորձում են օգնել, խորությամբ չեն ըմբռնում, թե ինչու են այդ մարդիկ ապրում աղքատության մեջ: **«Մենք ցանկանում ենք մեկը մյուսի հետևից բացահայտել մեր առջև ծառայած հիմնախնդիրները և մեթոդապես զբաղվել դրանց լուծմամբ**», - ասել է Դուֆլոն:

Դաշտային հետազոտությունների ընթացքում տնտեսագետները ոչ միայն ստուգել են որոշ մեթոդների գործնական կիրառությունը, այլև պայմանագրերի տեսության և վարքագծային տնտեսագիտության դրույթներով փորձել են հասկանալ՝ ինչու են հենց դրանք աշխատում, որոշումներ ընդունելիս ինչն է առաջ մղում մարդկանց: Ըստ Դուֆլոյի՝ **«Զարգացող երկրներում աղքատության դեմ պայքարի հա-**

ճան, ապա պրոֆեսորի կոչում: Նա մասնակցել է նաև Առաջնային շուկայի պարտավորություն (Advance Market Commitment – AMC) սխեմայի ստեղծմանը, որի համաձայն՝ զարգացող երկրներին ուղղված պատվաստանյութերի շուկան ավելի զրավիչ է դառնում արտադրողների համար՝ դրանք նախապես համաձայնեցված պայմաններով ձեռք բերելու պարտավորությունների հիման վրա: Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության մեկնաբանության՝ արտադրողները շուկայի այս հատվածը համարում են շատ ռիսկային, և AMC-ը թույլ է տալիս **«վերացնել որոշ ռիսկեր՝ պատվաստանյութերով զբաղվող ընկերություններին խրախուսելով մեծացնել ներդրումները՝ նպատակային արտադրանք մշակելու և արտադրելու համար»:** Առաջին ցման սխեման գործարկվել է 2009 թ., երբ Մեծ Բրիտանիայի, Կանադայի, Իտալիայի, Նորվեգիայի և Ռուսաստանի կառավարությունները, ինչպես նաև



**մար օգտագործվող փորձարարական մոտեցումները կարող են կիրառվել նաև «զարգացած երկրներում» ծանր ծակատագրեր ունեցող մարդկանց օգնելու համար»:**

**Աբիջիդ Բենեդիկտ** ծնվել է 1961 թ. հնդկական Մուներայ քաղաքում: Դոկտորի գիտական աստիճանն ստացել է Զարվարդի համալսարանում, այժմ Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի պրոֆեսոր է: Նա եղել է Էսթեր Դուֆլոյի դոկտորական ատենախոսության գիտական ղեկավարը, հետագայում դարձել նրա ամուսինը:

**Էսթեր Դուֆլոն** ծնվել է 1972 թ. Փարիզում, 1999-ին գիտությունների դոկտորի աստիճան ստացել է Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտում: Բենեդիկտ և Դուֆլոն համատեղ հեղինակել են **«Աղքատության տնտեսագիտություն. աշխարհում աղքատության դեմ պայքարի միջոցների արմատական վերաիմաստավորում»** գիրքը: 46-ամյա Դուֆլոն տնտեսագիտության բնագավառի Նոբելյան մրցանակի երկրորդ կին դափնեկիրն է (2009 թ. մրցանակը շնորհվել է ամերիկուհի Էլինոր Օստրոմին), մրցանակին արժանացած ամենաերիտասարդ տնտեսագետը:

**Մայլ Կրեմեր** ծնվել է 1964 թ.: 1992-ին Զարվարդի համալսարանում ստացել է դոկտորի աստի-


ճան, ապա պրոֆեսորի կոչում: Նա մասնակցել է նաև Առաջնային շուկայի պարտավորություն (Advance Market Commitment – AMC) սխեմայի ստեղծմանը, որի համաձայն՝ զարգացող երկրներին ուղղված պատվաստանյութերի շուկան ավելի զրավիչ է դառնում արտադրողների համար՝ դրանք նախապես համաձայնեցված պայմաններով ձեռք բերելու պարտավորությունների հիման վրա: Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության մեկնաբանության՝ արտադրողները շուկայի այս հատվածը համարում են շատ ռիսկային, և AMC-ը թույլ է տալիս **«վերացնել որոշ ռիսկեր՝ պատվաստանյութերով զբաղվող ընկերություններին խրախուսելով մեծացնել ներդրումները՝ նպատակային արտադրանք մշակելու և արտադրելու համար»:** Առաջին ցման սխեման գործարկվել է 2009 թ., երբ Մեծ Բրիտանիայի, Կանադայի, Իտալիայի, Նորվեգիայի և Ռուսաստանի կառավարությունները, ինչպես նաև

«Բիլ և Մելինդա Գեյթս հիմնադրամը» խոստացան 1,5 մլրդ դոլար տրամադրել թոքաբորբի պատվաստանյութերի ձեռք բերման համար: Տնտեսագետները աղքատությունն ուսումնասիրել են 19-րդ դարի կեսերից սկսած, սակայն դրանցում հիմնականում տեսական հետազոտությունների միջոցով փորձում էին գտնել այն բնորոշ գծերը, որոնք աղքատներին տարբերակում են հասարակության մյուս հատվածից: Աղքատության դեմ պայքարն առաջարկվում էր խթանների միջոցով, որոնց արդյունավետությունը հազվադեպ էր ստուգվում փորձով:

**Չիչեցնենք, որ ի տարբերություն ֆիզիոլոգիայի և բժշկության, ֆիզիկայի, քիմիայի, գրականության, ինչպես նաև խաղաղության մրցանակների, տնտեսագիտության մրցանակը Նոբելը չի սահմանել, այլ՝ Շվեդիայի բանկը՝ 1969 թ.: Մրցանակի գումարային չափը նույնքան է, որքան մյուսներինը: Այս տարի այն կազմում է 9 մլն շվեդական կրոն (ավելի քան 900 հազ. դոլար) և հավասարաչափ կբաշխվի դափնեկիրների միջև:**

**Պատրաստեց ԱՐՄԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ**  
*Լուսանկարը՝ nobelprize-ից*

# e-Buh. էլեկտրոնային կառավարման միասնական հարթակում



Մեր համալսարանում ներդրված e-Buh ուսումնական գործընթացների կառավարման ավտոմատացված համակարգը տալիս է առաջին արդյունքները: Էլեկտրոնային եղանակով կառավարելու հնարավորությամբ համակարգն իր բոլոր բաղադրիչներով ներդրվում է բուհի ուսումնական կյանքում: 2018-2019 ուսումնական տարվա շրջանավարտների ավարտական վկայականների (դիպլոմների) հավելվածների (միջուկ) տպագրման գործընթացն արդեն իսկ իրականացվել է ավտոմատացված համակարգով: Այս մասին մեզ հետ զրույցում հայտնեցին էլեկտրոնային սարքավորումների սպասարկման և ծրագրային ապահովման բաժնի պետ Սամվել Յովհաննիսյանն ու բաժնի ծրագրավորող Յուրի Սիմե Օսիպյանը: Մեր գործընկերների ներկայացմամբ՝ այս համակարգով դիպլոմների հավելվածների տպագրությունը մեծ առավելություն ունի ավանդաբար տպագրվող եղանակի նկատմամբ. նախ՝ բոլոր հավելվածները բերվել են միասնական ձևաչափի, ծրագրային միջամտությունը նվազեցրել է սխալների հավանականությունը, ժամանակի, նյութական ծախսերի նշանակալի խնայողություն է արձանագրվել:

Սամվել Յովհաննիսյանն ընդգծեց, որ համակարգի ներդրման գործընթացները զրեթե բոլոր ֆակուլտետներում լիարժեք կիրառման փուլում են:

Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի դեկան Գրիգոր Նազարյանը համակարգի գործարկմանը մասնակցում է այս տարվա սկզբից: Սերտ համագործակցելով ծրագրավորողների թիմի հետ՝ նա ստացել է ծրագրային ապահովումը և սկսել ներդրման գործընթացն ամբողջ ծավալով: «Այս համակարգը հնարավորություն է տալիս բուհի ամբողջ ուսումնական գործընթացը համակարգել էլեկտրոնային եղանակով, և ամենակարևորը՝ տեղեկատվության ամբողջական հասանելիությունն ապահովել, ինչը շատ կարևոր գործիք է բուհը կառավարելիս», - ասաց դեկանը: Գրիգոր Նազարյանի ներկայացմամբ՝ համակարգն ունի մի քանի բաժիններ՝ «Դասացուցակ», «Ուսանող», «Ուսումնական», «Աշխատակից», «Հաշվառում», «Առաջադիմություն» և այլն, ինչպես նաև ուսանողների կարգավիճակի, հաշվետվությունների, տեղեկանքների, դասաբաշխումների կարգավորման այլ դաշտեր, որոնց շնորհիվ ուսումնական գործընթացի վերաբերյալ բոլոր տեղեկությունները ամբողջական ձևով առկա են մեկ հարթակում, և համակարգի վերջնական ներդրման ավարտին հասանելիություն կտրվի բոլոր շահառուներին:

«Առաջիկայում կսկսենք զուգահեռ վարել նաև

էլեկտրոնային մատյանները՝ թե՛ գնահատման, թե՛ բացակայությունների: Նախատեսվում է այդ արդյունքները միանգամից արտացոլել ստուգաթղթային և քննական տեղեկագրերում: Էլեկտրոնային այս հարթակը հնարավորություն է տալիս ծիշտ հաշվառելու ուսանողների ամբողջ պատմությունը: Ուսանողների գնահատականների պատկերը ևս ամբողջովին ավտոմատացված է», - նշեց Գրիգոր Նազարյանը:

ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետում ուսումնական գործընթացի կառավարման ավտոմատացված համակարգը զգալի բարելավել է ուսումնականակերպական աշխատանքը: Ֆակուլտետի ղեկավարի խոսքով՝ ամբողջական տեղեկատվության հասանելիությունն ու կառավարումը իրենց դրական ազդեցությունը կթողնեն ուսումնական ամբողջ գործընթացի վրա:

Մի քանի ֆակուլտետների՝ 2018-2019 ուսումնական տարվա դիպլոմների հավելվածները արդեն իսկ տպագրվել են էլեկտրոնային այս համակարգով: Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի դեկանատի աշխատակից Մերի Աբգարյանը կարևորեց հետևյալը՝ համալսարանի կառավարման ավտոմատացված համակարգը հնարավորություն է տալիս դիպլոմները և հավելվածները տպագրել զրեթե համաժամանակյա, այսինքն՝ շրջանավարտները կկարողանան այսուհետ իրենց դիպլոմները ստանալ հավելվածների հետ միասին:

Ուսումնական գործընթացի կազմակերպման բաժնի պետ Գայանե Մերդինյանի խոսքով՝ դեռևս 2016 թվականից համակարգի նախագծման և 2017 թվականին ՀԳՏՀ-ին տրամադրված ծրագրի ներդրումից և իրագործման լայնածավալ աշխատանքներից անցել է երկու տարի, որի արդյունքն E-buh-ն է:

«Այն հատուկ մշակվել և լրամշակվել է ՀԳՏՀ-ի ուսումնական գործընթացի կազմակերպմանը համահունչ, վերջնական իրագործումից առաջ իրականացվել են բազմաթիվ փորձարարական աշխատանքներ, մասնավորապես՝ ինֆորմատիկայի և վիճակագրության ու տնտեսության կարգավորման և ՄՏՀ ֆակուլտետների կողմից: E-buh համակարգն ունի ամենալայն հնարավորությունները ուսումնական գործընթացի կազմակերպումը դյուրացնելու, ամբողջական տեղեկատվությունը էլեկտրոնային հարթակ տեղափոխելու և թղթատարությունից «թեթևանալու» համար», - ասաց նա:

ՀԳՏՀ մյուս ֆակուլտետներում էլեկտրոնային համալսարանի գործարկման արդյունքներին կանդիդատանքը հաջորդիվ:

ԳՐԳՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

**Հ**ունիսի 3-7-ը աշխատանքի տնտեսագիտության ամբիոնի դրոցենտ Մարիա Սահակյանը Պոզնանի տնտեսագիտական համալսարանում (Լեհաստան) ինովացիոն կառավարում մասնագիտության միջազգային մագիստրոսական խմբում դասախոսել է «Կարիերայի կառավարում», «Անձնակազմի ուսուցում և զարգացում», «Վարձատրության և պարզևատրման տեսական հիմքերը և առանձնահատկությունները ԴԴ-ում», «Կառավարչական որոշումների ընդունումը» թեմաներով, միջազգային կապերի բաժնի հետ քննարկել է համագործակցության հարցեր: Դասախոս Մացեյ Բոզոզովսկին ցանկություն է հայտնել Հայաստան ժամանելու, ինչպես նաև Մարիա Սահակյանի հետ ՄՈԿ հիմնախնդիրների շուրջ գիտական հոդված հեղինակելու:

**Ա**շխատանքի տնտեսագիտության ամբիոնի վարիչի ժ/պ, պրոֆեսոր Անահիտ Մելքունյանը՝ հունիսի 17-21-ը, ֆինանսական հաշվառման ամբիոնի ասիստենտ Անուշ Գասպարյանը, ֆինանսների ամբիոնի ասիստենտ Վանինե Երանոսյանը՝ հունիսի 1-7-ը Էդինբուրգի Նափիեր համալսարանում (Մեծ Բրիտանիա) մասնակցել են վերապատրաստման դասընթացների: Այցը համակարգել է կիրառական, սոցիալական գիտությունների ֆակուլտետի դոկտոր Կիրիլ Շարապովը:

Անուշ Գասպարյանը մասնակցել է «Հետազոտության քանակական մեթոդներ SPSS ծրագրի միջոցով» դասընթացին, հանդիպել է ասպիրանտուրայի բաժնի ղեկավար, դոկտոր Ֆիոնա Սթյենսբիին: Վանինե Երանոսյանը մասնակցել է «Որակական ուսումնասիրությունների չափման մեթոդները» (NVIVO ծրագրով) թեմայով վերապատրաստման: Յուրաքանչեք մեթոդը նա կիրառելու է հետազոտական ծրագրում: Անահիտ Մելքունյանը վերապատրաստման ընթացքում ծանոթացել է ուսուցման նոր տեխնոլոգիաների, քննարկել հոդվածներ հրատարակելու, միջբուհական և միջամբիոնային այլ համատեղ անելիքներ:

**Ա**թենքի տնտեսագիտության և գործարարության համալսարանում հունիսի 24-28-ը, անձնակազմի վերապատրաստման շաբաթի միջոցառման շրջանակներում, արժարժվել են բուհական կրթության կազմակերպման աջակցող ստորաբաժանումների աշխատանքի բարելավմանն ուղղված հարցեր: ՀՊՏՀ-ն ներկայացրել են արտաքին կապերի դեպարտամենտի տնօրեն Պարույր Ջանգուլյանը, ուսումնական գործընթացի կազմակերպման բաժնի պետ Գայանե Մերդինյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Մերի Դալլաքյանը, միջազգային կապերի բաժնի գլխավոր մասնագետ Մարգարիտ Մարուքյանը, աշխատակիցներ Ալվարդ Սիմոնյանը, Ալինա Քթոյանը:

Ձեկուցումներ են հնչել միջազգային կապերի պատասխանատուների աշխատանքի, կորպորատիվ սոցիալական պատասխանատվության և գործարար էթիկայի, հանրային կապերի ռազմավարության հիմնահարցերի և այլնի վերաբերյալ: Մասնակիցները եղել են բուհի նորարարության և ձեռներեցության կենտրոնում: Մարգարիտ Մարուքյանը ներկայացրել է ՀՊՏՀ կրթական ծրագրերը, ինչպես նաև Հայաստանում բնակվելու, գործարարությամբ զբաղվելու և ուսումնառության առավելությունները: Պայմանավորվածություններ են ձեռք բերվել Ազգերի բարեկամության ռուսական համալսարանի և Ռոտերդամի կառավարման դպրոցի ներկայացուցիչների հետ:

**Հ**ունիսի 8-12-ը Պուլայի Յուրայ Դոբրիլայի (Խորվաթիա) համալսարան են այցելել կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի լաբորանտ Արփինե Հակոբյանը, «Ամբերդ» կենտրոնի փորձագետ Շուշան Մովսիսյանը, մարքեթինգի ամբիոնի լաբորանտ Մանուշ Քալանթարյանը: Վարչական աշխատակիցների վերապատրաստման ծրագրի շրջանակում նրանց ընդունել է միջազգային ծրագրերի համակարգող Իվոնա Պետերնելը, քննարկվել են վարչական աշխատակիցների համագործակցությունը սերտացնելու հնարավորություններ: ՀՊՏՀ-ականները ներկայացրել են մեր համալսարանի ձեռքբերումները և զարգացման հեռանկարները, միջդիսցիպլինար, իտալական և մշակութային ուսումնասիրությունների բաժնի դասախոս Սանյա Դոլենեկի հետ քննարկել են համատեղ հետազոտական աշխատանքի հնարավորությունները:

**Հ**ունիսի 22-26-ը Պորտոյի համալսարան են (Պորտուգալիա) այցելել տնտեսական և ինժեներատեխնիկական բաժնի պետ Արմեն Ղազարյանը, ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետի ղեկանի տեղակալ Արսեն Պետրոսյանը, միջազգային կապերի բաժնի առաջատար մասնագետ Լիլիթ Սկրտչյանը, լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի լրագրող Նանե Ավանեսյանը, տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի լաբորանտ Լիլիթ Ազարյանը, «Ամբերդ» կենտրոնի ավագ հետազոտող Գայանե Թովմասյանը, նույն կենտրոնի կրտսեր հետազոտող Ռուզան Թադևոսյանը: Պորտոյում էին նաև ՀՊՏՀ Գյուլնուր մասնաճյուղի տնօրենի ժ/պ Կարեն Պետրոսյանը, աշխատակից Արփինե Սարգսյանը:

Միջազգային գրասենյակի տնօրեն Բարբարա Կոստան, աշխատակիցներ Անա Սոֆիա Ֆերբեիրան և Ռիտա Սանտոսը ծանոթացրել են համալսարանին: ՀՊՏՀ գործունեությունը ներկայացրել է Լիլիթ Սկրտչյանը:

Գյուլնուր մեր գործընկերները մասնակցել են մարդկային ռեսուրսների կառավարման թեմայով վերապատրաստման: Իսկ հունիսի 24-ին Ա. Ղազարյանը, Ա. Պետրոսյանը, Կ. Պետրոսյանը, Լ. Սկրտչյանը այցելել են Մինյոյի համալսարան: Հանդիպումը կազմակերպել էր Հովհաննես Գաբրիելյանը, ով հյուրընկալվել էր Մինյոյի համալսարանում ֆուտբոլի համալսարանական Եվրոպայի առաջնության շրջանակներում՝ որպես ՀՍԵԱ նախագահության անդամ: Մեր պատվիրակները հանդիպել են պրոռեկտորներ Անտոնիո Պախասանյի և Կարլա Մարտինսի հետ: Քննարկվել է Մինյոյի տնտեսագիտության և մենեջմենթի դպրոցի հետ համագործակցության հնարավորությունը: Հունիսի 26-ին այցելել են Պորտոյի պոլիտեխնիկական համալսարան, հանդիպել պրոռեկտոր Էնրիկե Կուրադոյի, միջազգայնացման հարցերով պատասխանատու Կրիստինա Պինտո դո Սիլվայի, այլ աշխատակիցների հետ:

**Ա**պտեմբերի 10-ին ՀՊՏՀ-ում ծրագրի տեղեկատվական հանդիպմանը մասնակիցներին ողջունեցին մեկ կիսամյակ Ցենովի տնտեսագիտական ակադեմիայում (Բուլղարիա) ուսանած ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետի ուսանող Տիգրան Ղալայանը և ֆինանսական ֆակուլտետի ուսանող Խոսրոսյանը՝ ներկայացնելով իրենց փորձը:

Միջազգային կապերի բաժնի պետ Վարդ Դուկասյանը հետաքրքրաշարժ խաղի միջոցով ստուգեց ուսանողների ծրագրի իմացությունը, պարզաբանեց հաճախակի տրվող հարցեր:

«Բարձրագույն կրթության միջառարկայական բարեփոխումներ՝ զբոսաշրջության կառավարման և կիրառական երկրատեղեկատվական համակարգերի մասնագիտական ոլորտների կրթական ծրագրերում» (Յերթթագ) ծրագրի ավարտից հետո կայունության ու շարունակականության մշտադիտարկման նպատակով հուլիս 4-ին ՅՊՏՀ այցելեցին Հայաստանում «Էրազմուս+»-ի ազգային գրասենյակի համակարգող Լանա Կառլովան և ծրագրի պատասխանատու Էդիթ Սողոմոնյանը:

Նրանց հյուրընկալեցին ռեկտորի պաշտոնակատար Ռուբեն Հայրապետյանը և գիտության գծով պրոռեկտոր Տիգրան Մնացականյանը: Հյուրերը ներկայացրին ծրագրի գործողությունները, ազդեցությունը համալսարանում, անդրադարձան նախագծերի կառավարման համատեղ մագիստրոսական կրթական ծրագրին՝ որպես ծրագրի հավելյալ արդյունքի, հանդիպեցին աշխատանքային խմբին, այցելեցին երկրատեղեկատվական համակարգերի լաբորատորիա, որը ՅՊՏՀ-ում ստեղծվել է նշված ծրագրով:

Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնը 2018-2019 ուստարվա ընթացքում դիմել էր ԵՄ-ից համաֆինանսավորվող «Ժամ Մոնե» ծրագրին և շահել: Արդյունքում 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակից ամբիոնը կդասավանդի նշված մոդուլը: Այն ներառում է «ԵՄ ինստիտուտներ և որոշումների կայացման մեխանիզմներ», «Եվրոպական տնտեսական ինտեգրացիա», «Եվրամիությունը և աշխարհը» առարկաները: ՄՏՀ մասնագիտության մագիստրոսական ծրագրերը փոփոխվել են ներառելով վերոնշյալ երեք առարկաները: Ծրագրի հայտատիումները մշակել են և կդասավանդեն ամբիոնի պրոֆեսորներ Դիանա Գալոյանը և Ջոյա Թադևոսյանը, ասիստենտ Ալբերտ Հայրապետյանը: Ծրագրի տևողությունը 3 տարի է:

Սեպտեմբերի 12-ին, 13-ին և 16-ին, հոկտեմբերի 8-ին, 9-ին, 10-ին և 11-ին արտաքին կապերի դեպարտամենտը կազմակերպել էր անգլերենի անվճար քննություններ՝ «Էրազմուս+»-ի կրթաթոշակի դիմել ցանկացող այն ուսանողների համար, որոնք չունեն օտար լեզվի իմացությունը հավաստող փաստաթուղթ: Մինչ թեստային աշխատանքը դիմորդներին ողջունեցին արտաքին կապերի դեպարտամենտի տնօրեն Լուսինե Դանիելյանը և Վարդ Ղուկասյանը, ծանոթացրին քննության անցկացման կարգին:

Սեպտեմբերի 18-21-ը ԲՊՀ-ում (Բելառուս) կայացել է eDrone (ՀԳ2) ծրագրի հերթական աշխատաժողովը, որին մասնակցել են մարքեթինգի ամբիոնի վարիչի Ժ/պ, դոցենտ Վադիմ Գրիգորյանը, նույն ամբիոնի դոցենտ Լիլիթ Դադայանը և տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի ասիստենտ Արգամ Արտաշյանը: Նրանք զեկուցումներ են լսել Բելառուսում անօդաչու թռչող սարքերի կիրառման վերաբերյալ, ծանոթացել դրոնների կիրառման միջազգային փորձին, քննարկել տեղայնացնելու հնարավորությունները:

Սեպտեմբերի 26-ին մարքեթինգ մասնագիտության 4-րդ կուրսում «Նորանվտուրությունների մարքեթինգ» առարկայի սեմինարին Լիլիթ Դադայանը գործնական առաջադրանք հանձնարարեց՝ թիմային աշխատանքի միջոցով ներկայացնել Հայաստանում դրոնների կիրառությունն ընդլայնող առաջարկություն կամ բիզնես-պլան, որը կարող է դառնալ ստարտափ: Վադիմ Գրիգորյանը ներկայացրեց ծրագրի մանրամասները:

«Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ տնօրինությունը դիմել է ՅՊՏՀ-ին միջազգային ծրագրի գործընկերը դառնալու ցանկությամբ: Այս առիթով հոկտեմբերի 21-ին ՅՊՏՀ-ում էր Ավիաուսումնական կենտրոնի տնօրեն Գեղամ Խաչատրյանը: Հյուրին ընդունեցին Վարդ Ղուկասյանը և Վադիմ Գրիգորյանը, ներկայացրին ծրագրի մանրամասները: Գեղամ Խաչատրյանը խոսեց ծրագրի նկատմամբ իրենց հետաքրքրության մասին, նախանշվեցին համագործակցության ուղիները: «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ին ծրագրի ասոցացված գործընկեր դարձնելու առնչությամբ ծրագրի համակարգող Սանիոյի համալսարանը (Իտալիա) դրականորեն է արձագանքել: ՅՊՏՀ-ն ծրագրի շրջանակում մշակում է մարքեթինգի առարկայական ծրագիր, որը նախատեսվում է ներդնել ծրագրի շահառու, հայաստանյան գործընկեր ՅՊՀ-ում:

Վարչական աշխատակիցների վերապատրաստման ծրագրի շրջանակում հոկտեմբերի 8-ին միջազգային կապերի բաժնում հյուրընկալվել է Բիդգոշի տնտեսագիտական համալսարանի (Լեհաստան) օտար լեզուների ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Իրենա Կուլչինսկը, ներկայացրել իր համալսարանի փորձը, համագործակցության հնարավորությունները: Միջազգային կապերի բաժնի առաջատար մասնագետ Սոնա Աղաբաբյանի ուղեկցությամբ պրոֆեսորը շրջել է համալսարանում, ծանոթացել ընթացիկ ծրագրերին, քննարկվել են համագործակցության հեռանկարներ:

Հոկտեմբերի 7-11-ը Պուլայի Յուրայ Դոբրիլայի համալսարանում (Խորվաթիա) տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ Արսեն Պետրոսյանը մագիստրոսական ու բակալավրական միջազգային խմբերում դասախոսել է «Դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմի առանձնահատկությունը» թեմայով, հանդիպել է տնտեսագիտության ֆակուլտետի փոխդեկան Դին Սինկովիչի հետ, քննարկել համատեղ հոդվածներ տպագրելու հարցը: Գործընկեր համալսարանի գիտական ամսագրում նա տպագրության է ներկայացրել ՀՀ տնտեսության կառուցվածքային արդիականացման վերաբերյալ հոդված:

Հուլիսին մեր համալսարան է այցելել «Հետազոտությունների կառավարման և բաց գիտության կարողությունների հզորացումը Մոլդովայի և Հայաստանի բուհերում (Միներվա) – 2019-2022» ծրագրի համակարգող Օլեսյա Սիրբուն:

ԵՊԲՀ-ում հոկտեմբերին տեղի է ունեցել ծրագրի աշխատանքային հանդիպում-քննարկում, որին ՅՊՏՀ-ից մասնակցել են գիտության գծով պրոռեկտոր Թաթուլ Մկրտչյանը, որակի ապահովման բաժնի պետ Ներսես Գևորգյանը, ասպիրանտուրայի բաժնի պետ Եվգենյա Բազինյանը, էլեկտրոնային սարքավորումների սպասարկման և ծրագրային ապահովման բաժնի աշխատակից Դավիթ Խուրշուդյանը: Հստակեցվել են անելիքները: Սեպտեմբերի վերջին ծրագրի մասնակից ԵՊՀ-ն, EIFL միջազգային կազմակերպության հետ համատեղ, կազմակերպել էր երկօրյա գիտաժողով, որը նվիրված էր Հայաստանում բաց գիտության (Open Science) քաղաքականության մշակմանը:



# ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ՈՐԸ ՍՈՍԿ ՏԱՐԻ ՉԵՐ ԻՄ ԿՅՎՆՔՈՒՄ... Exchange is not a year in your life, It's a LIFE in a year

**Մ**արտ ամիսն էր, 19 տարեկան մի ուսանող՝ 23 կիլոգրամը գերազանցող չափից դուրս մեծ ճամպրուկով, ձմեռային հաստ սվիտերով, երեխայի հրճված աչքերով, հասել էր իր երազանքներից մեկին՝ Էրազմուսյան կյանքին: Թերևս, ինձ տարիներ են պետք՝ պատմելու համար այն ամիսների բոլոր զգացումներն ու ճանապարհները, որոնք հաղթահարելով ու սպասելով՝ հասել եմ այդ կետին:

Բայց սկսենք սկզբից...

Ձեռքերս դողում էին. գրչի ամեն մի հարված երբևէ այսքան չէր արժևորվել, որքան «Էրազմուսի» համար անցկացվող քննության օրը. իմ աչքերը մանկական պարզությամբ նայում էին հարցաթերթիկներին ու փորձում ոչ թե կանխորոշել հետագան, այլ իրագործել այն...

Նոյեմբերի 23-ին ես հասկացա, որ տեղից ամենաբարձր ցատկի ռեկորդակիր կարող եմ համարվել... Ստացել էի ընտրության մրցույթում հաղթելու մասին երկար սպասված ու ավետաբեր հրավեր-նամակը. "I have the pleasure to inform you, that you have passed the selection process and we will be glad to welcome you in Zwickau for the next semester." Ու այդ օրվանից կյանքումս աստիճանական փոփոխությունների արագությունը սկսեց այլևս ինձ չենթարկվել:

Բարի գալուստ գերմանական կրթական համակարգ, բարի գալուստ «Էրազմուս+»-ի ընտանիք, բարի գալուստ Յոնոտերազմուս...

19 ժամ տևած թռիչքուղին, 1 դժվար գիշերը Մյունխենում և ավտոբուսով 5 ժամ տևած երթը ինձ հասցրին Ցվիկաու՝ ամենահանգիստ ու պարզ քաղաքը՝ իմ գերակտիվ ու բարդագույն ցանկությունների համար:

Մրցունակ և մոտիվացնող դասախոսներ, քաղաքի ծայրամասում՝ անտառների մեջ կառուցված համալսարան, ժամանակակից մեթոդներ և ճկուն գրաֆիկ, ապրումնակցում համալսարանականի և համալսարանի միջև... Այսպիսին էր բաց ձեռքերով իր դռները իմ առջև բացողը:

Ըստ իս՝ անցյալի ու ապագայի մեջտեղում դու պետք է կառուցես քո ամուր կամուրջը, որի համար առաջին հերթին անհրաժեշտ է ունենալ անկախություն, իսկ անկախությանը հասցնող ճանապարհը կրթությանն ապավինելն է: Էրազմուսյան կյանքի օրերը ինքնին ամուր ու մշակութաստեղծ քարեր են, քանզի դու դառնում ես միջազգային ուսանողության մասնիկը, սկսում ես ինքնուրույն ապրել, սովորում ես նոր լեզուներ, ուսում ես ստանում ամբողջությամբ նոր կրթական համակարգում:

Առաջին շաբաթը դասախոսներիցս երկուսը հրավիրել էին ընթրիքի (գերմանական այդ փոքր քաղաքում հյուրընկալման «հարգի» վայրերը հունական



ու չեխական ռեստորաններն էին, ինչն ինձ համար մինչ օրս էլ անհասկանալի է): Ամբողջ կյանքս գարեջուր խմած չլինելով՝ իմ առջև դրված էր մի մեծ գավաթ և ինձ էին սևեռված խնելու պարտադրանք արտահայտող հայացքներ: Մեկումեջ կում-կում անելով՝ աչքերս փորձում էի չկտրել այդ 2 անհասկանալի կերպարներից, որոնք ինձ տեղափոխել էին ռեմարկյան իրականություն. 2 պրոֆեսոր, մեկը՝ փոքր-ինչ ծեր, իր և էստոնացի տիկնոջ կյանքից պատմություններ պատմելուց չհոգնող, մյուսը՝ աշխույժ աչքերով ու ամեն օր համալսարան տանող թեք ճանապարհը հեծանիվով հաղթահարող երիտասարդ: Բանավիճում էին, կատակում, զրուցում, խորհուրդներ տալիս ամենազարմանալի իմաստությամբ ու ներքին ինքնաբավությամբ, որին գումարվում էր դրսի քամոտ եղանակը ու քեզ ընդամենը թույլատրում ակնթարթորեն գիտակցել՝ երանելի եմ՝ նման մարդկանց կողքին գտնվելու համար:

Սկսվեց ամենադժվար կիսամյակը. նոր կրթություն, նոր համակարգ, աշխարհընկալման նոր մակարդակ ու ամենակարևորը՝ ամիսների աշխատանք վերոհիշյալ դասախոսների հետ: Աղոտ պատկերացումներ ունենալով ինձ սպասվող ճանապարհի մասին՝ ես սկզբնական շրջանում չէի էլ ընկալում պահի և ուսումնառության լրջությունը... մինչև ամբողջությամբ սուզվեցի այդ հորձանուտը: Առաջին բառը, որը միտքս եկավ, չափից դուրս բարդ թեմաները տեսնելուց և այդ ամենի մեջ մխրճվելուց հետո, երևի թե «Ինչպե՞ս եմ կարողանալու»-ն էր, բայց ամիսների չարչարանքից հետո այդ ընկճված բացականչությունը փոխարինվեց «Ձա՛ն, ես արեցի սա» արտահայտությամբ (այն նույն մանկական պարզությունը փոխարինվել էր ջահելական ինքնա-



Մայրաքաղաքս զմայլուն էր իր արփիական գեղեցկությամբ: Աշնան արևը գրկել էր Երևանը և փաղաքշուն էր նրան... Այդ անգամ էլ Երևանյան նեղլիկ մայթերով քայլելիս վերահաստատեցի այն միտքը, որ մեր մայրաքաղաքը ջերմ ու բարի քաղաք է, սիրո քաղաք է, երիտասարդության քաղաք է... Բայց ինչ-որ մի տեղ հիացական մտքերս ընդհատվեցին. կարծես, սիրո քաղաքը սիրո պակաս ունի, չէ՞:

Այո՛, Երևանյան աշնան ոսկենկարը խաթարվեց. անփութությունը, երևանաբնակի ձեռքով իսկ «կերտած» անխնամ տեսարանները... Պլաստմասսայե բաժակներով բեռնված աղբամանները եթե լեզու ունենային, օգնություն կհայցեին: Միտքս հատվեց մայրաքաղաքի տոնին՝ 2801-ամյա տարեդարձին Երևանին շռայլված երգերին, շնորհավորանքներին ու սիրո խոստովանություններին. եթե այդքան սիրում ենք մեր քաղաքը, ապա ինչո՞ւ է այսպես...

Նորից մտորումներս բախվում են բնությանը պատուհասած «պլաստիկին»... դժկամորեն խոստովանում եմ՝ պլաստմասսայե բաժակներով սուրճ կամ հյութ խմելը նորաձևության թրեճ է դարձել, այնպիսի թրեճ, որ աղջիկների լուսանկարային շարքերում անգամ այն ցանկալի աքսեսուար է, որը առավել համալսարան շտապողների ձեռքին է հայտնվում, դե, բնականաբար, հետո նետվում է աղբաման ու... մեկ, երկու, երեք... «պլաստիկ» կույտ է գոյանում ու ստացվում է այն, ինչի ականատեսն ենք դառնում: Եվ սա պլաստմասսայե բաժակները նախընտրողների՝ երիտասարդի, ուսանողի ձեռքով, իմ ու քո ձեռքով... Թերևս, եթե յուրաքանչյուրս սկսենք մեզնից, եթե դիմակայենք «թրեճի գայթակղությանն» ու այլընտրանք որոնենք, օրինակ, ձեռքի տակ մշտապես ունենանք ոչ պակաս նորաձև

մետաղական բաժակներ, կկրճատենք աղբակուտի առաջացման հավանականությունը: Եթե ջանք դնենք քաղաքը մաքուր պահելու գործում, ապա երբեք չենք հիասթափեցնի ինքներս մեզ՝ մեր քաղաքով անկեղծորեն հիանալու հարցում: Մտահոգությունս ոչ այնքան «պլաստիկը» մերժելուն է վերաբերում, որքան մեզնից սկսելու ցանկություն կոփելուն: Ամեն ինչում...

Վերջերս ոգևորությամբ էի կարդում տեղեկություն այն մասին, որ մի շարք խանութներ պոլիէթիլենային տոպրակները փոխարինում են թղթե տոպրակներով... Հապա ի՞նչն է խանգարում և մեզ՝ «պլաստիկը» փոխարինելուն:

Երևանյան մտորումներս ամփոփում եմ. քաղաք սիրելը դաստիարակություն է, որ ինքներս ենք մեզ տալիս, աշխատանք է, որ պետք է կատարենք ամեն օր և այն գիտակցմամբ, որ սիրում ենք ոչ տեսականորեն, այլ գործնականում:

Անվերապահորեն վստահում եմ իմ այն համոզմանը, որ մեր շրջակա միջավայրը պահպանելու գաղափարն իրագործելը երջանկաբեր է: Իրավամբ, եթե մենք մեզ քաղաքացիական հանրության մասնիկ, հայրենասեր ու հայրենատեր ենք համարում, ապա պետք է հայրենիքը, քաղաքը, բնությունը սիրող-պահպանողի մտածողության կրողը լինենք:

Սկսենք մեզնից, սկսենք այսօր...

Մեզնից սկսելու երևույթը արմատավորելու գաղափարը ցրեց մռայլ մտքերս, փոքրիկ, բայց կարևոր խնդրի լուծումը գտած երեխայի պես պայծառացա. արևի բարեհաճությամբ Երևանում կրկին աշունը ոսկե հեքիաթ էր պատմում...

Ես քայլում էի սիրո քաղաքում՝ իմ ու քո սիրով հիացնող քաղաքում:

ՆԱՆԵ ԱՎԱՆԵՍՅԱՆ

# Սիրո փաղափը սիրո պակաս ունի. Երեւանյան յոթուամեր



